



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԼԱԶԱՆ

ՀԱՅ ՔԱՇԻՍՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆ
ԱՆԴԱՍԱՆՈՒՄ

891.99.09

Ա - 28

-6 NOV 2011

Հարմ.
9-111072

891.99.09 ԱԼԱԶԱՆ

ՀԱՅ ՓԱՇԻՍՏՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆ ԱՆԴԱՍԱՆՈՒՄ

ՀԱԴՎԱԾՆԵՐ

ԽԲ. № 33482

Ինվենտ. №

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1932

62-871

- 1102.V.2013 -

5 + 0.11 = 2

Հայպելիքը ամեն
Գլուխ 7566 (բ)
Պատվեր 22:5
Հըստ. 2287
Տիբաժ 3000



3950-87

Խորհրդային Հայաստանի քանվորությունից
և աշխատավորությունից այսոր պահանջվում է
ավելի աշալրջություն, ավելի զգաստություն և
հեղափոխական յեռանդ: Յուրաքանչյուր գիտա-
կից բանվոր և աշխատավոր, Խորհրդային իշխա-
նության հետ անկեղծորեն կապված ու սոցիալիզ-
մի կառուցման գործին նվիրված յուրաքանչյուր
մասնագետ և ինսեկտիգենու պետք է ավելի գործոն
ու շեշտակի դարձնի պայքարը դաշնակցության
մտայնության յուրաքանչյուր արտահայտության
դեմ:

Ա. ԽԱՆՉՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ
ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԶԵՆՔ

Ա.

Բագվի նավթարեր հողերը, վրաստանի մարզանեցը,
Մուղանի և Աբարատյան գաջոտերի բամբակի բարերերուն
թյունը, Հայաստանի և Վրաստանի հանքային հարստությունները (Ալլահվերդի, Ղափան, Զիաթուրի) հանդիսատ չեն տալիս անդուն-Փրանսիական իմպերիալիզմին: Առանձնապես անդիսական նավթի արքա Հենրի Դեղերդինդը շատ և սիրում դրազվել «Անդրկովկասյան հարցերով», Անդրկովկասյան Հանդիսական նավականական իմպերիալիզմին: Առանձնապես անդիսական նավթավայրական իմպերիալիզմին: Առանձին գաղտնիք չկա այսուեզ. միատեր Դեղերդինդը «Հեռատես» գտնվելով, արտասահման ճողովրած Անդրկովկասի նավթարդյունաբերողներից գնել և Բագվի (ինչպես նաև Գրունտու) նավթի ակցիաները և այժմ ուզում են վորքան հնարավոր և շուտ տեր կանդնել «իր» հարստություններին:

Բացի այդ, անդուն-Փրանսիական իմպերիալիզմն իր նվաճողական ճիրաններում ունենալով Անդրկովկասը, ավելի կհեշտացնի Խորհրդային Միության տապալման դործը, վորին նա տեհնադադին կերպով ձգում է Հոկտեմբերյան Հեղափոխության առաջին իսկ որից:

Իր նվաճողական նպատակների իրագործման համար այդ իմպերիալիզմն ոգտագործում է ամեն միջոց, շարժման մեջ դնում ամեն տեսակի սկ ուժերն՝ սկսած Հայկական ֆաշիստներից՝ մինչև քրդական շեյխերն ու բեգերը: Առանձ-

հապես դաշնակցությունը, վորը «մոտ 40 տարի անդավանան լակելուք յամբ սպասարկել է իմպերիալիստական ամեն տեսակի ու գույնի «պատվերներին» Մերձավոր Արեվելքում» (Ա. ԽԱՆՁՅԱՆ) ավելի քան տեսնդադին պատրաստությունների մեջ եւ Նա նույնպես իր հերթին միջոցների մեջ վոչ մի խորություն չի դնում կատարելու անդլո-ֆրանսիական իմպերիալիզմի սոցիալական պատվերը, դրանով կատարած լինելով հայ բուրժուազիայի դասակարգային պարտքը։ Յեզ «չնայած իր բոլոր փարիսեցիական հալաստիացումնելին և դեկլարացիաներին, Հոկտեմբերյան Հեղափոխության հարաբեկից հետո մինչև այսոր, Դաշնակցությունը և վոչ մի բազե չի իշել հականեղափոխական ինտերվենցիայի դիրքերց» (ԽԱՆՁՅԱՆ)։ Իսկ ներկայումս նա այդ դիրքերում առվելի քան ակտիվ պատրաստությունների մեջ եւ, ինտերվենցիա կազմակերպելու գործի համար։ Սկսած Սիրիայի հայ գորդականներից ու չափահաս վորքերից Փրանսիական բանակի համար թնդանոթի եժան միս պատրաստելուց մինչև հայոքրդական չեթայական խմբեր կազմելու ու ղեկավարելը, սկսած անդլական և Փրանսիական դիմավոր շտաբների լըրտեսական բաժներից մինչև Խորհրդային Հայաստանի ներսում կուլակային-բանուիտական շարժումների կազմակերպումն ու ղեկավարումը, դաշնակցությունը, վրաց մենչեւիկների և մուսավաթականների հետ միասին, վորի ի բոլին ջանում և Խորհրդային Անդրկովկասը Միությունից անջատելու արյունությունին։

Դաշնակցությունն իր դասակարգային նպատակների իրագործման համար քիչ չափով չե, վոր ողտագործում և գրականության ավելի «անվնաս» ու «խաղաղ» բնագավառը։ Այդ բնագավառում տեսնդագին կերպով քրտնում են դրական Փաշիզմի ավագ ու կրտսեր բոլոր ներկայացուցիչները և խմբագետներից սկսած մինչև անտերիտիտ մինիստրներն ու վարչապետները։

Արտասահմանի գրական բոլոր հնարավորությունների ոգտագործումից զատ (վորոնց մասին մենք կանդադասունանք քիչ հետո) նրանք՝ հենարաններ են գտնում, նաև Խոր-

հըրդային Հայաստանի ներսում և այդ հենարանների միջությով բացահայտ, թե զայտնի, պայքար են ծավալում սոցիալիզմի կառուցման, մեր բայլը և իկան նվաճումների դեմ, պրոլետարական գրականության դեմ։

Խորհրդային Հայաստանի գյուղում, թե քաղաքում կուլտակն ու դաշնակը, նաև ոգտագործում են «զրական-գեղարվեստական» ամեն հնարավորություն իրենց զասակարգային պայքարի համար։ Գյուղում, մերթ ընդ մերթ հանդիւ յեկող, «հայ աղղի», նրա «անցյալ փառքի», «Անի քաղաքի» և այլ նյութերի չուրծն իբրև բոլոր ճոնչացնող «աշուղները» վոչ այլ վոք են, յեթե վոչ դաշնակցության և կուլտակի «զեղարվեստական» աղիտալուպները։ Իսկ վերջին յերեսութիւն մենք համար ենք հանդիպում մեր գյուղերում։ Կուլտակների «կարգացած» վորդիների, դաշնումոլների և սրանց աղղեցության տակ գտնվող յերիտասարդների կողմից զբարգող և զաղտնի կերպով տարածվող հակահեղափոխական «բանաստեղծություններն» ու յերդերը զաշնակցության նույն պայքարի բաղկացուցիչ մասն են կազմում։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե, վոր կուսակցության և կոմսոմոլի մեր զյուղական կազմակերպությունները, պրոլետարական-կուլտուրային գրողները լինեն «ավելի զգաստ, ավելի աչալուրշ» (Ա. ԽԱՆՁՅԱՆ) գասակարգային թշնամու պայքարի այս խորամանկ ու սքողված ձեռքերի համուել։

Վորպես զրական միավոր, մեզանում, մի քանի տարի շարունակ զաշնակցության, հայկական նացիոնալիզմի հենարանն ու աղենատուրան և հանդիսացել, իրեն այսպես անվանող «հայ Գրական Բնկերությունը»։ Հայաստանի սլրութարական Գրողների Ասսոցիացիան ամենայն վճռականությամբ և հետեւզականությամբ անողոք պայքար ծավալեց այդ ընկերության դեմ, մերկացը և «Ծոյալության» վետուրեների տակ թաղնված նրա բուրժուական, աղղայնական գեմքը՝ հենց ընկերության հիմնադրման իսկ որից։ Ճիշտ ե, վորոշ ընկերությունից ուղարառունիտական, հովանավորող «խիզն» անհանդասանում եր մեր «հանդուղն» ու «ամբարտավան» այդ պայքարից, սակայն փաստերը բաղմից անդամ յեկան

ապացուցելու, վոր այդ պայքարում մենք ամբողջությամբ ճշմարիտ եյինք:

Սակայն ավելորդ չեր լինի դարձյալ մի քանի խոսք ասել այդ Ընկերության «գրական» գործունեյության մասին:

Ընկերությունը շարունակ և սիստեմատիկ կերպով զարգացրել է մեր գրականութան բուրժուական աղդայնական տեսնդենցները: Նա փորձել է աճեցնել կոնդրատեվականությունը գրականության անդաստանում, առաջ քաշել կուլակային տնտեսությունների զարգացման պլանը, սվաղել գառակարգային՝ պայքարը դյուրում, այն վորակելով «անաշխատահար հայրերի» և «աշխատասեր հայրերի» առանին վեճ, տարբերություն չդնելով նախախորհրդադային և հետխորհրդային դյուրով միշել և այն (քաղաքացի Աշոտ Աթանայանի դեկուցումը «Հայ գյուղն անցյալում և ներկայում» թեմայով), նա փորձել է հակախորհրդադային, զզվելի ծաղրի յենթարկել ուսւա պրոլետարական գրականությունը, վորպես հետհոկտեմբերյան ուսւական գրականության գագաթ առաջ քաշելով Սերգեյ Յեսենինին, նա բուրժուական ծաղրի յենթարկել պուտ բայլեկի Դեմյան Բեղնու ստեղծագործությունները (քաղաքացի Ս. Այվազյանի գեկուցումը «Հետհոկտեմբերյան ուսւա գրականությունը» թեմայով), նրա անողության գաշտի սահմաններից «Վրիպում» ելին բոլոր խորհրդային գրողները և առաջին գրական գեկուցումը նվիրվում եր դաշնակցական գրող Համաստեղի ստեղծագործություններին: Նա քննում եր այնպիսի «Գրական» նյութեր ինչպիսին եւ . . . «Քրիստոնեյության մուտքը Հայաստան», նրա համար վոչ թե գոյություն ուներ Խորհրդային Հայաստան այլ . . . «Մայր Հայաստան» (Ընկերության քարտուղար, հանգուցյալ Հովհաննես Մալաստյանի յելույթը ՀՊՀ Ասսոցիացիայի յերկրորդ համագործակցությունը), նրա համար վորպես «ստեղծագործական մեթոդ» գոյություն ուներ միայն . . . «Վերին ներշնչումը», «ինչ վոր վերից ներշնչեն, այնպես եւ կդրեմ» (նույն Մալաստյանի յելույթը). Նա Դաշնակցության կողմանը (արտահայտվեն նրանք և . . . Հայաստանում, թե Փաշիստական որդանների հետ միասին, պահանջում եր «գերարվեստական խոսքի», «ստեղծագործական մտքի» (sic!), դարվեստական խոսքի»,

մամուլի աղատություն, այլապես սպառնում եր, վոր հայ զրականությունը կկրծմանվի, ինչքան ել «ողորկետարական ջութակները նվազեն» (Ընկերության լիդերներից մեկի կեղծստորագրությամբ անտիպ հողվածը), նա ցանկանում եր առանձիւ տիրահաջուկ Դավիթ Անանունի զավինիները, վերահրատարակության ձեռնարկելով նրա հիմնադրամ «Գործ» ժուրնալը: Ահա այդ Ընկերության վողջ եյությունը՝ մի քանի սեղմ գծերով: Միայն կուրացած ոպորտունիստը կարող եր այս Ընկերության մեջ տեսնել խորհրդային գրական կաղմակերպության դեմքը, և միանդամայն իրավացի յեր Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեղերացիան, յերբ իր հիմնադրման առաջին իսկ որից մերժեց Ընկերությունն ընդունել Փեղերացիայի շարքերը:

Բոլորովին պատահականություն չի, վոր դաշնակցական դեղին թերթուկները կուրծք են ծեծում և կոկորդիկոսյան արտասուք թափում Հայ Գրական Ընկերության համար, վորպես նրա որհասական գրությունը և կատաղորեն հարձակվում մեզ վրա, վոր «Վանդալարար» ավերում ենք «Հայ գրականության այլ կաճառը»:

Վերջերս Ընկերության ձայնը չի լսվում: Ավերվեց արդյոք հայ գրականության այդ «կաճառը» մեր հարգածներից: Սպառվեց արդյոք Աթանասյանների, Այվազյանների և Բուհի կազմակերպչական «տաղանդը»: Մեր հարվածներն ուղղված տիբահճոչակ այդ Ընկերությանը ծանր եյին ուժահացու, ճիշտ և —բայց այդ գեռ չի նշանակում, վոր ընկերության վերջին շրջանի քայլքայմամբ և պասսիվացմամբ պետք ե հանգստանալ և յեղակացնել, վոր վոչնչացավ գաշնակցության և կուլակության գրական աղենտուրան մեղանում: Այդ աղենտուրան կա և կլինի մեր յերկրում, ինչքան վոր գեռ վերջնականապես արմատահան չի արվել կապիտալիզմը, նա գեռ պայքարելու յե մեր գեմ կազմակերպչական միավորով, թե ցըիվ կերպով, այդ միենույնն ե: Դրա համար ել պայքարը դաշնակցության ու կուլակի գաղափարախոսության դեմ (արտահայտվեն նրանք և . . . Հայաստանում, թե

արտասահմանում) պետք է շարունակվի ավելի չեշտակի կերպով:

Սակայն արտասահմանում դաշնակցական գրականությունն ավելի հանդուզն և մերկապարանոց կերպով և զնում իր կուսակցության քաղաքական դասակարգային նպատակները:

Անցնենք այդ հարցին:

Բ.

Մեղանում դաշնակցական գրականության, հայ Փաշիսանքի գրական հարձակումների գեմ քիչ և դրվել: Մեր քըննադատությանը չի դրազեցրել այդ «անկարևոր» բնադրավարությունը և կոր «ոփակ» են արել դրազվել այդ խնդրով, գործանալի կերպով աչքաթող են արել դաշնակցական գրականության մարտականի, ինտերվենցիոնիանական դեմքը, վորք չափազանց բնորոշ է դաշնակցական գեղարվեստական գրականության և ֆինանսարարության մեջ և վորի վրա առաջին հերթին պետք է ուղղվելին մեր հարվածները:

Դաշնակցության գրականության մասին (վորպես ամերիկական թուղթություն) այս տարի մեր մամուլում յերևացել են յերկու հոգիածները, մեկը՝ «Նոր Ուղի» ամսագրի առաջին գլուխում, Ա. Կ. ստորագրությամբ և մյուսը՝ Թիֆլիսի «Պրոլետար» թերթում, ընկ. Սուրբաժի ստորագրությամբ: Սակայն պետք է աբձանագրել մե մեկը և թե մյուսը՝ «կարիք չեն համարել» դրազվել դաշնակցական գրականության համար բնորոշ այդ խնդրով (ինտերվենցիայի պատրաստման խնդրով):

Ընկ. Ա. Կ. Ե՞ւ ի՞ւ հողվածում այդ հարցի կողքովն ե անցել, իսկ ընկ. Սուրբաժի սպորտանիզմին ու «բարեհագությունն» այնուղ և հասել, վոր անտեսելով դաշնակցական գրականության հայութակային, ինտերվենցիոնիանական դաշտուն դեմքը, նա ընթերցողներին ցանկախում է համոզել վոր «Լուսն ու հուսահատության պոկիան մեծ տեք ե բոնում (իսկ թե մնացած «փոքր տեղը» ինչն ե բռնում, գարգել:

Ժնակատուը նեղություն չի կրել հայոնել ընթերցողնեն. Ա.) դաշնակցության գրականության մեջ: Շն. Ա Աննան ԲԱՅՆ-ԲՈՒԹՅԱՄՔ (դարձյալ բացառության մասին չի տառած. Ա.) վուսանավորներն արտահայտում են անդրոշություն, տիրություն, վոր, ծայրակեն հուսահատություն»: Յեկարպեսզի համոզի ընթերցողին՝ դաշնակցական գրականության այս «անվնաս» հատկությունների մասին, ընկ. Սուրբաթը ջանում և համապատասխան մեջբերումներով ցույց տալ դաշնակցական գրականության «լայտ-մոուփը»՝ «անորոշությունը», «վոլորը», «ծայրահեղ հուսահատությունը»: (ինչ խոսք, վոր անկումայնությունը, բուրժուական ճահճի նեխվածությունը, հուսալքումը, հանդիսանում են դաշնակցական արդի գրականության բաղկացուցիչ մասերը: Սական այդ չենակ, այդ չե հիմնականը):

Հարցը այսպես դնել, չտեսնել դաշնակցության գրական մոլի պայքարը Խորհրդային Հայաստանի և Միության գեմ, չտեսնել ինտերվենցիայի պատրաստման գեղարվեստական չիմնավորումը, հանգստանալ և յեզրակացնել, վոր գաշնակցական գրականությունը միայն անկման և մահվան գրականություն և, նշանակում և զուրկ լինել քաղաքական հուսառությունից, նշանակում և ամբողջությամբ թաղվել ողորունիքի մեջ, նշանակում և բթացնել մեր պայքարի զենքերը դաշնակցության գրականության դեմ: Սակայն սա պատահականություն չի, ընկ. Սուրբաժն իր հողվածի քաղաքական ներածական մասում, դաշնակցության ինտերվենցիոնիստական տենդաղին պատրաստությունները չի տեսնում, չետին պլանի վրա յե քաշում: Նա դաշնակցության գրականության ներկա կուրսում, առաջնությունը տալով լիրիզմին, այն հակառակում և դաշնակցության հաղափական ծրագրային հոդվածներին: Նա, վորքան ել զարմանալի լինի այդ թեկուզ պլուների համար, գանում ե, վոր դաշնակցության գործունեյության իրական պատկերը տալիս են վոչ թե նրա «բաղաբական հոխորակից ծրագրային հոդվածներն ու նաև թիմը» (ինտերվենցիայի, Ա. Հայաստանուժ ներքին խռովություններ կաղմակերպելու և այլ հարցերի չուրը), այլ երա

բեք իրեն այսպիսի ամբողջությամբ և պարզությամբ չեր գրսկորել, վորքան ընկ. Սուրխաթի՝ «Դաշնակցական Փաշիստների հույսերն ու հուսալքումները» հոդվածում։ Փոխանակ մերկացնելու դաշնակցության գրականության հակամարհ հրդային, ինտերվենցիոնիստական վողջ դեմքը, փոխանակ մեր ընթերցողների, դրական յերիտասարդ կադրերի ուշադրությունը սրելու այդ ուղղությամբ, ընկ. Սուրխաթին այս «հանգստացուցիչ» քարոզներից հետո, չտեսնված նախվությամբ ու քաղաքականակես տհաս մեկի միամտությամբ, վեճի և բռնվում դաշնակցական գրող Նշան Պետք-թաշյանի հետ, պարզելու վերջինիս նկարագրած հերոսութաշլյանի հետ, մարդկու վերջինիս նկարագրած հերոսութաշլյանի հետ։ Մարիամ Մազգաղենացու բարոյական վարքագիծը իր հանգստացնող տննը փոխելով և հուզվելով՝ ընկեր Սուրխաթը ծիծաղելի մանկամտությամբ բացականչում եւ—

«Ո՞վ ե Նշան Պեշիկթաշլանի այս աղնվական գեղեց-
կուհին, աղբյուր «սիրո թագալորության», վորը «յե-
րանություն պիտի բերի թշվառներուն»։ Ո՞ւմ ե ուզում
մոլորեցնել հեղինակը։ (Այս հարցում Սուրբիաթը չի ու-
զում մոլորպել, նրա զգոնությունը բարձրացել է։ Շնոր-
հավորելի յեւ Ա.։) Այդ կինը (Մարիամ Մադդաղենա-
ցին. Ա.։) պարզապես պոռնիկ ե յեղել, բայց «Հարուսա-
պոռնիկ, իշխանաղուններին միայն հանձնվող» (Բոավո՛,
մնում ե շնորհավորել ընկ. Սուրբիաթին «Նոր կտակա-
րանում» այսպիսի «հանդուգն» դյուտ մուծելու առ-
թիվ։ Ա.։) :

Յեկ այսպես, ընկ. Սուրբսաթին իր ընդարձակ հողվածը՝
անկման լրիկայի ծաղկաքաղով, Մարիամ Մագդաղենացու
բարոյական վարքադի շուրջը՝ դաշնակների հետ վիճելով
ել վերջացնում ե, առանց մի խոսք անզամ առելու դաշնակ-
ցուրյան գեղարվեստական գրականության ինտերվինցիոնիս-
տական դերի մասին :

ԱՀա այդ խնդըռվ է, վոր ցանկանում ենք ներկա հող-
վածում զբաղվել, վոչ թե նրա համար, վոր փաստերով ա-
պացուցենք ընկ. Սուրխաթի գրական ոպորառունիղմի այս

արտադրած լիրիկական քանաստեղծությունները, վորոնից
արտահայտում են «ծայրահեղ հուսահատություն» և հոսե-
տեսություն: «Պատճառը՝ բացատրվում է նրանով, — ճպնում
և ապացուցել ընկ. Սուրխաթը, . . վոր փքուն ու հոփորտա-
լից հոդվածն իր վողջ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄՈՎ ԿԵՂԾ Ե, ԻՍ-
ԿԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆԸ ԶՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ. (Լոեցե՛ք, Լու-
յե՛ք, ինտերվենցիայի պատրաստությունները, Խորհրդային
իշխանության տապալման՝ դաշնակցության ծրագրային
հոդվածները կեղծ են, իսկական դրությանը չհամապա-
տասխանող. Ա.) : Մինչդեռ քննարկամ գործերը, — շարունա-
կում ե ընկ. Սուրխաթը, — անդրադանում են թե՛ ՌԵԱ,
ԻՐԵՐԸ և թե մերձավոր խավերի մերձավոր վիճակը»: Բայ-
սուրխաթի, դաշնակցության քաղաքական հոդվածներին
չպիտի հավատալ, նրա ծրագրային աշխատանքները սոցիա-
լիզմի կառուցման դեմ, նրա ամենորյա պայքարը (վորն իր
արտահայտությունն ե գտնում այդ հոդվածներում) մեր
դեմ, ներքին ապստամբության և արտաքին միջամտության
մասին նրա ռազմաշունչ խմբագրականները բոլո՞րը, բոլո՞րը
«ԿԵՂԾ ԵՆ, ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆԸ ԶՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ»:
«Իրերի» և գաշնակցության գործունեյության ռեալ դրսեո-
րումը տալիս են քնարական գործերը և այդ գործերն ել վո-
րովհետեւ ըստ Սուրխաթի՝ «ԾԱԾ ԱՆՆՇԱՆ ԲԱՑԱՌՈՒ-
ԹՅԱՄԲ» «անորոշություն», «նվարություն», «ծայրահեղ
հուսահատություն» են արտահայտում, ուստի նշանակում ե,
վոր դաշնակցությունը անկման և հովահատության մեջ,
ըրջապատված լիրիզմի մաքրաթիւ հրեշտակներով՝ միջում և
իր «հոդին» և չի հարկավոր մահվան սնարում անհանդատաց-
նել նրան, ինչպես այդ հարցում ընկ. Սուրխաթին լրացնում
և թիֆլիսի «Պրոլետար» ժուրնալի № 1-ի հոդվածագիր
Ս-ՆՆ... դաշնակցությունը «նեխած դիակ» հայտարարելով:

իր դասակարգային խղեաների ավելի լավ մունետիկ դաշնակցությունը յերբեք չեր կարող ունենալ։ Բնկ։ Սուր-խաթճն այս հարցում անզուգական է։ Յել նացիոնալ-ոպլո-տունիզմը գրականության դասակարգային պայքարում յեր-

նոր դրսնորումը, այլ վորպեսզի մեր գրական կազմակերպությունների, մեր ընթերցող մասսաների ուշադրությունը սրբնք այդ կարևոր հարցի ուղղությամբ, մի բան, վոր մենք մինչեւ այժմ չառ քիչ ենք արել:

Գ.

Կան «միամիտներ» և ոպորտունիստներ, վորոնք բարեսիրած ծիծաղով ու հեղնությամբ են պատասխանում, յերբ մենք հարց ենք դնում այն մասին, վոր գասակարգային պայքարը գրականության մեջ, ներկայումս, ավելի քան յերբեք սրգած ե, վոր դաշնակցությունը ներկայումս իր պայքարի կարևոր մարդերից մեկը դարձրել ե «հայ գրականության» դաշտը:

Ինչքան ել Սուրբաթյանները հանգչեն ոսկորտունիզմի փափուկ բարձերին, ինչքան ել նրանք դաշնակցական գրականության մեջ տեսնեն միայն անկումայնությունն ու թախիծը, ինչքան ել նրանք այդ գրականությունը ցանկանան կտրել դաշնակցության ինտերվենցիոնիստական, հակախորհրդադային կովի պրակտիկայից, այնուամենայնիվ նրանք այդ խնդրում հաջողել չեն կարող, վորովհետեւ դաշնակցությունն ինքը, որը ցերեկով, իր պաշտոնական որգանների բերանով հայտարարում ե իր գրական «Հավատամքը»: Կարիք չկա չառ հեռուները դնալու՝ այդ ապացուցելու համար: Դաշնակցության Ամերիկայի որդան «Հայրենիք»-ի հոդվածագրերից մեկը, ավելի քան վորոշ ու հստակ կերպով ձևակերպում է դաշնակցության գրական «Հավատառ հանդանակը» և մարտական կոչ ե անում բոլոր «զրագիտներուն», «քերթողներուն» ու «խմբագիրներուն»՝ իրենց ուսերի վրա տանելու դաշնակինտերվենցիոնիստների արյունոտ դրոշը: Հակառակ պարոնայք Զորանյանների արվեստն ապաքաղաքական, ապագասակարգային լինելու մասին արած մանկամիտ պնդումների՝ դաշնակցությունը իր Ամերիկայի որդան «Հայրենիք»-ում հայտարարում ե, վոր «Հայ գրականության գործը ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ու նվիրում ե ԴԵՐԱԶԱՆՑԱՊԵՍ»: Յեկ ապա ավելի

բորբոքելու համար բուրժուական աղքայնատկան գրուների հայրենասիրությունը, իր ֆաշիստական գրական բանակին նոր զինվորներ գրելու նպատակով, իր գրական մարտունակությունն ավելի բարձրացնելու համար, նա կոչ ե ուղղում գրադեստներուն, քերթողներուն ու խմբագիրներուն Աքել գաշնակցության արյունոտ քաղաքականությունը, չըստարդվել «Հայության աղքային նպատակներու պայքարեն»: Խըմ-լապես Սեպուհների, «փրկիչ» Վրացյանների հետ միասին սպաքարել միջազգային իմպերիալիզմի արյունոտ դրոշի տակ, ընդում սոցիալիզմի հայրենիքի:

Այդիսկ նպատակով «Հայրենիք»-ի հոդվածագրերը, քըլ-տիւք մտած՝ հայ գրողների ուշադրությունը հրավիրում ե դեպի «Հայ դատը», վորեկոչում զինվորադրվել այդ «դատի», մարտիրոսագրվել այդ «դատի» համար: Սակայն վո՞րն ե այդ «դատը»: Դրան հստակ կերպով պատասխանում ե «Հայրենիքի» նույն հոդվածը...»

«Դատ ըսելով մենք կը մրնենք իայ ժողովրդի այն գոյակինակը, վորով ՅԵՐԵՎԱՆՆ ՈՒ ԴԱՂԱԽԹՆԵՐԸ Փիգայակինակը, զՈՒՄԿԻՆ ՈՒ ՎԵՐՍԿԵՆԴԱՆՆԱՆ ՏԱՂԿԱՊԻՆ, ԶՈՒՎԿԻՆ ՈՒ ՎԵՐՍԿԵՆԴԱՆՆԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՐԵԳԱԿԻՆ ՇԱՆՈՐԴԻՎ»:

Այդ «դատը ինչպես տեսնում ե ընթերցողը, վոչ այլ ինչ ե, քան յեթե «ՅԵՐԵՎԱՆՆ ու գաղութներն անկախության արեգակով շաղկապելը», այսինքն՝ թե արտաքին զինված միջամտության և թե ներքին ավանդությաների, կուլակային բանդիտական ապատամբությունների կազմակերպման միջոցով՝ խանգարել սոցիալիզմի կառուցումը մեր յերերում, իրենց կարծիքով՝ տապակել խորհուրդների իշխանությունը և «անկախության արեգակի տակ» ծածանել կուրծանման, մահի, ավերի, արյան ու ստրկության յեռագույնը:

Սակայն «անկախության» բլրճուկ արեգակի մեռելային ցոլքերը վայելեց Հայաստանի աշխատավորությունը 1918—20 թվերին: Այդ արեգակի շողերի տակ նա մեռեներ թաղեց առաստությամբ: Նրա չողերը խավարում ելին գյու-

Ղերի ու քաղաքների հրկվոման բոցերից ու ծխից : Հայաստանի աշխատավորությունը ծանոթ է «անկախության» այդ արեգակի արնե լույսերին և մահասարսուռ «կենսականությանը» : Նրանք, վորոնք կփնդեն այդ աշխատավորությանը վերստին հրամցնել այդ «արեգակի» փայլը, վորպես հատուցում՝ կստանան մահվան ու ջախջախման վերջնական հարվածը :

«Գրագետներու», «Քերթողներու» և «խմբագիրներու»
ուշադրությունը դաշնակցության որակարգի այս այլու
հարցի վրա հրավիրելով, «Հայ դատի» զրական-գեղարվես-
տական հիմնավորումն ու պաշտպանումը հրապարակ նե-
տելով, Փաշիստ զրչակը միաժամանակ, «Քրաղետներուն»
և «Քերթողներուն» փորձում և «զրականապես» շահագրգռել
այդ «դատի» համար մզլող պայքարին մասնակցելու: Սր-
ճանադրելով, վոր թե արտասահմանում և թե մասնավանդ
Խորհրդային Հայաստանում «Հայ զրականությունն այլա-
սերվում ե»՝ դաշնակ զրչակը մղնում և ապացուցել, թե
«Անկախ Հայաստանն ե միայն», վոր պետք ե դաշնակցա-
կան, Փաշիստական վոսկեջրով նոր փայլ տա «հյուծվող,
պլայացող և այլասերվող հայ գրականության».

Հարցի այսպիսի պարզ և մեկն դրումից հետո, միայն քաղաքական կույրերը կարող են չտեսնել հակախորհրդային այն տեսնդում պայքարը, վոր ծավալում են դաշնակները գրականության մէջ։ Զետ դաշնակցության գրականության ծրագրային աշխատանքների և պայքարի ավելի պարզ և բացահայտ դրվածք՝ քան այդ մենք տեսնում ենք «Հայրենիքի» այդ հոգվածում։ Հայ Փաշխտների որդանն այդ հոգվածով գրականության առաջին պլանի վրա յե քաշում «Հայ ժողովրդի» (այսինքն դաշնակցության. Ա.) քաղաքական պայքարից հարցը, վորն ըստ դաշնակցության, պես ու լինի ամեն մի «Հայ գրագետի»ու «Քերթողի» «Հանապազուրյա հացը»։

«Հայրենիքը» բացելի բաց հայտարարում եղած

«Ով վոր հայ զբականության սերն ու գուրզուանքը

ութի, — Աև Պիտի Զինվորակրպի Մեր ԺՈՂՈՎՐԴԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԾԵՎ ԱՆ-
ԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԱԶԵՆ ԿՐՊԻՒՆ»:

Այլ կերպ սպասել չեր կարելի, դաշնակցությունը սոցիալիզմի մեր յերկրի դեմ մղած իր կատաղի պայքարում, յերկրի ներսում գտնվող և արդեն արմատահան արված իր հենարանը պահպանելու, իր որհասական դրությունը քաջ տալու համար, գրականության մեջ, վորպես դասակարգային պայքարի զենքի առաջին հերթին ցանկանում է տեսնել նվիրումը իր բաղադրական պայքարին, «Ազատության» և անկախության իրաշագին կովկին։ Յեզ նա աշխատում է գրականության մեջ բոլոր հնարավորությունները, պատեհ և անպատեհ բոլոր առիթներն ուղարկործել այդ նպատակի։ Համար։ Անսպաս քրտինք ու թանաք և հոսում ինտերվենցիայի արյունոտ գործը «գեղարվեստորեն», գրականության միջոցով՝ հիմնավորելու, ընթերցող մասնաների ուղարկությունն այդ ուղղությամբ գարձնելու, նրանց՝ այդ կովկին զինվորագրելու համար։ Նաև «գեղարվեստական» իլյուզիաներով որորելու իրենց վիլուզվող հույսերը։

۹۰

Մեր ընթերցողներին արդեն հայտնի յեն այն փաստե՞րը, վոր դաշնակցական գրողներն ու քննադատները նախ և առաջ ակտիվ կերպով մասնակցում, կազմակերպչորեն դեկավարում և պայմաններ են ստեղծում Խորհրդային Անդըք-կոմիտասի հարավային սահմանների մոտ, անդով-Քրանսիական իմպերիալիզմի զեկավարությամբ, ինտերվենցիա պատրաստելու գործին։ Գրչեց զատ և գրականությունից առաջ՝ նրանք կենտանի գործի յեն անցել։ Տիբրահոչչակ հայդուկ վողբասաց Ահարոն բնեկի (Ավ. Ահարոնյան), դաշնակցության մունետիկ պարոն Լեվոն Շահնթի, քննադատ, եքս-մինիստր Նիկոլ Աղբալյանի գեղերումները Սիրիայում, այդ նպատակն ելին հետապնդում*): Տարորինակն այն է,

*) Տես «Զարյա» վաստակաշահ-ի 1931 թ. ապրիլ 29-ի համարում
պաված Գերյուսթի «Ել-Ահաբա» կերպել հավածը:



վոր հայտնի քրդակեր, քրդերի մասին նզովքի արտասվալի հեղեղ թափող, հայրուկ Ահարոնյանը դարձել է... «Քրդական աղատագրական շարժման» ղեկավարներից մեկը:

Սակայն Ահարոն բեկը, Սիրիայում կատարած իր ինտերվենցիոնիստական կազմակերպչական աշխատանքների համար չեմ միայն, վոր արժանանում եւ դաշնակցության առատ դափնիների և ներբողների հեղեղին: Հայ Փաշխաների կուսակցությունը ստաժավոր վողքասաց տիրացուի մեջ զնահատում և նաև իր անզուգական գրողին:

Ինչպես հայտնի յեւ, դաշնակցությունը, անցյալ տարի, չտեսնված աղմուկով ու շաղակրատանքով, տոնեց պարոն Ահարոնյանի գրական գործունեյության քառասնամյա արյունոտ հորելյանը: Այդ հորելյանը սակայն, ինչպես սպառելի յեր, վերածվեց դաշնակցության աշխուժության և ինտերվենցիոնիստական գործունեյության մի ցույցի: Տըլրահռչակ հովհանքի, «ապլանվեր» դաշնակցական փառքի շուրջը՝ դափնիներ տեղացին եքս-մինիստրներից՝ մինչև խմբապետները, խմբագիրներից՝ մինչև նորելուկ հայրուկ «քերթողները»: Ահարոն բեկի «գրական» գործունեյության մասին սրտաբուղիս ու հուզումնակոծ արտահայտվեցին եքս-վարչապետ պարոն Շամո Ռհանջանյանից՝ մինչև Մամբրե ծայրագույն վարդապետը, խմբապետ Սեպուհից՝ մինչև «բանաստեղծ» Զեքինյանը: Արժե սակայն մի փոքր կանոն առնել այդ հորելյանի վրա:

Ինչպես արձանագրեցինք, հորելյանը կազմակերպված եր նոր առիթ ստեղծելու արտասահմանի հայության մեջ՝ վերհիշելով դաշնակցության ահարոնյանական, «հերոսական», հայրուկային անցյալը և «գրական» տոնակատարության վարդույրի տակ հրապարակ քաշելու դաշնակցության նոր դավերը, — Խորհրդային Հայաստանի ղեմ ինտերվենցիա կազմակերպելու դորձը և արամագրություններ հրահրել այդ գործի համար:

Հորելյանական հանդեսների բոլոր հոետորները, դաշնակ շաղակրատ խմբագիրներն ու հողվածաղիրները՝ հըրձվանքի չտեսնված վայնասունով դրվատում ելին ստաժավոր

հայրուկի «աղդային» մեծ ծառայությունները: Միաժամանակ աղի արտասունք եյին թափում այն մասին, վոր «աղդային մտածողին» հորելյանը տոնվում է հայրենիքից գուրս, Արարատից հեռու: Սակայն միաժամանակ, նրանք յեռանդագին կերպով կոչ եյին ուղղում «բովանդակ հայությանը», վերջինիս պայքարի հանելու համար, վորպեսզի Ահարոնյանի «քերպուն գործունեյության 50-ամյա հոբելյանը տոնի», Մայր Յերկի, աղատագրված հայրենիքի մեջ»: («Հուսաբեր»):

«Հուսաբերի», «Հայրենիքի» և «Հառաջի» եջերից հորդող հորելյանական շաղակրատանքը անցնում եր բոլոր սահմանները: Այդ շաղակրատանքը չեր սահմանափակվում միայն վողքասաց հորելյարի և դաշնակցության քառասնամյա արյունոտ գործունեյության դրվատանքի ձոներով, նա վերածվում էր Փաշխաների արյունոտ գործունեյության և պայքարի կոչի: Նա յերբեմն ծիծաղելի նախվության եր համառում, մերթ վերածվում մահամերձի անհույս զառացանքի և մերթ դառնում կյանքի ու մահու սահմանագծում մաքսողի հուսակտուր, բայց բարձրագոչ հառաչի:

Այսպես, Ա. Արշակունի ստորագրությամբ մի Փաշխատ, «Հուսաբերի» եջերից՝ «Հուսակրված» «Հայ ժողովրդին» և դիմում, խրախուսում, վոր նա չթաղվի հուսահատության մեջ, այլ սպասի հաղթության: Պարոն Արշակունին գտնում ե, վոր «Հայ ժողովրդը» (այսինքն դաշնակցությունը) պիտի հաղթի, վորովհետեւ...Ա. Ահարոնյանն այդպես և ցանկանում, այդ ե նրա պատգամը:

Քաջ Նազարից խլող այս դափնիներն անշուշտ սիրով են յուրացվում պարոն Ահարոնյանի կողմից, վորը...յեթե ցանկանա «կաղատագրի» «Հայ ժողովրդը»...և ուրիշ վոչինչ: Վորքան դավեշտական, նույնքան հետաքրքրական ու կարեօր ե այս յերեռութը: Դաշնակցությունը՝ պ. Ահարոնյանի անվան, նրա հորելյանի հետ ե կապում իր արկածախնդրական գործունեյությունը...«աղատագրելու հայ ժողովրդը»:

«Հայ ժողովրդի ազատագրումը», այսինքն՝ դարձյալ
դաշնակցության արյունութ լծի տիրապետումը, մի լծի,
վորի սանձերը գտնվում են անդլո-Փրանսիական իմպերիա-
լիզմի ձեռքում, այդ և Ահարոնյանի, դաշնակցության
լիզմի ձեռքում, այդ և Ահարոնյանի, դաշնակցության
պատգամը, այդ և Ահարոնյանի տակ եր տոնվում զառամած
պատգամը, այդ և Ահարոնյանի տակ եր տոնվում զառամած
հայութի հոբելյանը։ Սակայն այդ մասին ավելի պարզ
հայութի հոբելյանը։ Սակայն այդ մասին ավելի պարզ
հայութի հոբելյանը։ Ահարոնյանը մի հոգվածում՝ Աեպուհն իր և «քըն-
կերպով և արտահայտվում խմբապետ Աեպուհն իր և «քըն-
կերպով և արտահայտվում խմբապետ Ահարոնյանի
ստեղծագործություններին։

Նախ և առաջ խմբապետը նզովք և ցասում և կարդում
այն մարդկանց գլուխին, վորոնք «համարձակվում են» արհա-
մարհանքի խոսքեր տակ ստաժավոր վողբասացի հասցեյին,
վորոնք հանդգնում են «Քար նետել այդ մողակետի դեմ»։

Ապա նա մեկ առ մեկ թվում և Ահարոնյանի գրական
ծառայությունները՝ դաշնակցության արյունութ գործին։
Նա մասուցերիստական մեծ վողերությամբ՝ իլյուստրա-
ցիայի յե յենթարկում հոբելյարի գրական գործունեյու-
թյունը, մեծ ախորժակով և արձանագրում, վոր Ահարոն-
թյունը, մեծ ախորժակով և արձանագրում, վոր Ահարոն-
թյունը՝ «պատրաստած սերունդը խոնարհեցն և ապրեցո» չեր
յերգում, խունկ չեր ծխում։ «Չունեն» բառի փոխարեն
յերգում, խունկ չեր ծխում։ «Չունեն» բառի փոխարեն
յերգում, խունկ ու մոմի փոխարեն հրացանի վա-
գինեն եր տոած և խունկի ու մոմի փոխարեն հրացանի վա-
գուղի եր ծխում։ Նա (Ահարոնյանը) իր խոսքը ասաց—
շարունակում և խմբապետն իր «Քննադատական» հոդվա-
շարունակում և պատրաստեց լմբուտացող սերունդը և այդ սերունդի
աշխատության պառակը մենք կայելեցինք մի քանի տարի։
Այսուհետեւ Ահարոնյանի, դաշնակցության «աշխատության
պառակը» Հայաստանի «անկախությունը», ջարդը, քաղ-
ցը, մահը, կործանումն ու ավերը, մեր աշխատավորները
վայելեցին մի քանի տարի և այդ եր պատճառը, վոր նրանք
Ահարոնյանի «պատրաստած սերունդին»—որապակաս մինիստր
ներին ու արյունաբու Աեպուհներին տվին իրենց արժանի
վարձարությունը, նոյեմբերյան հեղափոխության յերկա-
թե ավելով մաքրելով նրանց՝ «Արարատի հովանու» ներքե-
մից ։ Այդ դասերը Ահարոնյաններն ու Աեպուհները հիշում
վեց։ Այդ դասերը Ահարոնյաններն ու Աեպուհները հիշում

դենք առնել և վողբասաց տիրացուի բուրվառից հրացանի
վառող ծխել, յեթե նրանք փորձեն վերադառնալ Ահարոն-
թյանի «աշխատության պառուղը»—«Հայաստանի անկախու-
թյունը» վայելելու, ապա նրանք այնպիսի պատասխան
կտանան Խորհրդային Հայաստանի աշխատավորությու-
նից, վոր «զունին» ել մոռանան, զենքն ել։

Սակայն նրանք այդ փորձերն անում են, նրանք կատա-
ղությամբ ձգտում են վերադառնալ «աշխատանքի» իրենց
«պառուղների վայելմանը» նոր «փետրվարի 18» կազմակեր-
պելով, ինտերվենցիայի միջոցով։ Խմբապետ Սեպուհն այդ
չի թագցնում, իր «քննադատական» հոգվածում նա կոչ է
անում «Արարատի ստորոտի» հայության (անշուշտ քուրո-
բեկերի հետ միասին) գուրս գալ ինտերվենցիայի «վաղվան
խոյանքներուն» մասնակցելու։ Յեվ այս բոլորն անել ի պա-
տիվ։ Ահարոնյանի, վորպես նրա «ըմբռուտական հոգու»
խոսքերով դաստիարակված «աղատատենչ» մեծատառ «Հա-
յեր»։

Յեվ յեթե «Հուսարերն» իր խմբագրականը վերնադրում
է «Դեպի փետրվարի 18», յեթե նա յեռանդադին կոչ է ա-
նում Խորհրդային Հայաստանում ներքին ավանդուրա, կու-
լակային ապստամբություն կազմակերպելու, ապա խմբա-
պետ Սեպուհն ել «քննադատական», տօնական իր այս հոգ-
վածում, կրկնում ե «Հուսարերի» նույն մտքերը և այս ամե-
նը կապում «մեծանուն» հոբելյարի անվան հետ։

Անդու-Փրանսիական իմպերիալիզմի և Հայ Փաշիստնե-
րի զինված միջամտությունն ներքին կուլակային ապստամ-
բության կազմակերպում, այդ միջոցով Խորհրդային իշ-
խանության տապալումը Հայաստանում, այս հարցերի
չուրջը հասարակական միտքը նախադատրաստել, —ահա
պարունական հոբելյանի իսկական իմաստն ու նպա-
տակը։

Այս հարցում սակայն խմբագետներից և դաշնակցա-
կան գործիչներից բոլորովին հետ չեն մնում Հայ կղերները,
լուսավորչական Եջմիածնի և կաթոլիկ Հոռվիմի վեղարավոր
լուսավորչական Եջմիածնի և կաթոլիկ Հոռվիմի վեղարավոր

առաքքրում ե «Հայի ազատությունը», «ազատ և անկախ հայրենիքի» հարցը:

Նրանց նույնակես առաջին հերթին հետաքրքրում ե «Հայ ժողովրդի» կեղեքման նպաստավոր պայմաններ ստեղծելու հարցը:

Մամբրե ծայրագույն վարդապետը, բացելով Սիարոնյանի հորելյանական հանկեսը Գահիքեյում, հորելյարին հայտարարում ե «մոխիրներու տակ ծածկված ցեղի յերդվալ քրմապետը»:

Ապա անցնելով, հոգեորական իր կոչմանը՝ «սուրբ» որհնանքին, Փաշխատ վեղարավորը հստակորեն ձեսկերպում ե Հայ յեկեղեցու և դաշնակցության հակախորհրդացին, ինտերվենցիոնիստական կոնտակտ գործունեյությունը: Հորելյարին դիմելով, «Բանաստեղծական» վոգեորությամբ, նա հայտարարում ե —

«Թող դպրաք մնա ճեռքի հրաշագործ, պայծառ քող մնա ՀԱՆՁԱՐԻ (sic !!!) ստեղծագործ...»: Սակայն ինչի՞ համար այս բոլորը: Ի՞նչ նպատակների կենսագործման համար ե, վոր «կուսակրոն» Փաշխատը զեղում է իր որհնանքի դաշնակցական «զոհարները», վո՞րն ե նրա փորացավը: Նույն ցագը, վորով տապակվում ե դաշնակցությունը: «Դալար պիտի մնա Ահարոնյանի ձեռքը», «Մայծառ պիտի մնա», ամոթ ե կրկնել նրա... «Հանձարը» — «ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՅԲԻ ՅԵՐԳԵԼՈՒ, ՀԱՅ ՀՈՒՅՍԸ ԲՈՐՅՈՒՔԵԼՈՒ, ՀԱՅ ՀԱՎԱՏՔԻ ՀՐԱՀԵԼՈՒ ՅԵՎ, ՀԱՅ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏ, ԱՆԱՍՆ ՀԱՅ ՀԱՅԹԵԿԻՒՆ» ՄԵԶ ՅԵՐԳԵԼՈՒ ՅԵՎ ԱՊՐԵԼՈՒ»:

Այս Հայ յեկեղեցու «աստվածահաճո», «քրիստոնակալ» պատղամը: Նրա նոր աղոթքը:

Ի՞նչով ե պակս Հայ յեկեղեցու ներկայացուցչի այս քսումնելի ճառը խմբապետ Սեպուհի, դաշնակ Փաշխատների բոլոր ծրագրային դրություններից: Ինչո՞վ ե զիջում նա «Հուսաբերի» ու «Հայրենիքի» ինտերվենցիոնիստական խմբագրականներին: Ինչո՞վ ե պակսս ոժանդակում Հայ յեկեղեղին ինտերվենցիայի կազմակերպման գործին:

Ահարոնյանի գովերգության և դրանով՝ դաշնակցու-

թյան «Հավատո հանգանակին» բերած իր ծառայությամբ հետ չի մնում նաև գաշնակցական քնարերգությունը: «Հուսաբերի» կողմից բանաստեղծության դաշնակցական Պառնասը հանված վո՞ն Գ. Զեքիճյան իր «սրտահույզ» լիրիկայով ցանկանում ե լրացնել խմբապետ Սեպուհի, Մամբրե ծայրագույն վարդապետի, եքս-վարչապետ պարոն Ուհանջանյանի և այլ հայուսների ներբողն ու ձո՞նը, վորը տեղում ե հորելյարի գլամին՝ առատության յեղջուրից: Արագակաս պուեաը «Հուսաբերի» եջերից զառամյալ հորելյար հայզուկին ե դիմում —

«Դու ջահակիր ուխտավոր, խորհուրդ խորին լուսածին, նաղկումն ագատ տեսչերուն, հարազատ ձայնը ցեղիս, ՅԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՍԵՐՈՒԽՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ԱՇԽԱՌՀԻՆ,

Հարգանիք քեզի և Ուխտիդ, վոր յեղալ ուխտն ամենուս»:

Դարձյալ դաշնակցության մարտական ծրագրերը, դարձյալ «Արարատյան աշխարհի հարուրյան հույսերը», դարձյալ արյան հուս ու վասողի բույր: Առանց դրան դաշնակցական քնարը չի հնչում:

Յեթե Զեքիճյանի համար Ահարոնյանը «Ճահակիր ուխտավոր» ե, ապա դաշնակցական մի այլ պոետի համար, պարբերաբար «Հայրենիք» ամսագրում «թավ ջութակի վրա» ցնորող Ուխտավորի համար, արյան ու կոտորածի ստաժավոր քնարերգակը հանդես ե գալիս հատուցման և «վրեժի վանդիո» հնչեցնող: Այդ ե արձանագրում բանաստեղծը «Հայրենիք» ամսագրի 1931 թ., № 3-ում, Ա. Ահարոնյանի նվիրած իր՝ «Փառք վանդիուիդ» վաստակվորում: Վոտանապիրի ճակատը նախ զարդարված ե նվիրման տիտղոսադրերով կապահանքարունյանի շատ հատկանշական մի բանաստեղծության եպիգրաֆավ, ուր պոետական իր «Հայնձարբ» ցուցադրության վառամյալ վողբասացը՝ զառացնաբիւ եպատագով, միջիամբ ամբողջ աղաղակում ե:

«ՎՐԵԺՄԻՒՅՆ, ԼՈՒՎՐԵԺ ԵՄ ՊԱՇԱՆՁՈՒՄ» ...

Ահարոնյանը «վրեժ միայն, լոկ վրեժ և պահանջում», իսկ դաշնակցության արյունոտ գործին ուխտած «Հայրենիք»-ի Աւխտավորը շարունակում է հայրուկային իր միքիկան, նույն պոռոտությամբ, վորով սիրում են դաշնակքերթողներն «ուժեղացնել» իրենց պոեզիան։ Վրեժապահանջ Ահարոնյանին դիմելով Ուխտավորը բացականչում է։

«Ահա կերպես և յերբ հնչեն լարերդ զռո, հրեղեն կը կայծկլտան փոքորկաշունից գիշերներն Արարատին։

Ապա ըստ Ուխտավորի՝ Ահարոնյանի «փառքի փանդիռ» նվազների չնորհիվ, դաշնակցական շղթայակապ «Արտավազը» հառնում և Արարատից և «Զինք կանող ժանտ շղթաներն ապերասան ցասումով մը կը ցնցե……։ Ահարոնյանի յերգերով՝ դաշնակցական Արտավազդին հարություն տալուց հետո, Փաշիստ քնարերգակը ցնորում ե, վոր նույն Ահարոնյանի յերգերում, այդ յերգերի ազդեցությամբ «հայրենիքի մանուկները գանգուրագեղ, Տիգրան Մեծի անվերջալույս արքայության ի խնդիր» մկան են պրկում, կուլի յեն պատրաստվում՝ «քաղցրահամ Հայտատանի» համար։ Այդ կուլիվ դաշնակցության կոխին և անդրս-Փրանսիական իմպերիալիզմի զեկավարությամբ, այդ կուլիվ պատրաստվում ե սոցիալիզմի հայրենիքի դեմ, այդ կուլի համար և, վոր դաշնակցական Արտավազդները կտրում են իրենց շղթաները պարոնայք Ահարոնյանի, Ուխտավորների հայրուկային յերգերում։ Այդ և պատճառը, վոր նրանց այդ տիպի յերգերն արժանանում են դաշնակցական խմբագիրների առանձին ուշադրության։

Ահարոնյանին շոյլվող «հանճար», «քուխ Արտօմազդ» և այլ պոռոտագոչ տիտղոսները, վոչ այլ ինչ են քան «արժանի վարձատրություն» նրա արյունոտ գործունեյությանը, նրա գրական դաշնակցության վայլուն գործունեյության։ Յեկ Աւխտավորը իր կուսակցության սոցիալական պատվերով շարունակում է դաշնակցական նույն շաղակրատանը, նույն ծամֆամած ժեծարանը, «վրեժի յերգչին»։

«Փառք փանդիրի դաշնալարված մրբիկով, Բլլա արեվ հանճարիդ (դարձյալ Հանճար. Ա.) ով առքյալ անդավանան...»։

Սակայն սրանով չի վերջանում Ահարոն բեկի արյունոտ հորելյանի չուրջն ոկսված աղմուկը։ Մի քանի ամիս շարունակ դաշնակցական մասուլը հրճվանքի չտեսնված վայնասուն և իրալանցում և բարձրացնում այդ հորելյանի չուրջը։ «Հուսարելը», «Հայրենիքն» ու «Հառաջը» խմբագրականների ու հոռվածների տարափ են թափում հորելյանի ու հորելյարի չուրջը։ «Հուսարելն» իր բազմաթիվ խմբագրականներում հորելյարին մերթ համարում և «Համայն հայրականներում հորելյարին մերթ համարում և «Համայն հայրականներում յերգիչը», «Հայ դատի թարգմանը», «Հայության բաժան-բաժան ու հոչոտված մասերու միացնողը», մերթ դաշնակցության կենտրոնական կոմիտեյի անունից՝ «Յեկվապտուսին կը գրիկ» վողբասաց տիրացուին «Քրիստափորին (Միքայելյան. Ա.) քեվերով և Անոր շրբունիներով ալ կը համբուրե», տիրացուի «փայլուն, արի և անրիծ ճակատը», և այլն։

Մերթ ել Ահարոնյան գրական միջակությանը հայտարարում՝ «ԹՌՈՒԽԱ ԱՐԱՄԱՉԴԻ», այս բառերով ել պատկերով իր խմբագրականի վերնագիրը։

Սակայն դաշնակների համար ի՞նչ դժվար է... Արամազդներ ստեղծել ու Շեքսպիրներ ծնել։ Յեթե նրանք ամոթ չունեցան կոստան Զարյանի գրական վողորմելի անունը զնել Շեքսպիրի կողքին^{*)}, ումից պիտի ամաչեն, ի՞նչ և արգելում նրանց Ահարոնյանին ել Արամազդ հայտարարել։

Յեկ «Թուխ Արամազդը» (sic !!) հողված հորելյանական շոյուղ շաղակրատանգներից, ասում ե իր չնորհական գույուղը, գոհունակություն և հայտնում Հայ Փաշիսներից՝ իրեն մատուցված դափնիների փոխարեն։ Աշշիաներից՝ վոր «փառքի» իր պատվանդանից թափկող հորելյանատում վոր «փառքի» իր պատվանդանից թափկող հորելյա-

^{*)} Այս հարցում դաշնակներից հետ չի մնում պարոն Արշակ Զռաբանյանը, նա ցանկանում է պահականեղ քաղաքական ստանակ կոստան Զարյանին «անմահության» դափնիներ ձևնելու խնդրում գերազանցել դաշնակներին։

Նական եքստագի հեղեղը վոչնչով չդիջի Փաշստ «Հայր սուրբերի» և խմբապետների ազգանվեր ճառերին ու հոդվածներին։ Աշխատում ե իր «փառքի» դափնիները հավասարապես բաժանել դաշնակցության հետ։ Աշխատում ե իր հոքելյարի «Հեղինակավոր» խոսքը դարձնել դաշնակցության ծրագրային մի յելույթը։ Յեվ նա հայտարարում է . . .

«Յես չեմ վոր զրել եմ, այլ իմ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎՈՐԻՆ և (այսինքն դաշնակցությունը. Ա.) բոնել իմ զրիչը բառասուն տարուց ի վեր»։

Ապա անցնելով հայ Փաշխտների քաղաքական հեռանկարներին, ի վոգեռություն հայ «սրբազն հայրերի», արդյունաբերողների, սեղանավորների, մաքսանենգների, զոհաբավածառների ու գորդավաճառների, ալելի բորբոքելով իր հոքելյանական «զգացմունքային» աշխարհը, հիվանդագին եքստագով բացականչում է . . .

«Արմենիա, Արմենիա . . . ով իմ հոգու հավիտենական ապաստարան ով իմ պաշտելի հայրենիք . . .»։

Սակայն պարոն Ահարոնյանը սրանով չի վերջացնում դաշնակցության արյունոտ գործունեյության իր ջատագովներն ու ագիտ-պրոպի պարտականությունը։ Յերբ հոքելյանի որերին «ամբողջ հայության» ուշադրությունն իր վրա յեր բեեռված, երբ հայ «տղերքը», աղաներն ու հաֆենդիները պատրաստ ենին իր ամեն մի պահանջը կատարելու, նա խորամանկորեն, արտահայտելով դաշնակցության նպատակների ու ձեռումների կատարման ծրագիրը, «բանաստեղծական» չափով ու վոգեռությամբ գրում ե իր «կտակը», վորտեղ վողբում և, վոր իրեն։

«Մնում ե միայն կարստն հայրենի
թե Արարատի ծոցում չը հանգչեմ
Յեվ Արաքը չորորե քունս հավերժական»։

Ուրեմն հարկավոր է, հագեցնել զառամյալ ծերուկի «կարոտն հայրենի», հավերժացնել նրա հոքելյանը։ Հարկավոր է միջոցներ ձեռք առնել, վորակեսքի նա իր շունչը փշի

Արարատի ստորոտում և Արաքսն որսրե նրա հավիտենական քունը։ Հարկավոր է արյումք նվաճել Արարատի հովանին ու Արաքսի ափերը, Արարատյան գաշտը։ Ուրեմն ի՞նչ է հարկավոր, յեթե վոչ ինտերվենցիա և ներքին խռովություններ՝ կատարելու համար «հայուն սիրեցյալ» հեղինակի վերջին փափակը, —դաշնակցության գործն ու ծրագիրը։

Միայն զրանով չի սպասվում Ահարոն բեկի բանաստեղծական «հանճարը», դաշնակցության գործունեյության քննարական հիմնավորումը, այդ քննարական հույզերով լնթերցող մասսաներին դաշնակցության արյունոտ գործին զինվորագրելը՝ Ահարոնյանի գրական ամենորյա գործն է։ 1930 թ. մայիսի 28-ին, Հայաստանի «անկախության» տարերածի առթիվ, «Հուսաբերում», պարոն Ահարոնյանի դաշնակցական հույզերը պոռթիկում են . . . բանաստեղծությամբ և նա չափածո տողերով «հայ կործանված հայրենիքի» ծանր վիճակն ե վողբում ու գծում նրա փրկության դաշնակցական ինտերվենցիոնիստական ուղին, կոչ անում զինվորագրվել այդ ուղիով բնթացող հայ Փաշխտների բանակին։

Մի այլ բանաստեղծության մեջ (հատված «Էտրոտ հայրենի» գրքեց), Ահարոնյանը դարձյալ վողբակոծ ու լաւագուած գրում ե «հայրենիքի անցյալ փառքի» մասին։

Սակայն ինչի՞ համար է անցյալի վերհիշման այս վողբում, գրանով ի՞նչ նպատակի յե ձգտում հեղինակը, այդ շատ պարզ է, — վորպեսդի պատմելով «հայու հայրենիքի» անցյալի փառքի մասին։ զաշնակցական տղերանց ավելի վողեկոչի և մզի գեպի «Ալեկոծվոզ Արարատյան դաշտը», վորտեղ ըստ հեղինակի «մահացու խոցված Անի քաղաքի», «Աստծու կայան Վաղարշապատի», «տրտում Արմավիրի» և «ըմբոստ Արտաշատի» շուրջը . . .

«Բնած հակաները դողում են ցասումով . . .
ՎՈՂՋ ԱՐԱՐԱՑՅԱՆ ԴԱՇՏՆ Ե ԱԼԵԿՈԾՎՈՒՄ
ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԾԻ ՀԵՆ ՎԵՐՔԻ Ե ՅԵՌՈՒՄ»։

Ավելի ցայտուն գրական իլյուստրացիա արտաքին թէ
ներքին զինված միջամտությամբ Խորհրդային հշմանու-
թյունը տապահելու դաշնակցական գործունեյության, ա-
վելի փայլուն նմուշ սոցիալիզմի կառաւցման դեմ ուղղված
«Լիբեկայի», Հաղիկ թէ լինի: (Յել մի՞ թէ սա անկման և
թախիծի յերգ ե, ընկ. Սուրխաթ):

Սակայն հայդուկ աշուղի ինտերվենցիոնիստական գեղարվեստական ծառայությունները՝ դաշնակցության և միջազգային խմբերիալիզմին, սրանով չեն վերջանում, այդ առումով չափազանց հետաքրքրական են նաև «Հայրենիք» ամսագրի այս տարվա 8-րդ համարում տպագրված՝ Ահարոնյանի «Ծիծեռնակի բույնը» պատմվածքը:

Միամիտ ընթերցողին, առաջին հայացքից թվում ե, վոր սա «շատ անմեղ», «ապաքաղաքական» պատմվածք ե, թուչունների կյանքից վերցրած։ Սակայն խորածաններինակը, ալեգորիկ կերպով, կարողացել ե այս պատմվածքում տալ ինտերլինցիայի պատրաստման գեղարվեստական ու «հոգեբանական» հիմնավորումն ու պատճառաբանությունը։

Պատուվածքի սյուժեն այս է : Ծիծեռնակները մարտ
ամսին կարկատում ու վերանորոգում են իրենց բույնը, վոր-
պեսզի մեջը ազատ սեր և ազատ կյանք անեն, սակայն այս
բանը նրանց չի հաջողվում, վորովհետեւ բիրտ ճնճղուկ-
ները խուժում ու գրավում են նրանց բույնը և ծիծեռնակ-
ների «տարիների վաստակն ու հոգու յերազը» ընկնում և
«անիծված ու անվաստակ թշնամու վատերի տակը» : Ծի-
ծեռնակները ցանկանում են հետ խլել իրենց բույնը : Բույնի
շուրջը տեղի յէ ունենում ճակատագրական կոփլ : Մի պահ
թվում ե թի բաղդը ժպտում և ծիծեռնակին : Ճնճղուկը մին-
չև անզամ վախ և զգում նրանից : Բաց ավա՛զ, մարտը
վճռվում և հոգուտ ճնճղուկի, փորը և գառնում և բույնի
տերը : Ներքեց այս կրիվը դիտող ծեր անտառապահը
դարձացել է : Նա «այսքան տարի ապրել եր աշխարհում և
յերբեք այսպիսի արմանք-զարմանք բան տեսած չեր : «Վո-
զորմելի հնեղուկը գա ու ծիծեռնակի բույնը բոնօքրավի ,

Աստիք»: Ծերունին իր համակրանքով ամբողջովին ծիծեռնակի կողմն և և նա, ճնճղութին ուղղած հարվածների ժամակի խրախուսը և ծիծեռնակին, բացականչելով—«զարկ, նակ խրախուսը»: Ապա ծիծեռնակի պարտությունից հետո, ճնճղութին դիմելով, նա առում և «Վա՛յ անզգամ, վա՛յ անհոգի, սպասիր դու այս բույնը չես վայելի...»: Սակայն դրությունն այդպես չի մնում: «Դաժանորեն վեհափառ ոլացքով» սուրում և ուրուրն «ինչպես ժոխագույն մըրիկ» և իր «պողպատի կեռ կտուցով պատում ճնճղութի ոիրաւ և «տաք-տաք կուլ տալիս յերանությամբ»: «Վերջացակ!»: Սակայն սրանով դեռ չի վերջանում ալեքորիկ պատմվածքը:

պապին և դիմում թե, —

ՀԱՊԱ. ՈՒՐ ԵՆ ՔՈ ԾԻԾԵԼՆԱԿՆԵՐԸ»:

— Կգան բալիկ, — ասուս ու գրաւ:

— Հետո կգա՞ն:

«Տեղ ծիծենակի բափուր բույնը, վարփս արյահար կորացած աչք, ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻՆ ԴԱՐՁԱԾ՝ նայում եր, նայում, սպասելով մեծ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ՝ ՀԱՅՈՐԴ ԳԱՐԱՆՆԵՐ»:

Մարդաբե չպետք է լինել, հասկանալու շառար ալ-գուրիկ այս պատմվածքի դաշնակցական իմաստն ու ինտեր-
վենցիոնիստական բովանդակությունը։ Քաղաքական քիչ
թե շատ հոտառություն ունեցող մարդը իսկույն կարող է
հասկանալ խորամանկ Հեղինակի «Պաղստիքները»։ Բայ զա-
ռամյաման վողբասաց տիրացուի, ծիծեռնակը՝ դա ինքը դաշ-
նակցությունն է, հայ բուրժուազիան, վորը վերանորո-
գում է իր բույնը—«Միացյալ և անկախ» Հայաստանը։

«Անզգամ» ձնձղուկը, վոր իւլում և բույնը՝ դա բանվոր դասակարգն ե և շայլեհեկների կուսակցությունը, իսկ «պողպատե կտուցով» ուրուրը, ըստ հայուկ հեղինակի՝ վոչ այլ վոք ե, քան անդլո-Փրամնսիական իմակերիալիզմը, վորը...պետք ե պատոփի «ձնձղուկի» սիրտը և հետ վերադարձնի «ծիծեռնակի» բույնը, նրա «տարիների վաստակն ու հոգու յերազը»—Հայաստանի «անկախությունը»:

1929, 1930 և 1931 թ. դարուներին նախատեսվող ինտերվենցիան գլուխ չեկավ: Այդ ե պատճառը, վոր Փաշիստ Ահարոն բեկն, ավարտելով պատմվածքը, առանց հուսահատվելու, «ծիծեռնակի» դաշնակցական բույնի կուրացած աչքով նայում ե իմակերիալիստական հորիզոններին և սպասում «Մեծ Խորհրդին՝ հաջորդ գարնան»:

Իսկ յերե գա ԱՅԴ ԳԱՐՈՒՆՆԸ, Հայաստանի բանվոր դասակարգը, վողջ Միության պրոլետարիատի հետ միասին, «մեծ խորհրդով», կարող կլինի Ահարոնյանի—ԳԱՇ-ՆԱԿՅՈՒԹՅԱՆ կուրացած աչքի հետ միասին՝ փշրել նաև նրա գանգը և այն արյունու ձեռները՝ վորոնի «հեռու հորդութերից» կշերմացնեն այդ գարունը:

ԱՅԴ ԿԼԻՆԻ ԳԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՀՈՒ ԳԱՐՈՒՆԸ:

1931 թ., ոգոստոս:

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ՍՔԵՄԱՎՈՐ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ

Ել ավելի ուժեղացնել մեր սիստեմա-
տիկ պայքարը Դաշնակցության, վորպես
հայկական բուրժուազիայի փաշիստական
կուսակցության դեմ:

ՀԿ (Բ) Կ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԳԵՎԻՑ

Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի դեմ
ուղղված իր ինտերվենցիոնիստական գործունեյության հա-
մար, դեռևս մոլորդված աշխատավորական վորքրաթիվ խա-
վերին իր ազգեցության տակը պահելու, նոր զանգվածներին
այդ ազգեցության սահմանը ձգելու մտքով, դաշնակցու-
թյունը քիչ տեղ չե, վոր հատկացնում և արվեստին և գրա-
կանությանը:

Գեղարվեստական գրականությունը դաշնակցության
կողմից հավասարապես սպասարկության և դրվում իր ար-
յունոտ ծրագրերի իրազործման համար, այնպես, ինչպես
հերյուրակի, վայրահաջող և թունոտ խմբագրականները,
ինչպես Փարիզի և Բոստոնի կաֆե-շանտաններում թխված
«սեփական թղթակցությունների» տարափիր... Հայաստանի
«ավերման և ժողովրդի բնաջնջման» մասին: Յեվ այդ գե-
ղարվեստական գրականությունը նույնքան նողկալի յէ,
նույնքան յեպերելի, նույն գասակարգային ատելությամբ
լցուն գեղագիտական դիկտատուրան, վորքան Փրամ-
սիական, անգլիական, ամերիկյան իմակերիալիզմի վշրանք-
ներով սնվող իրենց թերթուկների խմբագրականները:

Չե՞ վոր գեղարվեստական դրականությունը կարողա-
նում է ավելի շուտ ներգործել անդիտակից մասսաների վրա,
քան իրենց ձանձրալի հողվածներն ու թխածո «թղթակցու-
թյունները»։ Չե՞ վոր գեղարվեստական դրականությունը
կոչված է համակելու մասսաներին, միացնելու իրար՝ մի-
ևնույն գործի շուրջը։ իսկ «Հուսաբեր»-ի խմբագրությունը՝
կապիտալիստական աշխարհի կրիդիսի, գործազրկության,
անոթության ճիրաններում գալարվող հաղարավոր հայ աշ-
խատավորներին կոչ է անում— «Վորովսկի ապրինք, միա-
նանք»։ միանալ է հորդորոնմ նա դաշնակցության գործի,
դաշնակցության դրոշի շուրջ։ Գեղարվեստական դրականու-
թյունը հանդես է դալիս այդ միացմանը, համախմբմանը
նողասող կարելոր աղջակներից մերը։

Դաշնակցության գեղարվեստական դրականության դեմ-
քի, նրա Փաշխտական եյռեթյան մասին՝ մենք առիթ ունեցել
ենք խոսելու, այսոր մենք կանդ ենք առնելու դաշնակցական
դրական հորիզոնում իր փայլով նոր միայն աչքի ընկող մի-
դեմքի մասին, վորի առաջն դրքի հանդես գալը շերժ կեր-
պով վաղունվեց դաշնակցական մամուլի կողմից, արժանա-
նալով հատուկ խմբադրականների։

Գրքի հեղինակն է Մխիթարյան յերիտասարդ սերնդի
ներկայացուցիչներից «Հայր» Վահան Հովհաննիսյանը։
Գիրքը վերնադրված է «Հայրենի կրակարան»։ Ինչպես տես-
նվում է բավական դաշնակցական վերնադիր։

«Հայրենի կրակարան»-ի մասին, հիացմունքի լորձուն-
քը միրուքին, դաշնակցական պաշտոնական որդան «Հու-
սաբերն» իր խմբագրականում այսպես է ալիտում—

«Ահա մի նոր բանաստեղծ»։

Աստղ մը պայծառ ու գրավիչ մեր գրական յերկնա-
կամարին վրա... վոր նոր բոցավառվող կրակարանի
նման կը փռվի հայ հոգիներու և հայրենի հողերուն
վրա...»։

Այժմ տեսնենք թե ի՞նչ հուր է այրվում դաշնակցու-
թյան խնկարկած այս «կրակարանում», վո՞րն է այդ հուրը,

վորտեղ իր դաշնակցական հոգու խունկն է ծխում «Հուսա-
բեր»-ի ուղարկու խմբագրիը։

Նախ և առաջ յերիտասարդ կաթողիկ «Հոր» այս «Կրա-
կարանը» գուրկ է եպիքական կտորներից։ նա ամբողջովին
հաղեցված է քնարերգությամբ, դաշնակցական, Փաշխ-
տական քնարերգությամբ։ Հայ ցեղը, նրա «նվիրական»,
պատմական անցյալը, հայ յեկեղեցին, հայ դյուցակնը,—
ահա գրքի հիմնական առանցքը, չմոռանանք ասել, վոր
յերիտասարդ «Հորն» դրակեցնում և նաև սիրո, բնության
անձնական քնարերգությունը, ինչպես նաև... Հայաստանի
բանկորը։

Հայ ցեղի, նրա իղեալականացրած անցյալն, հայ յե-
ղեղեցու և հեթանոսական մեհյանների փառքի ու շեղանքի
մասին յերգել ե ցեղուս Դանիել Վարուժանը, ավելի ուժեղ,
ավելի տաղանդավոր, այս Հարցում «Հայր» Վահանը նրա
անշնորհք եպիգունն է հանդիսանում։

Ցեղը, «ցեղային շքեղանքը», վորպես պայքարի զենք,
դաշնակցությունն ամուր է բռնում իր դողացող ձեռնե-
րում։ Այդ ցեղի և ցեղայինի իղեալականացման շուրջը նա
ցանկանում է՝ համախմբել անդիտակից զանդգածնե-
րին՝ իր արյունաբրու ծրագրերն իրագործելու համար։
Այդ է պատճառը, վոր դաշնակցական մամուլը վե ցեղայ-
նական այնքան ծամված «Փանդիրներով» (այս Հարցում
նույնպես, դաշնակներից հետ չեն մնում ուժիկավարները)։
Տպագրվում են բազմաթիվ «ուսումնասիրություններ» Հայ
ցեղի յեղակի, բացառիկ, դերի ու տեղի մասին՝ վողջ աշ-
խարհի կուլտուրայի մեջ և այլն։ Հաճախ ել յուրայինների
ցեղային զգացմունքներն ավելի դրվուելու համար՝ նրանք
դիմում են ուսարներին, նրանցից վարակիչ որինակներ
բերելով։ Նույն «Հուսաբերի» խմբագրությունը հուզում-
նակոծ տոնով և պատմում 27 ոռու սպիտակ գվարդիական
սպաների «ցեղային շքեղանքի» յելույթը։

«Ապալինած ցեղային շքեղանքին գրում և
«Հուսաբերն» իր խմբագրականում, և 27 ճերմակ
ուսուներ, բոլորն ալ զինվորականներ, սպա ու զին-

վոր, —ոռւսական յերգեցու ընտափը շանկով բեմ յելան, հոռեցին ուղղված իրները, անոնցմէ ջերմ ծափեր խլեցին ու հոսկե (Գահէրեցից Ա.) մեկնեցան՝ ցեղային յերգի ձայնը զաղութե դաղութ հընչեցնելու . . .» («Հոռւսակեր» 1931 թ., № 286):

«Հուսաբեր»-ի խմբագրի ցեղային զգացմունքները չու-
զող գեպքը, ինչպես տեսնում եք, հանդիսանում է 27 ապի-
տակ տարապիր զինվորականների յերգերի յերեկոն, վորոն
հալվանորեն նրանք կազմակերպել են անդորձությունից և
անփողությունից: (Ներկայումս նրանք ել ստիպված չեն
լինի նման «ցեղային չքեղանքով» մուրալու, քանի վոր ճա-
պոնական և առհասարակ յելքոպական իմպերիալիզմը
նրանց լավ և վճարում ԽՍՀՄ-ի դեմ նոր ինտերվենցիա
կազմակերպելու համար՝ նրանց Մանջուրիա համախմբե-
լով: Զե՞ վոր այստեղ ես «Ճերմակ ոռուսերու» «ցեղային
չքեղանքը» ավելի կարեոր ե, քան յերդի մեջ, և այս «չքե-
ղանքին» պարոնայք դաշնակցականները ավելի յեն նախան-
ձում, քան նրանց թանդ զնանոց համերգին, վորովհետեւ
վերջինիս թե քաղաքական և թե նյութական ողուտներն ա-
վելի մեծ են: Սակայն զուր են նախանձում պարոնայք
դաշնակները, չե՞ վոր այս հարցում յելքոպական իմպե-
րիալիզմի աչքը՝ դաշնակների վրա նույնքան քաղցր և,
վորքան «սպիտակ ոռուսերու»: Զե՞ վոր այս հարցումն ել դաշ-
նակները վոչնչով հետ չեն մնում «Ճերմակ ոռուսեր»-ից:

Տարված ոռւս սպաների «գեղարվեստական» յելութից,
«Հուսարից»-ի խմբադիրը կշտամբում է յուրայիններին,
«ինքնաքննադատությամբ» և զբաղվում, թե ինչո՞ւ իրենք
եւ չեն կարողանում նման «խիզախությամբ» դրսեորելու
իրենց «ցեղային հանճարը», չե՞ , վոր ըստ պարունայք դաշ-
նակների այդ հանճարն՝ ավելի հնարավորություններ ու
տվյալներ ունեն իր վրա զրավելու «քաղաքակիրթ Յելուսին»
ուշադրությունը, քան վորեն այլ ցեղային հանճար :

Յեզը, ցեղային հարցը դաշնակցության համար անսպոռտ հարց կլիներ, յեթե այդ չկապվեր փորոշ տերիտորիայի հետ, տվյալ գեալքում Հայաստանի՝ «Հայում հայրենիքի» հետ:

Յեկ ցեղն ու ցեղայինը կոչված են վերստեղծելու, վերստանալու այդ հայրենիքը, —ահա դաշնակցության որակարգի հարցը։ Հայրենիքի, Հայաստանի, պատմական անցյալ Հայաստանի, ներկա Հայաստանի հարցը դաշնակցական խըմբագրողների, Ըստարիների, խմբապետների չափ, հաճախ նրանցից ավելի շատ, դրադեցնում են նաև դաշնակ քերթողներին ու վիալասաններին։ Ներկա Հայաստանին տիրանալու համար դաշնակներին հատուկ և և ձեռնառու ինքնալականացնել, չքեղացնել անցյալ Հայաստանը, ներբողել նրա տիրուր վլատակները, ներբողել կործանված յեկեղեցներն ու ատրուշանները, ներբողել խորտակված դյուցազնությունները և դրանով դաշնակցական սերնդին զինել—«Ճինքարիերու խորհրդով», «գոռ Բարսամա կառափով յեկող Վահագնի, Գայլ Վահանի հարվածով» (Հ. Վ. Հովհաննիոյան—«Հայրենի կրակարան»)։

Յեթէ ցեղի ու ցեղայինի խղեալականացման մեջ «Հայր» և ահանը հանդիսանում եր Վարոժմանի եպիսկոպոս, ապա հայրենիքի և նրա նվաճման համար մզվող պայքարի պատկերացման մեջ ինչպես յերեսում և, նրան հանդիստ չեն տառիս կառավինարանների և մոխրակույտերի վաստակավոր կառավակ՝ Ավետիս Ահարոնյանի արյունոտ դափնիները : «Հայր» Վահանը, սակայն, փորձում ե ավելի խիղախել, ովելի զարգացնել Ահարոնյանին :

Ցեղեւ Ահարոնյանը, իր արյունոտ հոբելյանի առթիվ՝
աշխակ պործիչներին ու խմբապետներին դիմելով ուխտ եր-
անում թէ.—

«Մնում ե միայն կարոտն հայրենի,
թէ Արարատի ծոցում չը հանդէմ

Յեկ Արաքոը չորրե քունս հավերժական»,
Ապա Փաշիստ «Հայր սուրբը» հավատացած տոնով բա-

ականչում եւ —

«Յես չեմ մեռնիլ, քեզ չեմ մոռնար Հայաստան

Հույսը կոփված դրանիտ.

Գը հավատամ դավակիներուդ քաջության,
Քո հարությանդ, քո փառքիդ»:

Նա , Աշարոնյանի նման չի յերկմտում , նա ավելի «խի-
զա՞լ» է , նա հալատո՞ւմ և Հայաստանի «զալակնելու»՝
զաշնակցականների քաջությանը , նա հավատո՞ւմ և Հայա-
տանի «հարությանը» , նրա «վաստի»ն , վոչ միայն հավա-
տում , այլև անձնապես պայքարում և այդ «հարության»
համար՝ «քաջ զավակներու» Փաշխտական , ինտերվենցիո-
նիստական բանակում , կաթողիկական իր սքմին սեղմած
գաշնակցական քննարը :

Հայու և Հայստանի մասին քննրերգելիս Փաշխում
«Հոր» եքստալի իր դադաթիվակետին և համում—«Յես հա-
յությամբ կուզեմ հարքին» աղաղակում և նա դաշնակցա-
կան խմբադիրների, եքս-մինիստրների և խմբակետների
շոնթալից ծափերի տակ: Նրա հարբեցողության այս մոլե-
գին փափառը կարող է շարժել դաշնակցական Փաշխստա-
կին վողջ բանակի նախանձը: Հայությամբ հարբում և
«Հայր» Վահան Հովհաննիսյանը, վորպեսդի կարողանա-

«Վառել ջահերն իս Անի»

Հըսկայանալու տարածվելու...»:
Անին, վոչ միայն Անիի, այլև Հին Փեղալական Հա-
յաստանի ամեն մի վշտանք, ամեն մի բնիոր ահապին նյութ
ե, վողեսրիչ մուսա յե զաշնակ բոլոր քերթողների և ար-
ձակագիրների համար, մուսա, վորը վոչ միայն «յերկու-
մասկիթների կուլտ» ինչպես առում և անմահ Պարսիցանը, այլև
դաշնակցական կուսակցության սոցիալական պատվերով:

Յեթե շաղակըստ յեղերերդու Ավ. Անարոնյանը ուր-
տաստորով փափագում և իր կուսակցության կողմից նվաճ-
ված տեսնել այն յերկըստաները, ուր ծվարել են «մահացու»
խոցված Անի քաղաքը», «Աստծու կայան՝ վաղարշապատը»,
«տրտում Արմավիրը», «ըմբոստ Արտօնչատը» և այլն, ապա
«Հայք» Վահանը նույնպես սառնարյուն չի գեսլի դաշնակ-
ցական գրականության սև բիբլայում մեծ զեն ունեցող այս
ապրանքները։ Կա հեծկլտանքով ձգում և իր քնարի լո-
րերը։

«Ափ Ճ՝ ինձ տըլեք ժարդարտի
Վոսկեղոծված Սելանես,
Ճյուղ մը դալար արմավի
Նահատակված Անիկս»:

Նա նվագում է «ըլիցական ծնունդ» Վահ-Տոսալի անցած փառքը, «գոհարի պես վողկույցները Գողթանի», «Աստվածացած անունը Արմավիրի» ուր—

«Դիցական տոն, Հաշտիշատի գիշերներ, Ու կաթնաթույր Սոսիեն լույս կտեղաբ»:

Սակայն դաշնակցական մարտական գաղափարախոս չեր լինի «Հայր» Վահանը, յեթե ափսոսանքով հիշելով ֆեոդալական անցյալի «լիառքն» ու «պարծանքը», դրանով վերջանեատ զներ իր քնարական հույզերին:

Դաշնակցության համար հայ Փեղալական, հեթանոսական անցյալի աստվածացումը, ինչպես վերևում Հիշատակեցինք, միայն և միմիայն հետապնդում և իրենց ներկա արյունու ծրագրերի իրականացումը, անդիտակից մասսաների ազգային, ցեղային զգացմունքների գրգռումը՝ իրենց ֆարշատական գործունեցության համար։ Յեկ սքեմավոր ֆաշխատ քնարերգուն միջային պաճառանձներով զարդարված ներկայացնելով Արմավիրի, Անիի «աստվածությամբ բոցավառ» անցյալը, միաժամանակ կոչ և անում պայքարի յելնել, նվաճելու այդ անցյալը՝ գաշնակցության, միջադարյային իմպերիալիզմի դրաշակով, և վերակենդանացնել, ուստավրացիայի յննթարկել ֆեոդալական անցյալի «պարամտներում տեսիլները», «աստվածացած մարդիքն ու արքաները» Այդ նպատակով նա խոսքը հիմնակործան Արմավիրին ուղղելով, դրանով խոհ ֆարշատական իրենց բանակի վորելությունը բարձրացնելու միտումով, բացականչում և ...

«Զա՞րկ վերըստին բամբիոներուդ լարն հզոր ,
Վոր մենք լուինք քաղջերուդ յերդն հաղթաւկան ,
Վոր պարզվի քո հին դրոշն Արամյան ,
Արծիվներու մեջն արեգակ մը բոսոր» :

Ապա, նույն Արմավիրին, նույն «Հայ ժողովրդին» (իմա

դաշնակցությանը) գիմելով, «Հայր» Վահանը քաջավատահ ստուվ շարունակում է —

«Սոովք ունիս յերկունքիդ մեջ դիցական

Կը սպասեմ յես քու զարթումիդ հայկական» :

Նա վոչ միայն հավատում և դաշնակցության ձեռնարկած։ Հայատանի «Ըլցական յերկունքին» և «զարթումին» հայկական», այլև ակտիվորեն պայքարում և դրա համար, ահա թե ինչու այս «բանաստեղծական նոր աստղի» յերեկան դան այնպես թժբուկով ու ծընծղաներով դիմավորվեց դաշնակցական իմրադիրների և լիդերների կողմից։

«Երկարական յերկունքի», «Հայկական զարթնումի» համար նախ և առաջ հարկավոր և ակտիվ պայքար, հարկավոր և բանակ և հերոսություն, այդ իսկ պատճառով «Հայր» Վահանը՝ «Յելիր ասպետ» վերնագիրը կրող իր բանաստեղծությամբ գիմելով դաշնակցական տնցյալ փառքի, Հայութիւնը կառավետության, իմրապետության սիմվոլ՝ Անդրանիկին, նրա մահց հետո յել նրան հրամակում և մարտնչելու Հայատանի դաշնակցական «Հարության» համար։ Նա հավատացնում և մահացած «ասպետին», վոր գետ—

«Ահ և զողումն և վիշապի քո ստվերդ

Լեռներու մեջ մարմնացած» :

Նա սրտապին կոչ և անում Անդրանիկին թե —

«Յելիր ասպետ սրատերազմի սիրահար»

Յեկ զրապար և մարտիկ...» :

Դաշնակցության ինտերվենցիոնիստական գործունեյության համար, ամենից առաջ հարկավոր և «պատերաբազմի սիրահար» զորավարներ և մարտիկներ, իսկ Անդրանիկը վորպես այլպիսին իդեալ և նրանց համար և այլք և պատճառը, վոր սքեմավոր քնարերգուն նրա ասպետական համբավն և գեղղեղում ներկայումս, յերք «ասպետը» չկա։ Նա զունում է, վոր «անձուկ և մութ դամբանը» ասպետի համար, նա հորդորում է, թախանձում է, — «Պարձիր ասպետ...»

«Յեղ կը սպասեն կույսերն Հայոց նայիրյան

Փարուններով խնկարույր» :

Սակայն ասպետի և զորավարների համար նախ և առաջ բանակ և հարկավոր, կոլող ույժ, թնդանոթի միս, վորին անդլո-Փրանսիական իմպերիալիզմի ցուցմունքներով և թերապերանքով պայքարի՝ միաժամանակ հայկական Փաշիզմի նպատակների իրավործման համար։ Այս հարցը, սեփական զորքի և բանակի հարցը, ամենից «ցավոտ» հարցն և դաշնակցության համար։ Գնալով նրանց բանակի շարքերը նոսրանում են։ Աշխատավոր Հայության արտասահմանյան զանդավածները, մեկ անդամ ընդմիշտ յերես են դարձնում իրենց յերկարամյա գահին՝ դաշնակցությունից։ Դեպի Խորհրդացին Հայատանը կազմակերպված ներգաղթը մի նոր հարկած էր հայկական Փաշիզմի կուսակցությանը։ Աշխատավորության մոլորգմծ մասի վերջին խմբերը լքում են նրա արյունատ զրոշակը։ Այս և պատճառը, վոր ներկայումս զանձակացություններ մահու և կենաց պայքար և մղում արտասահմանում իր «Հեղինակությունը» բարձր սպահելու, այսի իր բանակը հարստացներունոր զինվորներով առանց վորի չեն կորու իրավորձվել նրա ինտերվենցիոնիստական արյունության բազավեցիւր:

Եերիտասարդության հարցը՝ դաշնակցության ակտուալ հարցերից մեկն և հանդիսանում, առավել ևս չափահատ վորքերի հարցը, վորովհետև վերջիններս պատրաստի թընդանոթային միս կարող են լինել իրենց բնտերվենցիոնիստական բանակի համար։

Սակայն ավելի վրդովեցուցիչ և յուր տեսակի չունենալու շինդում և դաշնակցության կողմից կազմակերպված Հայ չտափահատ վորքերի արյունության վաճառքը։ Իմպերիալիստական պատերազմի և դաշնակցության կործանարար քաղաքականության այդ զոհերի, կործանումից ու կոտորածներից ճողովրած բեկորների արյան զնոսվ դաշնակցությունը ցանկանում և առաջ վարել անդիմական իմպերիալիզմի՝ իր սոոր սպասարկության սկզբունք։ Այդ նախատեսկով և, վոր նա զանդ և կուս Հոյքունի հետ, նրան 50.000 չափահատ Հայ վորքեր որամագրելու համար։ Աթենքի «Նոր շարժում» թերթը մերկացնելով դաշնակցության հրեշտային այդ վործը, զրում է —

«Բանակցություններ տեղի ունեցած են Աթենքի մեջ, Հոյքունի ներկայացուցիչներու և դաշնակ բյուրոյի ներկայացուցիչ Շ. Միսաքյանի միջև։

Այդ բանակցություններն կը պարզվի, վոր դաշնակները Հոյքունին խոստացած են 50.000 չափահաս հայ վորքեր չարժման մեջ դնել թրքական ճակատի վրա կովելու՝ անդիմական զենքերով և ռազմանյութերով սպառապինված»։

Պայքար յերիտասարդության համար ու հայ յերիտասարդությանն իր արյունոտ դրոշակի տակ համախմբելու և անդլո-Փրանսիական իմպերիալիզմի ինտերվենցիոնիտական գործին սպասարկության դնելու գործը հանդիսանում և դաշնակցության կենտրոնական խնդիրներից մեջը։ Այդ մասին քիչ մելան չի սպասվում և քիչ հոգվածներ չեն տեղում դաշնակցական թերթերից։ Գեղարվեստական գրականությունը նույնպես իր «սրատվավոր» անձիքն ունի դաշնակցական այդ արյունոտ գործարքի մեջ։ Այդ և պատճառը, վոր դաշնակցական գեղարվեստական գրականությունը չափականց մեծ ուշադրություն և «սրատագավ» վերաբերմունք և հանդեմ բերում դեպի յերիտասարդության «ազգային» դաստիարակությունը, դեպի նրա Փաշիզացիան։

Յեթե հարկավոր է 50.000 հայ վորքեր տրամադրել Քրդաստանի և Հայաստանի «անկախության» համար պայքարելու, ապա հարկավոր է այդ հարցն արծարծել նաև գեղարվեստական գրականության մեջ, հարկավոր է արվեստի ավելի նուրբ միջոցներով աղջել հայ յերիտասարդության «ազգային զգացումներու» վրա, հարկավոր է դիպուտական սրտի «ազգային լարերուն»։ Այդ նպատակով ել դաշնակցական գեղարվեստական գրականությունը պատկառելի տեղ և հատկացնում յերիտասարդության հայրենական, դաշնակասիրական-Փաշիստական տրամադրության պատրաստման և բարձրացման խնդրին։

Այդ ուղղությամբ յեղած նյութերի մեջ չափազանց հատկանշական և «Հայր» Վահան Հովհաննիսյանի գիրքը՝ դաշնակցական վոչ մի քերթող և արծակագիր դեռ ի կարո-

ղացել ամբողջովին հասկանալ ու կենսագործել դաշնակցական գեղարվեստական դրականության Փաշիզացիայի շրջագարձի կարևորությունը, վորքան այդ կենսագործել և կաթոլիկ-Փաշիստ քերթողը։ Գուցե նրան ոժանդակել և այն «բարեպատեհ» առիթը, վոր կաթոլիկ «Հայրն» ապրում ու տեղծագործում և Փաշիզմի հայրենիքում, Մուսովնիի և Պիոս 11-րդ պապի «բարձր հովանավորության» ներքո։

Յեթե դաշնակցությանը հարկավոր է անգլիական զենքով սպառապինել և «չըջանառության մեջ» դնել 50.000 հայ վորքեր, ապա նախ և առաջ հարկավոր է նրա մեջ ավելի «բորբոքել հայու արյունը», «սորվեցնել պապերու՝ քաջի խոսքերն ու մարտական քայլերգները», «իսչի և հալատքի լույսեր բռնըռքել», «հայու սիրու մը դնել անոր մեջ»։ Այդ խիստ կարևոր և «վսեմ» պարտականությունն իր վեղարակոր սև ուսերին և առնում քերթող «Հայր» Փաշիստը։

Յեթ ահա դաշնակցության քնարական մունետիկ «Հայր» Վահան Հովհաննիսյանը՝ «բոլոր հայ վորքերուն» և դիմում՝ իր նախընթացը չունեցող Փաշիստական մի բանաստեղծությամբ։ Այսպէս և սկսվում այդ բանաստեղծությունը։

«Փողոցին մեջ յեթե յերեք հանդիպեք
Լակոտ մը մերկ, սև ու խոշոր աչքերով,
Վոր կը շրջե սուլելով «Մեր Հայրենիք»,
Բերեք ինձ զայն, բերեք իմ գերկըս սիրով։

«Պիտի պազնեմ անոր ճակատը մըրոտ,
Դրոշմելով այնտեղ հոգի մը ապստամբ...» և այլն։

Նա այդ «լակոտին», բոլոր նման «լակոտներուն», «բոլոր հայ վորքերուն» պետք է դարձնի «առյուծաբաշ մարտիկ» ներ», նրանց ստահակ հողիներու» տեղ՝ պետք ել վարի «առավոտ՝ Հայաստանի արեգակին պերծությամբ»։ Նա խոստանում է այդ վորքերին տալ «ահազնության Տիգրաններու Հանձարը» և «Վարդանի մութ կարմրությունը սրտի»։ Նա խոստանում է ձուլել նրանց բազուկները յերկաթից, տալ նրանց...»

«Սիրո մը պողպատ, արև աչքեր հըրավառ,
վորակես հոգի շընչեմ խըրոխտ բուքը մեր,
Թիկունք տալով կողը Մասյաց վեհափառ»:

Յել այս բոլորից հետո, «Վահագներու աստվածային արյուննեն սերված» այս անհաղթ, տիտանները՝ ըստ Փաշիստ քնարերգակի, ըստ դաշնակցության սոցիալական պատ մերի, պետք ե զուրս գան՝ «Հընալանդ հայրենիքի որենքին», պայքարելու հայկական Փաշիդի, Համաշխարհային Փաշիդմի գրոշակով՝ Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի ղեմ։ Աչա «Հայր» Վահանի բնակարան պեղումների ամբողջ իմաստը։

Սակայն Միիթարյան խուցերի յերիտասարդ «առաջինքողին» պետք ե հայոնի լինի, վոր յերե «Վահագներու աստվածային արյուննեն սերված» դաշնակցական Փեղայիներն ու ասպեսները հարկ համարեցին մեր սահմանների մոտ հանդիպելու Հայաստանի բանվորներից և զյուզացիներից սերված Կարմիր բանակին, ապա նրանց «Մասյաց կողերը վեհափառ», կհանդիպեն այնախսի հարվածների, վար վերջնականապես շարդ ու փշուր կիմեն։

Վահագնի այդ որապական շառավիճեները կհանդիպեն ամբողջայն ահեղության և այն ժամանակ, «հայր» Վահան Հովհաննիսյանին կմնա իր բնարավ, ծերութիւն Պրիանոսինան՝ դեգերել յուրայինների դիմեների մոտ և վրդրալ դանագին։

Մենք հարել չենք համարում ընթերցողներին դրաղեցնել և կանգ առնել «Հայր» Վահան Հովհաննիսյանի սիրու և բնության յերդերին։ Կանգ չենք առնելու նաև նրա կզերուկան զեղումներին, ուր սքիմալուր Փաշիստ քնարերգուն մերթ գեղերում և կիսակործան յեկեղեցների ու տաճարների շուրջը, մերթ վողբում և հայկական շարականների փառքը, մերթ հոււավառիած «Արագածի սարին կը աւագան վոր մերթ հոււավառիած»։

Զատիկը զա», մերթ եւ Տիրամոր շուրթերի «Ճաղկման» քնարական դովքն և անում։

«Յոզը վըշտին կը ծաղկի չըլեներուն մեջ Տիրամոր, Միրո ժաղիաը վըան»։

Կղերական այս քերթկածների թիվը բարձական շատ և կաթոլիկ «Հոր» զըքում, յեթե մենք հիշատակելու լինենք նրա մի մասի վերնարդերն անդամ, ապա ընթերցողը պարզ գաղտնիար կկազմի նրանց ուհակցիոն, Հակածեղափոխական բովանդակության մասին։ Աչա—«Սրբության կանքեղը», «Աւագանդությունի կանքեղը», «Վահականի կանքեղը», «Դատիկի», «Հանգամանքանի», «Սրբազնի կեռը», «Շարականի», «Հոորանիկը», «Եմ շարական» և այլն, և այլն։

Այս տիպի զրվածքների կողքին կաթոլիկ քնարերգուն ունի սակայն մի բանասահծություն՝ «Հայատանին բանինին» վերնարդով, վորը նորության պետք ե համարել դաշնակցական քնարերգության մեջ։ Այսուղ քերթող «Հոր» քնարական Հանդգնությունն այնուեղ և Համում, վոր նուուզզակի Հայաստանի բանվորին և դիմում... զաշնակցության ծրագրերն իրագործելու համար։ (Լա՞վ Հասցե յե վերցրել, խո՞սք չկա)։

Միիթարյան խուցերի յերիտասարդ բնակչին միթե ծանոթ չի, վոր զեռ 12 տարի սրանից առաջ, Հայաստանի բանվորը, աշխատավոր գյուղացու ոժանդակությամբ, վերչնականապես ջարդ ու վշուր արեց «Վահագնալարմ» խմբակետների արյունուտ տիրապետությունը։ Կամ զուցե կաթումկ քերթողը կարծում ե, վոր եր չափածո զեղումներն այնքան ազդեցիկ կլինեն, վոր այդ բանվորը կարող կլինի մի պահ ունինըրել, աքանչանա՛լ նրանով։ Զե՞ վոր «Հայր» Վահանը կանգ չի առնում նաև այդ բանվորի «ցեղայնական» «զգայուն» լարերը շոյելու առաջ։ Նա, այդ բանվորին դիմելով, վորի «յերակներուն մեջ զեղի ամբողջ արիությունն և հօրդած», կոչ և անում։

«Կովկե՛ կայծակ ու պողպատ, Վոր սուր շինվի մոլուցքով»։

Յեվ «ժողուցքով շինվող» այդ սուրբ («Հայր» քնարերդույի խելքին մտիկ) պետք է ոգտագործվի դաշնակցության նպատակների իրագործման համար, նա պետք է «փառքերու ճամբար բացե, ուրիշ անցնի Հայաստանը», նա պետք է վերածնի հին, Փեռդալական, դաշնակցական Հայաստանը: Նա հորդորում է Հայաստանի բանվորին աշխատել ավելի յեռանդագին, ավելի անխոնջ, մի խոսքով աշխատել «Հարվածայնորեն», դաշնակցության համար «փառքերու ճամբաներ» բացելու:

Ինչ խոսք այն մասին, վոր Հայաստանի բանվորներն ու կոլտնտեսական գյուղացիներն աշխատում են յեռանդագին. սակայն մի «չնչին» տարբերությամբ, վոր նրանք վոչ թե դաշնակցության «փառքերու ճամբաներն» են բացում, այլ գերեզմանի ճամբաներ: Այս «փոքրիկ» տարբերությունը, հարկ ենք համարում քերթող «հորը» տեղեկացնելու, վորպեսդի նա իր գրքի յերկրորդ հրատարակության մեջ, կամ նոր հրատարակելիք քնարական այլ գրքում, սանկ պղտիկ շտկում մը ընե...

Սակայն սքեմավոր դաշնակցականը դեռ հանձնվում է իր քնարական զեղումներին, նա դեռ հորդորում է Հայաստանի բանվորին «անցյալի փառքերով» վերածնել «Յերիտասարդ»: Նա քնարական հորդոր է կարդում...

«Հարվածներուդ բարբառով
Յեղիցի լույս որհնության,
Վոր վերածնի փառքերով
Յերիտասարդ Հայաստան»:

Այս «սրտաշարժ» պատկերը կենսագործելուց հետո («Յնծա և ուրա՛ի լիր» Հայաստանի բանվոր), Փաշեռտ «Հայրը» քեզ խոստանում է. —

«Հայնժամ ճակատով դրոշմեմ՝
Տրդառներու ուժդնությամբ,
Գեղեցկությունը վսեմ
Մեր լեռներուն ալըստամբ»:

— կերած ապրուրը տես, — այսպես կպատճանելին շայաստանի բանվորները «Հայր» Վահանի քնարական կոշայաստանի բանվորները «Հայր» Վահանի քնարական կոշայաստանի բանվորներին կշրջանակելին տեղայ իրենց շին: Յեվ ավելի յեռանդագին կշրջանակելին տեղայ իրենց կառուցողական հարվածները, վորոնց տարափի տակ վերջնականապես մահին են հանձնվելու «Հայր» Վահանների քնարական հայդուկային կոչերը:

Հայաստանի բանվորը, Անդրկովկասյան և վոյց Միուրյան բանվորների, կոլտնտեսական զյուլացիների, աշխատավորական լայն զանգվածների հետ միասին, կոմաւեհատական կուսակցության դեկալարաւորյամբ, կրկնապատկիւծ յեռանդով, հնչեցնում են «աշխատանքի յերգը հզոր», նրանի խիզախորն կերտում են այն զենքերը, վորոնի վերջնականապես զախցախնելու յեն «Վահագիան արյունեն սերված» հայդուկների «Մասյաց» կողերը, վորքան ել վերջներս զինված լինեն «հայր» Վահանի քնարական վահանովը: Նրանի, Հայաստանի բանվորները, դարձնում են սոցիալիտական հզոր Հայաստանը, վորի ինդուստրիալ, գրահակուռ կողերին զարնելով շարդ ու փշուր կլինեն դաշնակցական բահրը փուկների հորդաները, վորքան ել նրանի զան ագլո-ֆրանչական իմպերիալիզմի բանակների շարժերում, նրանց անմիջական դեկալարությամբ: Զարդ ու փշուր կլինեն այնպես, ինչպիս շրերը վիրխարի ծայրի կողերին:

իսկ Փաշեռտ «Հոր» քնարական, ծրագրային կոչեն, նրանք, Հայաստանի բանվորները, պատճանանում են հոմերական քրքիչով միայն:

Դաշնակցական, Փաշեռտական գրականության կողքին, արտասահմանում արդին հետզհետե աճում է մի նոր դրականություն, տողորված բանվոր դասակարգի, պրոլետարական հեղափոխության գաղափարներով: Զարդանում ու աճում է Հայկական հեղափոխական, պրոլետարական գրականությունը՝ միջազգային հեղափոխական դրականության մի ջոկատը: Հունաստանում արդեն կազմակերպված և Պրոլետարական Գրողների Խմբակցություն, վորը Հրատարակում է իր որ-

դան «Սուաջապահ» ամսագիրը: Ֆրանսիայում հետդեսեա առաջ են գալիս հեղափոխական պրոլետարական դրական նորանոր կազմեր, վորոնցից ընկ. Վահրամ Կաքավյանը հրատարակել է արդեն, ուշադրության արժանի իր առաջին գիրքը («Պողպատե սևըմեր»): Ամերիկայում, «Բանվոր» թերթի շուրջը համախմբված են պրոլետարական կազմերը: Դեպի պրոլետարական հեղափոխությունը նշանակալից շրջադարձ կատարեց բանաստեղծ Կ. Սիտալը: Սիրիայում գնալով աճում ե պրոլետարական դրականության համար պայքարող յերիտասարդների թիվը:

Այս բոլոր գրական միավորներին և առանձին գրողներին հարկավոր ե ավելի սերտորեն կապվել համապատասխան պրոցեսարական գրական կազմակերպությունների հետ։ Ֆրանսիայում՝ նորեքս կազմակերպված հեղափոխական գրող ների Ասոցիացիայի հետ։ Ամերիկայում՝ խոտանալ Խոն-Ռիչի անդամների կոմունիստական ակումբի շուրջը, ուր համախմբված են բոլոր աղջուռների պրոլետարական, հեղափոխական գրողները։ Յել ավելի կուռ ու կազմակերպված շարքերով, Հայաստանի խորհրդային գրողների հետ միասին, ավելի վնասական ու սխանեմատիկ պայքար ծալալեն դաշնակցական-ֆաշիստական գրականության դեմ, վորից բուրում և խունկի, արյան, երկիրման և ներած դիմակների գարշահոտությունը։

1932 *F. Տարտի* 25

ՄՈՍԻՇ ԱՐԴՅԱԿ ԶՈՒՄԱՆՑԱԸ ԳՈՐԾԻ ՎՐԱ

ԳԱՐԵԼԻ ՏԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ,
ԿԱՄ ՌԱՄԿՎԱՐ-ԱԶԱՏԿԱՆՆԵՐՆ
ԻՆՉՊԵՍ ՎՈՐ ԿԱՆ

Հայկական բուրժուազիայի՝ «դրամին յերկրորդ շերեւը» համբխացող ռամկավար-ապատական կուսակցությունը նույն հակախորհրդային, հակահեղափոխական նպատակներն եւ հետապնդում, ինչ վոր հայկական դազաղած ֆաշիստները՝ գաշնակները։ Մի տարբերությամբ միայն, վոր ռամկավար-ապատական եֆենդիները գիտեն ավելի «դդույչ», ավելի «թաքթիքով», ավելի քսու և կերծավոր գիրք ընդունել, երականում կատարելով նույն դաշնակցական գործը։

«Առտնին» վեճերն ու «ազգային հարցերու» շուրջը դաշտ նախների հետ սահմանած կղակամարտը՝ չի խանգարում նրանց հանդես գալ պաշտպանելու դաշնակցության ինտերվենցիոնիստական գործունեյությունը՝ ուղղված Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի ղեկամ: Նրանք հաճախ կուրքք են ծեծում, կոկորդիլոսյան աղի արտասունդներով թրջում իրենց շքեղ Փրակների: Վնդստում, հայեցում են բայց և կիներին, վորոնք «անմեղ» դաշնակներին «գլաւարտում են» ինտերվենցիոնիստական գործունեյության մեջ:

Ճիշտ ե, նրանք հաճախ կշտամբում են դաշնակիներին՝
նրանց «անտակո» գործունեցության համար խրառներ կար-
դում: Դաշնակիներն ել իրենց հերթին չեն մոռանում ուսմկա-
վար-աղատական «ազդայնոց» մառթին տալ՝ իրենց գործերի
մեջ անտեղի միջամտության համար, սակայն նրանք հիմ-
նականում «մի շնչից են, մի տնից» ինչպես ասում ե ժողո-
վրդական առածը:

«Ըամկալարների քշնամական» դիրքը դաշնակիների հանդեպ բացատրվում է լոկ տակտիկական նկատառութեարով»: Յեվ—«Երանիք» (ռամկալարները) խուսափում են մուտեալ դաշնակիներին հիմնականում այն պատճառով վոր վախենում են, քե ԳԱՇՆԱԿՆԵՐՆ ԻՐԵՆՅ ԾԱՆՐ ԹԱԼՅ ԿԴՆԵՆ «ԱԶԴԱՑԻՆ ՍՆՏՈՒԿԻ» ԲԱՐԵԳՐՐԾԱԿԱՆ ՀԱՐՍՏԱԼՄԻՑԱՆ ՎՐԱ, ՎՈՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԻՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ ԵՆ ԻՐԵՆՅ» (Ա. ԽԱՆՁՅԱՆ): Ահա «թշնամության» պատճառը, վորը հաճախ հասնում ե մինչև հայկայաբարտի դաշնակցական և ռամկալար-աղատական թերթուկների եջերում:

Ընկ. Ա. ԽԱՆՁՅԱՆԻ զեկուցումը՝ մեր կուսակցության Տ-րդ համագումարում, վորի մեջ նա մի անգամ ևս մերկացրեց դաշնակցության ինտերվենցիոնիստական սև դեմքը և նրա յերկվորյակ՝ ռամկալարների քսու յերեսը՝ արտասահմանում հալաւար վայրահաջությամբ ընդունվեց, թե դաշնակցական և թե ռամկալար-աղատական կուսակցության դեղին թերթուկների կողմէից, վայրահաջություն, վորի անզոր, բայց դաղաղած կաղկանձի արձագանքները դեռ մինչեւյժմ ել լավում և անդադար:

«Ապագայի» «Ապագային ԾՈՅԵՐԸ»՝ «Հայրենիք»-ի, «Հուսարեր»-ի և «Հառաջ»-ի զրչի հայրուկներից ու Փաշխատներից ավելի վրդովված են և հուզումնակոծ, վոր մեր կուսակցությունը մերկացնում են նրանց կեղծավոր հակահեղափոխական դեմքը: Նրանք դաղաղում են, վոր մենք «հաշվի չենք առնում» նրանց կեղծավոր հայտարարությունները՝ «Հայուֆիքական գոյությունը փրկող» խորհրդային իշխանության հանդեպ իրենց «բարեկամության» և «սիրո» յերաբերյալ: Նրանց թերթուկների բուրժուական յերախները փրփրակարում են, վոր մեր կուսակցությունը մինչնույն արշինովն ե հափում իրենց—ռամկալար-աղատականներին և յերդվյալ Փաշխատ-դաշնակներին: Նրանք բողոքում են, վոր մեր կուսակցությունը, փոխանակ չոյելու նրանց՝ աղվեսի կեղծավոր մորթը, միանդամայն հակառակը, մերկացնում ե նրանց հակահեղափոխական ուսակցիոն դեմքը:

Հանրածանոթ փաստ ե, վոր մեր հարավային սահմաննե-

թից վոչ այնքան հեռու, տեսնդաղին կերպով պատրաստութիւն ինտերվենցիոնիստական գործունեցության ակտիվ կերպով իրենց «լուսական» տվել եյին նուև ռամկալար-աղատականները, «ազգին յերեկելի անդամոց»՝ Կյուլպէնկյանի և Պողոս Նուպար փաշայի միջոցով:

Եեր մեր կուսակցությունը աշխատավոր ժառանձրի առաջ մերկացրեց այդ արյունոտ ծրագիրը, ռամկալար-աղատական եֆենդիները, վոչ միայն իրենց «անմեղ աղավնու» թերթը թափառարեցին, այլև ոկոսցին իրենց «աղվեսի պոչով» ծածկել դաշնակցության սև գործը: Ներդադիր վիժեցնելու առթիվ միքսի Փաշխատական մահափորձը, վոչ այլ վոք սկսեց ավելի յեռանդազին կերպով թաղցնել և այաշապանել քան՝ ուսմիկալար-աղատական կուսակցությունները՝ քանարական փաստաբան մոսիս Արշակ Չորբանյանի բերանով՝ «Ապագայի» եջերում:

Մոսիս Չորբանյանը, ռամկալար-աղատական կուսակցության այս կարկառուն դեմքը, հասդիտական և «Հայագիտական» իր պրպտումների հետ միաժամանակ, հանգես ե գալիս նուև քաղաքական հարցերում, մերթ վորպես դաշնակցության և Խորհրդային իշխանության «հաշտեցման» «ավետարեր» աղավնի՝ ռամկալար-աղատական տապանից ճախրող, մերթ, վորպես դաշնակցության «բարեբարո» դառտիարակ, մերթ ել վորպես հակախորհրդային ինտերվենտների գարշապարը լիզողի «պատվարեր» դերում: Իր կարողութենեն վեր չի համարիր նուև համաշխարհային քաղաքական և արևտեսական հարցերուն միջամուխ բլալ:

Մակային մի քանի խոսք նրա «գրական» մի յելութի մասին:

ՄՈՍԻՍ ՉՈՐԲԱՆՅԱՆ
ԴԱՆԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՒՆԵՏԻԿ

Հայկական բուրժուազիայի Փաշխատական կուսակցության՝ դաշնակցության արտաստհմանյան վերջին 12 տարվա «տարեկառության» մեջ, վորպես կարևոր գեղթ, նշոնակալի տեղ և բունում Փաշխատական շաղակրտ Ավ. Ահարոնյանի

քառասնամբ յա հորելյանը, վորը դաշնակցությունը վերածեց վորպես «Համակուսակցական» ցույց՝ Խորհրդային Հայաստանի դեմ, վորպես նոր տոփիթ ինտերվենցիայի մասին մըստքեր պատրաստելու։ Այդ հորելյանը, ավելի քան այլ տոփիթ, բացահայտ մերկությամբ հրապարակ նետեց դեպի Խորհրդագլային Հայաստան դիմված միջտառություն կազմակերպելու հարցը, վորի մասին կերկերում ելին զառամյալ հորելյարից մինչև իրեն դրվատանքի խոսք ասող «սրբազնները», վաճառականները, արդյունաբերողներն ու խմբապետները։ Հենց այն հանգամանքը, վոր մոխրակույտերի արնակուուց կաշաղակի հորելյանի առթիվ «գրական» գրվատանքի խոսքն ուղարկարակ իշխան Սեպուհից մինչեւ... Մամբրե ծայրագույն վարդապետը, եքա վարչապետ Համբ Ռէանջանյանից՝ մինչև «բանաստեղծ» Զեքիճյանը, —ինքնին վկայում ե այդ հորելյանի զուտ ֆաշիստական, զուտ դաշնակցական-ինտերվենցիոնիստական բնույթը*): Կրկնակի կույրերն անդամ այդ չելին կարող չնկատել։

Սակայն միք զարմանա, վոր մոսիո Զորանյանն այդ բարը չտեսնելու յեւ տալիս և վորպես դաշնակցության եժանագին փաստաբան հանդես ե գալիս այդ հորելյանի ինտերվենցիոնիստական ղեկամքի վարագուրման ինքնակոչ դերով։

«Անահիտ»-ի եջերում «Հայ մեծ գրագետի մը (sic !!!) հորելյանին առթիվ, վոր մեր մտավոր կամացին մեջ նշանակալից ու կարեւոր յերկույթի մըն եր» (sic !!!), պարոն Զորանյանը կաշվից դուրս ե գալիս ընթերցողներին (և մինչև անգամ դաշնակներին) Համազելու, վոր Ահարոնյանի հորելյանը դաշնակցությունը կոտղմակերպել եր զուտ «գրական» նկատառումներով, և վոր Փաշիստ հորելյարի՝ «ՎԱՅ ՍՈՒՆԵՆ ՁԵՏՈ Ի ՀԱՅՏ ԲԵՐԱԾ ԱՅՍ ԱՌՈՒՅՑ ԲԵԴՄՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

*) Այս հարցի մտաին ավելի հանգամանորեն յես կանգ եմ առել իմ՝ Հայ ֆաշիստների զրական անդաստանում, հոդվածում, այդ իսկ պատճառով ավելորդ եմ համարում ծանրաբեռնել հոդվածը այդ հորելյանի ֆաշիստական-ինտերվենցիոնիստական հանգեսներին ներպարսությամբ։ Ա..

Ն՛ (լոռիմ եք), ինչպես և հեղինակի հանկարծական հիվանդությունը մզեցին անոր բարեկամներն ու հարդողները կատարել այդ բացմավաստակ գրագետին (sic !!!) հանդեպ հորելյանական տոնախմբության մը պարտականությանը ԱՌ ՆՈՒՅԻՑՆԵՍԿ ՈՒՇ ՄՆԱՅԱՆ ԵԲ։ («Անահիտ», ընդգնումները իմն են. Ա.)։

Ահարոնյանի՝ «վաթսունեն հետո հանդես բերած առույնությունը», ինչպես սլարդ և ընթերցողներին՝ նույն շարունակությունն ե իր արկածախնդրական ֆեղայական վողջ գործունեյությանը և բացառապես ի հայտ ե յեկել դաշնակցության քաշիստական գործունեյության ակտիվ մանակցությամբ, դեսի Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Միությունը կազմակերպված ինտերվենցիոնիստական դավերի մեջ, վորի համար «բազմավաստակ գրագետն»։ Ահարոն բեկ ծածկանվան տակ անդլիական հետախուզական շուաբի դիրեկտիվներով դեգերում եր Սիրիայում, Խորհրդային Անդրկովկասի ղեմ ուղղված «Հայ-քրդական» Փաշիստական-ինտերվենցիոնիստական մերձեցում կազմակերպելու համար։ Սակայն մոսիո Զորանյանը դիտավորյալ կերպով չտեսնելու յեւ տալիս այս ամենը և այնքան խոնարհությամբ ծունկ ե չոքում «Հայ մեծ գրագետի» «գրական» հորելյանի առաջ։ Նա անդամ չի ամաչում կշամարելու դաշնակ գրականերին, վորոնք Ահարոնյանի մեջ առաջինը տեսնում են Փաշիստ գործին, վորին և նետում են հորելյանական իրենց արյունուա զավիները։ Յեկ այսպես նա վրդովված տոնով նկարագրում ե.՝

«Զամանական քաղաքներու մեջ կատարված հանդեսները, ուր ամենեն մոլեռանդ դաշնակցական գործիները բեմ յելան Ահարոնյանը ավելի դաշնակցության մեջ պատրը (ի՞՞՞ ՊՏՈՒՀԸ Ե...Ա.) ցույց տալու, քան հայ ցեղին գրական համարին (sic !!!) մեկ զավակը («Անահիտ, ընդգնումները իմն են. Ա.։)

Ահա պարոն Զորանյանի «միամտությունը», վորով նացանկանում ե դաշնակներից ավելի յեռանդադին վարագու-

թել նրանց Փաշիստական ինտերվենցիոնիստական սև դեմքը, վորն իր զազրելիությամբ մի անդամ ևս այնքան ռելյեֆ կերպով դրսելով Ահարոնյանի արյունուտ հոբելյանի հանդեսներին :

Ահա դաշնակցության սև գործը, «գեղարվեստի» «մաքուր» շղարշներով վարապուրելու նմանը չունեցող մի փորձ : Ահա դաշնակցուրյան եժանադիմ մունետիկը :

ԱՀԱՐՈՆՅԱՆ. «ԱՇԽԱՏԱՎՈՐ
ԶԱՄԳՎԱԾՆԵՐՈՒ» ՅԵՐԳԻԶ,
ԱՅՍՊԵՍ ԿԵՍԵ ՄՈՒԽԻ ԱՓԲԱՆՅԱՆ

Իր այս հոգվածում, Մոսիո Զորանյանը վոչ միայն չի ամացում Ահարոնյան դրական հայուսուկին և դրական միջակությանը՝ Ետկար Պոյի, Վիքտոր Հյուզոյի և այլ հեղինակությունների շարքը դասելու, նա վոչ միայն այդ շարքն ե դասում նաև դրական չնչինություն, հայտնի ավանդյուրիստ կոստան Զարյանին, վոչ միայն Ահարոնյանի մասին գրում ե, վորպես «մեր մեծագույն բանաստեղծներեն մին», վոչ միայն նրան հայտարարում ե վորպես «հայ բանին մեծ արվեստագետ», այլև հանդնում ե այն ռատիճանը հասցնել, վոր Ահարոնյանին հայտարարում ե «աշխատավոր զանգվածներու» յերգիչ :

Մոսիո Զորանյանը սիրում ե յերբեմն «հոգուտ» Խոր-Հըրդային Հայաստանի յելույթներ ունենալ, «դրվատանքի» խոսքեր ասել Հայաստանի խորհրդային կառավարությանը, վորը «հայ ժողովրդին փրկեց Փիղիքական բնաջնջումնեն». սակայն այդ ամենը կեղծ ֆրազներ են, վորոնց թափանցիկ բողերի տակից յերեսում ե Զորանյանի իսկական, հակախորհրդային, ուսակցիոն դեմքը, վորը հայ աշխատավոր ժողովրդի բնաջնջման բուն պատճառը հանդիսացող և այդ ժողովրդի դահիճ՝ դաշնակցությանը և նրա շաղակրատ յերդին հայտարարում ե «աշխատավոր զանգվածներուց գաղափարախոս» :

Յեվ պարոն Զորանյանն այնպես և գեղդեղում իր «Անահիտ»-ի եջերից :

«Անիկի (Ահարոնյանը) ՈՒԽՏՅԱԼ ՊԱՇՏՊԱՆԻ Ե ՈՒ ԳԱՂԱՓԱՐՍԽՈՍԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԶԱՆԳՎԱԾՆԵՐՈՒՆ, ԳՑՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ, ԲՈՂՈՐ ԶՐԿՎԱԾՆԵՐՈՒՆ ՈՒ ԿԵՂԵՔՎԱԾՆԵՐՈՒՆ (լոեցե՛ք... Ա.) ՅԵՎ ԹՇՆԱՄԻՆ ԱՄԵՆ ՏԵՍՎԿ ԲՈՆՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՏԵ՛Ք. ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՈՒԴԱԿԱՆ ՎԱՐՊԵՏԸ. Ք. ՄԻՒՋԱՅԵԼՅԱՆԸ» : (Ընդգծումները մերն են. Ա.):

Ահա Խորհրդային Հայաստանի «բարեկամի» լիրիքական գեղումները, վորոնք գերազանցում են անդամ ամենազաշնակական դաշնակցականի «Հավատա հանգանակին» : Ահա Մոսիո Զորանյանի ԽՍԿԱԿԱՆ ԴԵՄՔԸ, «գրամին» իսկական յերեսը: Այդ դեմքը՝ Խորի Հայաստանի աշխատավորական գանգվածների թշնամու դեմքն ե, վորը նույն հարվածներին պետք է արժանանա, ինչ վոր դաշնակցության դեմքը, վորից վոչնչով չի տարրերվում մոսիո Զորանյանն ու իր ռամկալվարազատական կրասակցությունը: Զե՞ վոր այդ նույն ռամկալվարազատականի յերեսը, վոր 1920 թվին, զենքը ձեռքին, ամենայեռանդադին կերպով, դաշնակցության հետ միասին ճընշում եր Հայաստանի բանվորների, աշխատավոր տպատամբ զյուղացիների մայիսյան ապստամբությունը: Զե՞ վոր այդ նույն ռամկալվար կրասակցությունն եր, վոր 1921 թվին, դաշնակցության հետ միասին, կազմակերպեց փետրիվարյան արյունուավագությունը, զենքը ձեռքին և կրծքով պաշտպանելով դաշնակցության հակահեղափոխական փրոնտը: Լա՞վ ճանաչեցեք մոսիո Զորանյանին. նա մեկն ե այդ կուսակցության ակտիվ և հեղինակավոր անդամներից: Միշտ հիշեցեք այդ:

Սակայն դեռ լսենք Զորանյանին, նա շարսմակում ե իր «քննադատական» վերլուծումները տյն նպատակով, վոր աշխատավոր մասսաների աչքին թող փշելով համոզի նրանց, վոր Ահարոնյանի դրական գործը կապ չունի դաշնակցության ոսցիական մշտական պատվերի կատարողը չի յեղել և չի: Նա դրսում ե իր խմբագրած «Անահիտ»-ում . . .

«ԱՆ (ԱՀարոնյանը) կրԱԾ Ե ԱԱՑԵՎ, գաշնոկցության կուսակցության հիմնադիրներուն, մասնաւորապես Քրիստոնիոր Միքայելյանի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ, բայց ըստ իս՝ իր գրական անձնավորության կազմավորութիւն մնջ անիկա ՇԱՏ ՅԵՐԿՈՐԴԱԿԱՆ ՏԵՂ ԿԲՈՒՆԵ» (Ընդգծումներն իմն են: Ա.):

Հասկանում եք. այն ժամանակ, յերբ գաշնակցությունն ամբողջ կոկորդով հայտարարում ե, վոր ԱՀարոնյանն իր ժողովում և արյունից ստեղծված գրողն ե, յերբ «Հուսարերը»՝ վորովես իր «Խոչորագույն տեսարանի»՝ ԱՀարոնյանի ֆաշիստական մտքի «գոհարներից» և հյուսում թերթի հակառակների սրչինանոց տառերով լողունջները, յերբ դաշնակցությունն ամբողջովով իր «գրական պատրիարք» և համարում ԱՀարոնյանին, ահա այդ ժամանակ մոսիր Չորանյանը յելեր և հայտարարում ե, վոր ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ «ՇԱՏ ՅԵՐԿՈՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՂ ԿԲՈՒՆԵ» ՀԱՅԴՐԻԿ ԳՐՈՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:

Տվյալ դեպքում, նույնքան զզվելի և թշնամական է Չորանյանի դերը՝ վորքան դաշնակցությամբ, վորովհան Չորանյանը՝ արտասահմանի հայ աշխատավորների աշքից փորձ և անում թաղջնել ԱՀարոնյանի դաշնակցական-ժաշխատական գեմքը, վորից այնքան զզվել ե այդ աշխատավորությունը:

Դրա համար ավելի վնասանությամբ պետք ե մերկացնել Խորհրդային Հայաստանի «քարեկամ» մոսիր Չորսնյանի հականեղափոխական, ունակցիոն դեմքը, ՎՈՐԸ՝ ԴԵՄՔՆ Ե ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՌԱՄԿԱՎԱՐ-ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ:

ՅՈՒՑԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՅՑ
ՅԵՎ ԿՇՏԱՄԲԱՆՔԻ ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔԵՐ

Մոսիր Չորանյանն ոգովելով պատեհ առիթից, կարեսը և համարում հիշատակել իր «ցուցակ ծառայությանը» հոռելարի հանդեպ, հավանաբար հույս ունենալով ստանալ

նրա գալիքներից մի քանիսը: Յեկ նա, «Համեստորեն» թվում ե իր ծառայությունները հոբելյարին: «յերբ ան (ԱՀարոնյանը) բանտարկեցալ 1909-ին, ինքնարերարար (ի՞նչ կըսե... Ա.) դիմումներ ըրբ Փրանսական կառավարության մոտ և բնել ավել նաև դիմումներ ծանոթ Փրանսացի անձնագորությանց (ի՞նչ բարություն, ի՞նչ «մարդասիրություն»: Ա.), վորպեսզի հայ թանգաղին գրագետ մը բանտեն աղատելու համար միջամտություն ըլլաք»: Սակայն «ապերախտ» ԱՀարոնյանն այս բարության հանդեպ յերախտամոռ յեղած և և մոսիր Չորանյանին չատ վշտացուցած ե:

«Ապերախտությունը» պատահել ե այն ժամանակ, յերբ ԱՀարոնյանի և Չորանյանի դիմանագիտական «Հանճարներն» իրար են սկսել բաղխիլել:

1920 թ. Փարիզում, ԱՀարոնյանի նախագահությամբ գործող այսպես կոչված «Աղդային պատվիրակության» անդամ է յեղել նաև մոսիր Չորանյանը և ահա նա գանգսաւում է ԱՀարոնյանից և հորելյանի առթիվ կշտամբանքի խոսքեր և ասում նրան, վոր ԱՀարոնյանն իրեն և ումկավար կուսակցության այլ ներկայացուցիչներին (Թեքեյան, Բաբաջանյան, Պողոս Նուրբար և այլն) ամբաստանած եր «վարչապետ Խառիսյանին գրված քանի մը նամակներու մեջ» իր (Չորանյանի) և իր պաշտոնակիցների մասին գրելով—«աներեկակայինորին անարդանքի խոսքեր, վորոնց ինքն ալ չեր հավատար» («Անահիտ»): Սակայն, լավ ե, վոր մոսիր Չորանյանն այս անգամ գոնե «զլիսի ընկնում ե», վոր ԱՀարոնյանի այդ ամբաստանքի նամակները հետապնդում եին մի նպատակ, գարկարեկել և դուրս վոնդել ումկավարների ներկայացուցիչներին «Աղդային պատվիրակության» շարքերից և «արտաքին գործերու»ու մանալանդ դրամների տնուրինությունը կենտրոնացնել միայն և միայն իրենց ձեռքում:

Կշտամբանքը վրդավունքի վոխելով և ըստ յերեսութիւնի իր «զիվանագիտական» գործունեյության վրա ավելի մեծ կտրծիք ունենալով, Մոսիր Չորանյանը շարունակում ե կտրծիք ունենալով:

«ԱՀարոնյան այդ տարրինակ վարմունքն ունեցավ, վո-

բրոլիկենու շփացած տղու ծայրահեղության հասուն իմբ-
նամուլությամբ լիցված եր . ԿՈՒԶԵՐ ՄԻԱՀԵԾՈՂՆ ԽՇ-
ԽԵԼ . ինքզինքը կը կարծեր տհարկու դիվանագիտ մը .
ՎԵՆԻԳԵԼՈՒ մը , Պերիկլես մը , —ինչ վոր չեր . բնավ չեր
դժբախտաբար («Անաճիտ» , բնդգծումներն իմն են . Ա.) :

Ահա թե ինչո՞ւ յե վրդովվել մոսիո Զոբանյանը, վորով-
հետև Ահարոնյանը միահեծան ե իշխել, ճնշել ե ուամկալար-
ների «ազգուղուտ» գործունեյությունը և... Զոբանյանի դի-
վանապետական, — ստորաքարշության, քծնանքի, սողալու,
այնքան փորձառու ընդունակությունը:

Այդ «Հանգանքը» սակայն չի արգելում Զոբանյանին կտամբանքի իր քանի մը խոսքերեն յետք, նորեն վառարանել հայութեակենամյա արյունոտ հոբելյանը:

ՄԱՍԻՆ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ ԿԲ ՄԱՂՅԵ-

Այն պահին, յերբ դաշնակցական թերթերը լի յեն Ահա-
բոնյանի հայդուկային ինտերվենցիոնիստական ճառերով և
հողվածներով, յերբ դաշնակցության վոճիրներով հյուսված
պատմության քառասնամյակին «Հուսաբերն» իր առաջին եջը
դարձարում է Ահաբոնյանի՝ այդ քառասնամյակին նվիրված
Փաշմատական ճառովը, յերբ Ահաբանյանն իր կյանքի զա-
ռամած մայրամուտին անզամ, ամենաակտիվ դաշնակ գոր-
ծիչն ու լիդերն ե, ահա այդ պահին ե, վոր մոսիր Զորան-
յանը բռնել «Պայլի գլխին ավետարան ե Կարգում»:

Նախ քան յեղբափակել հորելյանական իր հողվածը, նա ստաժավոր հայդուկ գրչակին անում և իր մաղթանըները, վորը բաժանված ե յերկու մասի:

Մուսի Զորանյանը նախ մաղթում ե, վոր այն հայերը, վորոնք «Ահարոնյանի հորելյանական հանդեսներուն գացին ներկա գտնվիլ և զրագետ մը ծափահարել՝ զիեն ու կարդան անոր գործերը» (Ընդդժումները Զորանյանին են. Ա.) :

Այս մաղթանքը պետք է բնական համարել, վորովհետեւ
դաշնակցանների նոսրացող շարքերը՝ միաժամանակ ըն-
թեցողների նոսրացող շարքերն են՝ նոռ ոռոոններէ համար.

ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԸՆԹԵՐԳՈՂՆԵՐԸ ԳԽԱԼՈՎ այնքան են նվազում, վոր Զոբանյանը նրան, վորպես հորելյանական նվեր՝ ընթերցող է մապքում: ԱՀԱՐՈՆՅԱՆՆ այս մաղթանքից պետք է շատ դոհ լինի:

Յերկրորդ մաղթանքով մոսիր Զոբանյանը դարձյալ կորա-
կ անում աշխատավորության աշքից թագդնելու Ահարոնյա-
նի դաշնակցական դործունեյությունն ու Փաշիստական
«մարդարեյությունը»։ Իր վողջ դործունեյությամբ ԲԱՑԱ-
ՐԱՊԵՍ դաշնակցության սպասարկող, դաշնակցության հա-
մար մարտնչող հայդուկին՝ մոսիր Զոբանյանը մադրամ և
«վոր Աճարոնյանը մնա զուտ զրագետի, արվեստագետի նամ-
բուն մեջ . . . թող վաղ անցնի իր «մարդարեյի» Հավակնո-
տություններն։ Լավ արվեստագետ և ինք, բայց անհաջող
մարդարե (բնդդումները իմն են. Ա.)։

Հայութի կողմէն կուտանքանի, նախ Ահարոնյանի գրական
կործն ու քաղաքական գործը տարբեր բաներ են, և նա մաղ-
թում ե, վոր հայրուկ զիշակը միշայն գրական ճամբուն վկա-
ինտերվենցիա կազմակերպի Խորհրդային Հայաստանի դեմ.
«վաղ անցնելով» կուսակցական, քաղաքական ՆՈՒՅՆ ճամ-
բաներեն: Սակայն կոմենտարիաները Քիանդամայն ուլելորու
են:

«ՀՈՎՀԱՆՆԵՍ—ՄԿՐՏԻՉ»...
ՍԵՆԱՅԻ ԱՓԻՆ

Իր իսլամագրած «Անահիտ» ամսագրի 1931 թ. սեպտեմբերի թիվը կամացը «Քրոնիկ»-ում մուսիս Զօրանյանը քննության կառնել նաև համաշխարհային տնտեսական տաղնապահ հարցելը և անորդ գարմանման միջոցները :

«Աշխարհը հիվանդ է : Առանց վախենալու կը հայտաբերեմ մոսիո Զոբանյանը : Մարդկային պատմության ամենեն մոսայլ, խառնաշխոթ ու ախտավոր Միջաններեն ժեկուն մենք ե, վոր կապըլնք» :

Digitized by Google

«Ա, իսարհը հիմա քառոսային վիճակի մը մեջ կը դւտնիի

և անտեսական ու քաղաքական ընդհանուր կացությունը մոռայլ յերկինքի մը տակ փոխորհածույթ ծովու մը տեսարանը կը ներկայացնե» :

Ինչպես անուում եք բավական ել բանաստեղծորեն և ներկայացված անտեսական տագնապի, սակայն մոսիո Չոռբանյանին այստեղ շահագրգռութը բանաստեղծական պատկերները չեն, այլ այն ծակը կրախը, վոր այդ տնտեսական տագնապում կրում են համաշխարհային կապիտալի հայկական ներկայացուցիչները, վորոնց սնուովներն ե, վոր «մուսա» և «ստեղծագործական քոիչք» կառնե ինչը՝ յերեմելի ժերբողը : Այդ և պատճառը, վոր նրա վիշտը խորն ե և «Անսհիտ»-ի այս թիվի «Քրոնիկը» այնքան «սրտաձմլիկ» :

Մոսիո Չոռբանյանը, հայկական բութուազիայի ստորաքարչ այս մունետիկը, վործ ե անում զտնել անտեսական տագնապի յելքը և յերեակայեցեք... նա «գտնո՞ւմ ե» :

Այդ տագնապից ամենից շատ տուժող, սովամահ յեղող դաղութահայ աշխատավորությանը մոլորեցնելու, նրա աշքին թող փչելու, նրան բանլորական, բայլչեկյան շարժումից հեռու պահելու նպատակով, մոսիո Չոռբանյանը բոլորովին այլ տեղում է վորոնում վրկությունը :

Միսիոներ պատվելիների և «լուսավորչական» ավանդության վարդապետների նախանձը շարժելով, Չոռբանյան հիմքին իր գողացող ձեռներն առ յերկինք կկարկասե փրկության դուռ մը բանալու համար, նա «Սնահիտ»-ի անդուզակ եջերում ծավալված իր «Քրոնիկ»-ում միայն մի «Հրաշագործության» մեջ է վորոնում «աշխարհի փրկությունը» : և դա յե...»

«Փրկագործ յերեվումը յերկնառայ Մեսիաներու, — այսինքն մեծ հոգով, հեռատես ու նշտագետ մտելով, նրա մարտապես, արդարապես (ի՞նչ կըսէ: Ա.), իրավես մարդասեր (Աման... Ա.), հագլաղեա գերմարտերու, արտակարգ բարոյական հերոսներու, վոր չարիքը զրուպեն... և այլն, և այլն»: («Կանդ առ ով ավյուն, հանգըստացեր քիչ մը»: Հ. Պարոնյան) :

Յերկնքեն առաքված այս «մեսիաներն» ըստ «պատվիելի» Արշակ Չոռբանյանի պետք ե զսուին «Զարիքը», այսինքն իր անկման ձանապարհին այնքան զաղաղած և վերահաս պատերազմի մոխրի ու արյան ամպերում աշխարհը ինեղդելու պատրաստվող կապիտալիզմը: Ինքն ալ, յերեմնի քերթողն աղատատարած կապասե «յերկնառապաք» այն ալ, բաղկատարած և ծնկաչոք կապասե «յերկնառապաք» այն ալ, բաղկատարած և ծնկաչոք կապիտալիզմը: Երեն վերապահելով կապիտատարած կապիտալիզմի Հովհաննես-Մկրտչի «բարձր» պատիվը՝ դեղերելով Սենայի ամերին:

Ահա մոսիո Չոռբանյանի «գտած» փրկության դուռը, վորին նա հրահրում է տպավինել գաղութահայ աշխատավորությանը: Ահա, ըստ Չոռբանյանի, ինչի վրա պետք ե հույս գնեն կապիտալիստական կրիղիսի ճիշտաներում գալարվող բազմամիխոն պրոլետարներն ու աշխատավորները: Ահա կապիտալիզմի «վասկիերեան» մարդարեն, վորին զուր չե կապիտալիզմի «վասկիերեան» մարդարեն, վորին զուր չե այնքան սիրով և վոսկով են ընդունում յելքոսպական և յեկրտապահայկական կապիտալիստները:

Սակայն թող ների մեղ մոսիո Չոռբանյանը, վոր սանկ «պատիկ» նկատողություն մը բնենք: Յեկրտապական և յեկրտահայկան պրոլետարիստն ու աշխատավորությունը լավ պիտե թե ուր ե փրկության յելքը, այդ փրկությունը նա տեսնում է պրոլետարական հեղափոխության, բայց չի կոկինքի կուսակցության համար պայքարի մեջ, այդ պայքարիների պայքարի մեջ, իսկական ազատազրման և նարը միինեների պայքարի մեջ, իսկական ազատազրման և հաղթանակի միակ գրավականը: Վորքան ել կապիտալիստական հասարակակարգի «ուսյալ» վաստաբանները փորձն մոլորեցնել, վորքան ել պարոնայք Չոռբանյանները դեպի յերկինք կարկառեն իրենց անզոր բազուկները, հրանց չի յերկինք կարկառեն իրենց անզոր բազուկները, մորոնք ժամ հազողի մոլորեցնել այդ միինեներին, մորոնք ժամ առ ժամ դարբեում են համաշխարհային Հնկատմերերի հաղթանակը: Եկեւ մենք հավատագած ենք, վոր կապիտալիզմի «Քրիստոնեայ» մունետիկ մոսիո Չոռբանյանը շուտով կկանգնի հաղթանակ Փարիզի փառապահ պրոլետարիատի անեղ դատավանի առաջ:

ՅԵթե տնտեսական ռուր տագնապի մռայլ ամողերը խոժողում են հայ բուրժուազիայի մռանետիկի քերթողական դեմքը, սակայն նա կարողանում է դաշնել սրտապարար և ուրախառիթ գեղքեր, վորոնք դարձանել և սփոփել կարողանային այդ մռայլությունը։ Սփոփանքի այդ առիթներից մեկը հանդիսանում է «Հայ տաղանդներու» հաջողությունները «ոտարներու մեջ», վորոնք մոսիր Զորանյանը «կազզուրիչ յերեութիւններ» կհամարե՝ «զանազան յերկրներ ցրուած տարագիր հայության զամբվածներու մեջ»։ Նա մեծ վոզեվորությամբ և սկսում իր «քրոնիկը» պճնազարդել այդ «Հայ տաղանդներու» հաջողության համբավով։ Ասիմիլացիայի յենթարկված այսինչ յերդի «բուն հայկական ծագումը», այնինչ զաշնակահար հայուսու ծափահարություններու գումարը՝ բուրժուական մի սալոնում, «Սինան ճարտարապետին հայությունն ապացուցված» ըլլալու լուրը, զաշնակ ֆաշիստ «պրոֆեսոր» Աղոնցի «հաջողությունները» բրյուսելի համարանում, և այլն, և այլն։

Յերկրուրդ «սփոփիչ հանգամանքը, վորն ավելի յե վոզեւում մոսիր Զորանյանին, այդ... «Մարսելի Հայոց յեկեղեցին» կառուցելու «քերկրադիր դեպին ե», վորին նա հատկացնում և պատշաճ տեղ այդ նույն «Քրոնիկում»*):

Պալաքյան «սրբազնի» «յեռանդում նախաձեռնության» և Փաշիստական «Հառաջ»-ի Փինանսավորող ու շեֆ մեծահարուստ պարոն Վահան Խորսանճյանի «ազգասիրական առատաճենության չնորհիվ», Փրանսահայ բուրժուազիան Մարսելում կառուցել ե ստի, կեղծիքի, շահագործման մի

*) «Քրոնիկ» բաժինը մոսիր Զորանյանի հավատամբ բաժինն և «Անտիբա»-ում, ուր ամեն անդամ նա հանդես է զալս իր «Հեղինակավոր» կարծիքը հայունելու տնտեսական, քաղաքական, հասարակական, դրական հարցերի շուրջը, մռացության չտալով չյերկելի աղքայնոց» մահերու, ամուսնություններու և հորելյաններու «տիրատիթ» և «բերդաթիթ» լուրերը։

նոր «ամլոց» ։—«Ելարսելի հայոց յեկեղեցին»։ Այս առթիվ ե, վոր մոսիր Զորանյանը վողերության գաղաթ-նակետին և հասել և ընկել լիրիքական զեղումների բարձր եքստագի մեջ։ Նա փոռարանում և «ազգային ինքնատիպ քաղաքակրթության մշտական պերճախոս փրոփաքանդը»—այդ յեկեղեցին։ Այսինքն ֆրամահայ կապիտոլիզմի շակերի անդախան և «մշտական պերճախոս փրոփաքանդը»։ Ֆրամահայ բուրժուազիայի այդ նորակառույց յեկեղեցին՝ ինչ խոս, վար կիմի համաշխարհային ֆաշիզմի կրոնական հրամանատարության «քարձը» և «վողորմած» հովանավորության ներքո։ Այդ յեկեղեցին կիմի մարսելահայ աշխատավորության մնշման մի նոր գեն։ Այդտեղ իհարկե ամենից առաջ աղոթելու յեն, բայց լունք թե ինչ են աղոթելու—

«Ի՞նչ ե անում յեկեղեցին մեր որերում։ Նա իհարկե ամենից առաջ աղորում է։ Յորկի և Կենտերերի այն յեպիսկոպոսները, վարոնք ինչ վոր «հաչակրաց արշավանդի» պես մի քան բարօգեցին հորիդային Միուրյան դեմ—այս յերկու յեպիսկոպոսները նոր աղորք հորինեցին, վորի մեջ անգլիական շողնկորությունը եկամատած կերպով շարտարություն և կազմված «Հայր մեր» աղորքի ձեռու։ Յեպիսկոպոսները այսպես են դիմում ասուն։

«Ինչ վերաբերվում է մեր կառավարության քաղաքականության վարկն ու անդորրությունը վերականգնելու նկատմամբ—բռող քո կամքը կատարվի։

Ինչ վերաբերվում է այն ամենին, վոր նախաձեռնվում և Հնդկաստանի ապագա կառավարման կամակարգմանը,—բռող քո կամքը կառարկվում է գիւնաթիման առաջիկա կոնֆեյտանին և այն ամենին, վոր նախաձեռնվում և ամրող աշխարհում խաղաղություն հաստատելու համար,—բռող լինի քո կամքը։ Ինչ վերաբերվում է առևտին, վարկին, վառակառյան և փոխարարականի վերականգնելուն,—մեր ամեն որվա հաց դարձ հակառի վերականգնելուն,—մեր ամեն որվա հաց

սուր մեզ այսոր : Բոլոր դասակարգերի համազօրծակցությունը ընդհանուրի բարորության համար ,—մեր ամեն որևա հացը սուր մեզ այսոր : Յերե մենք մեղավոր ենք յեղել մեր ազգային հպարտությամբ և ավելի քան բալարպություն ենք զաել ուրիշներին գերիշխելու մեջ և նրանց չենք ոգնել ըստ մեր ուժերի ,—ներիր մեզ մեր պարտքը : Յերե մեր գործերը կատարելիս մենք մեզ ենք սիրել և մեր ու մեր դասակարգի շահերը բարձր ենք դասել ուրիշների շահերից ,—ներիր մեզ մեր պարտքը» :

(Մ . ԳՈՐԿԻ)

Այս «Հոգեպարար» աղոթքն ե բղիսելու նաև Մարսելի յեկեղեցու «Հայկական սուրբերի» ինկարույր մթնոլորտում և այս հանդամանքն ե , վոր այնքան վոգեսրություն ե ներշնչել մոսիր Զորանյանին՝ տնտեսական տաղնապի «տիտոր» գրությանից հետո : Այդ և պատճառը , վոր յերբեմնի քերթողն ամենայն վոգեսրությամբ ճոճում ե իր հրապարակադրի բուրժան այս նորակառույց յեկեղեցու կապիտալիստական խորաններում :

Սակայն մոսիր Զորանյանը վրդովված ե , վոր այդ յեկեղեցին կառուցված է հարուստների թաղին մեջ : Բուրժուագիայի կամակատարն իր վողջ եյությամբ հանդես ե յեկել : Հիրավիի , Հարուստներին , կապիտալիստներին ի՞նչ հարկավոր ե յեկեղեցին : Չե՞ վոր կեղծիքի և շահադորձման այդ «սրբազն» վոստայնը կառուցվում ե աշխատավորական ժամաներին կեղենքելու , նրանց՝ ի շահս բուրժուագիայի՝ ճգմելու , քամելու համար : Այդ և պատճառը , վոր միշտ յեկեղեցիների «բարձր հովանավորության» ներքո , այդ յեկեղեցիների կողքին կառուցվում են նաև «Ճխական դպրոցներ» , վորոնք կոչված են մանուկ սերնդին դաստիարակելու վորան կալիստական հասարակակարգի ստրուկներ և կամակատարներ : Այս առթիվ ե ահա , վոր մոսիր Զորանյանը խիստ վշտացած ե և քննադատում ե մեծահարուստ հայերու այս «աղդողուտ» ձեռնարկության «տեխնիքական սխալները» :

Կանդ առնելով այդ հարցի վրա՝ Զորանյանը գրում ե —

«Միակ դիտողությունը զոր կը նանք ընել . այն ե , վոր փոխանակ այդ յեկեղեցին Մարսելի ամեննեն հարուստ քաղին մեջ կառուցելու , լավագույն պիտի ըլլար զեել քաղին մեջ կամպնել նաև դպրոց մը : » Այս նախկեղեցվոյն բավ կամպնել նաև դպրոց մը : «Մեր նախկեղեցվոյն ու զպրոցը միասին կը հղանային ու կինիքն յեկեղեցին ու զպրոցը միասին կը հղանային ու կինիքն յեկեղեցին Զորանյանին : Հուսանք , սակայն , վոր այդ պակասը կը լրացնի որ մը թե Մարսել , թե Փարիզ : »

Աչա հայ կապիտալիզմի հայատարկմ մունետիկը , աչա բուրժուազիայի սուրբաթարը կամակատարն իր վողջ մերկությամբ , վորին՝ վամանք հավակնություն ունեն Խորհրդային Հայաստանի «բարեկամը» կոչելու :

ՄՈՍԻՐ ԶՈՐԱՆՅԱՆ !

ԽՆՏԵՐՎԵՆՑՈՒԽՈՆԽԱԿԱՆ ԶԵՐ ՇՔԱՆԴԱՆԸ

«ԲԱՐՈՎ ՎԱՅԵԼԵՔ» !!!

Գուցե . գտնվեն մարդիկ , վորոնք վրդովվեն մոսիր Զորանյանի մասին մեր կողմից այսպես աննպաստ արտահայտվելու առթիվ , գուցե լինեն մարդիկ , վորոնք մեղագրեն մեզ , վե ինչու «արտիստ մը վիրավորեցինք» : Մեզ բնավ չի հետաքրքրում այդ պարոնների վրդովմունքն ու սրանեղությունը և մենք անհրաժեշտ ենք գտնում պրոլետարական , աշխատավորական զանգվածների , մեր մտավորականության առաջնարկացնել մոսիր Զորանյանի հակախորհրդային . ինտերվենցիոնիստական գենքը :

Մեզ թվում ե , վոր Խորհրդային պլատֆորմի վրա կանդնուծ մեր մտավորականությունը՝ թե Խորհրդային Հայաստանում և թե մանավանդ արտասահմանում , վճռականակես հանդիս կդա մոսիր Զորանյանի վոճրագարար գործունեյության վերջին ակտի առթիվ , վորի մասին ուզում եմ յերկու խոսք ասել :

Հանդածանոթ վաստ ե , վոր Խորհ . Միության արևմտյան սահմանների մաս , անդլո-վրանսիական իմպերիալիստ մը տենդազին կերպով հակախորհրդային պատերազմի պատ-

բաստություններ և տեսնում : Ծումինիան այդ պատրաստությունների «ծաղկալ» թաներաբեմերից մեկն և հանդիսանում և ինտերվենցիայի հիմնական մի ամրոցը : Փաստ ե , նաև այն , վոր «նորին մեծություն» ոռոմինական կառավարությունը վոչ մի կերպ չի ուզում Առք . Միության վրա չհարձակվելու պայմանագիր ստորագրել : Փաստ ե նաև այն , վոր առանձնապես վերջին շրջանում , Ծումինիայում և Հեհառտանում սկսվել և հակախորհրդային պլուղոկացիայի և ինտերվենցիոնիստական գործունելյության չտեսնված աշխուժություն : «Ներկա մոմենտում փորձված ձեռքով ծավալված ե նոր կատաղի կամպանիա ԽՍՀՄ դեմ , վորը մանավանդ կազմակերպված կերպով մղում են ոռոմինական , մասամբ ել ֆրանուական մամուլը»—զրում և «Բղլեստիան» : Սպիտակ գվարդիական թափթփուկների հավաքագրումը լեհաստանում և Ծումինիայում նույնպես ակնհայտնի փաստ ե , վորը հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման ակտիվ մոմենտներից մեկն և հանդիսանում :

Յեկ ահա , այս «բարեպատեհ» առիթին ե , վոր գարնան ծիծեռնակի պես բուքրել և ժամանում պարոն Արչակ Զորանյանը «Հայանպատ» իր գործունելյության , ինչպես նաև «բարեկենդանյան տոները» Ծումինիայում անցկացնելու համար :

Այս այցելության հղացողն ու նախաձեռնողը՝ Բուքրեշում կազմակերպված , այսպես կոչված «հայ մշտկույթի բարեկամներու խմբակն» և , դաշնակցական մի նոր վիճակածք , վորի զբուխը կանգնած և հայկական Փաշլղմի վոչ այնքան անձանոթ «Ըլեմք» , «Քերթող» Հ . Ճ . Սիրումին : Մոսիր Զորանյանին հրավիրելու առիթը՝ «Հայկական մշակույթը ոռույցը ազգին ծանոթացնելու փափագն» յեղած է :

Մոսիր Զորանյանի յելույթը ՇԱՏ Դիմիր Ե ՅԵԿԵԼ ՌՈՒ ՄԻՆԱԿԱՆ ԿԱՐԼՈՍ ԹԱԳՎԱՐԻՆ , ՎՈՐԼ ԶԻ ԶԼԱՅԵԼ ՆՐԱ ԿԱՄԻՐԾՔԸ ԶԱՐԴԱՐԵԼ ՌՈՒՄԻՆԱՅԻԱՆ «ԱՍՏԳԻ» ՇՎԱՆՃՄՆՎԱԾ : Իսկ ոռոմինական նախարարապետ պլուֆեսոր Յորկան մեծ վոգերությամբ «բարեկենդանյան հանդեսներ» և սար-

քել բուրժուական մանկացվիկի պատցին , ուր նույնի մասաւել հավաստիացնել մոսիր Զորանյանին , վոր իմարերիալիստական ինտերվենցիայի չորհիվ—«Հայերը որ մը պիտի կարենան հավաքվել իրենց մայրենի հողին վրա» : Զմուռնանք ասելու , վոր ոռոմինական Փաշլղմական պատրաստությունը շքանշանի հետ միաժամանակ Զորանյանին դարդուել ե նաև «Հրամանատարի» տիտղոս :

Միայն քաղաքական կրկնակի կույրերը և դաստկարգային թշնամու ազնաւոնները կարող են «միամատրեն» հավատալ , վոր Մուռինիայի թագավորի շքանշանը գրաւ «գրական» նպատակներ և հետապնդում , վոր Մուռինիայի թագավորին շատ են դուր յեկել Զորանյանի աշքերը , նրա քերթվածներն ու «հայանպատ» գործունելյությունը : Դժբախտաբար մենք ձեռքի տակ չունենք մոսիր Զորանյանի՝ Մուռինիայի «պալատական» յելույթների նյութերը , ոտիկայն վոչ մի կասկծայն մասին , վոր այդ նյութերն ամբողջովին նվիրված են Մուռինիայի ինտերվենցիոնիստական գործունելյության կազմակերպման «Հաջողություններին» և վոր Զորանյանը «Հայ ժողովրդի» անունից իր ծառայություններն ե խոստացել Մուռինիայի ինտերվենցիոնիստական գործունելյությունը , վորպես հատուցում ստանալով «արքայական» շքանշան ու «Հրամանատարի տիտղոս» : Մենք այս բանում համզված ենք :

Յեկ այսպես մոսիր Զորանյանը հռչակված և ֆուշտական Մուռինիայի «Հրամանատար» և կարգարել և իր կուրծքը ինտերվենցիոնիստական արյունաց շքանշանով : Այս առթիվ ուսմկավար-ազատական մամուլը և համկավեօ Փարիզի «Ապարան» ցնծության և վոգերության մեջ է : Այս առթիվ և , վոր Փարիզի ուսմկավար-ազատական լիլերները հատուկ մի թեյասեղան են սարքել , ի պատիվ մոսիր Զորանյանի շքանշանի և տիտղոսի : Նկարագրելով այդ թեյասեղանը , Պոլսի «Նոր Լուր» թերթն ի միջի այլոց գրում ե .—

«Ներկա եյին վաթումի մոտ ահճեր՝ երկու սեռներ ալ ,

մասնավորապես գրական և գեղարվեստական աշխարհնեն:

Խոսեցան Հ. Յերվանդ, Ա. Դարբինյան, Սարուխան, Տքթ. Վ. Թորգոմյան, Դավիթ Բեկ, Պ. Եսմերյան, Ա. Խաչատրույան, Վ. Թերեյան, Հայր Հովհաննեսյան*), Բրոֆ. Աղաջանյան և Տիկին Բուռողյան, ամբողջն ալ անդրադառնալով պ. Չոբանյանի գրական և հասարակական մարդկու մեջ մատուցած մեծ ծառայության: Պ. Չոբանյան պատասխանելով՝ ամենուն, չնորհակալություն հայտնեց իր անձին մասին ցույց տրված այս համակրական ցույցին և ըստի. «Իումանիկ քազավորին կողմետ տրված պատվանշանը յես կը նկատեմ իմ անձես ավելի ուղղված պատիվ մը հայ մշակույթին, վորուն մասին ավելի լավ տեղեկություններ կրցալ ունենալ ուսմանական աղնիվ ժողովուրդը, իմ բանախոսություններուս առթիվ, մինչ հայ ժողովուրդը ցարդ ճանչած եր իր խելացի և առեւտրական ժողովուրդ»:

Իր թեյաճառի մեջ ել, մոսիո Չոբանյանը փորձում և «միամտորեն» կլեցնել, վոր Փաշխտական չքանչանն ու տիտղոսը միայն «ի պատիվ հայ մշակույթի» յետրված իշխն: Յեվ թեյասեղանի շուրջը համախմբված հայ բուրժուալիսայի ու կղերականության ներկայացուցիչներն ել սրտադիմ և նույնքան «միամտորեն» ծափահարում են ուսմինական Փաշխտապետության լիրիքական այս վերաբերմունքը՝ դեռ պի «հայ մշակույթը»: Սակայն պարտնայք Չոբանյանները զուր են փորձում թող փչել աշխատավոր մասսաների աչքին:

Ռամկավար-ազատականների և նրանց քերթող մունետիւնի դիմակը վերջնականապես պատուված և և նրանց ինտերուվենցիոնիստական գարշելի դեմքը պարզ յերկում և ամենակարծատեսների համար անդամ:

Սակայն յերկու խոսք՝ մեր «բարեկամ» Չոբանյանին:

*.) Հեղինակ «Հայրենի կրակարան» Փաշխտական դրեի: Տես մեր Հոգվածը ներկա գրքի 31-րդ էջում:

Մոսիո Չոբանյան!

Այն որերին, յեր դուք Ռումինիոյում վայելում եյիք «քարեկենդանյան» խննույցներ և ձեր շքանշանի բաղը ըմեղքամիսն» եյիք ապրում, այդ որերին (և յերկար տարիների լիքացնում), Ռումինիայի (և վող կապիտալիստական աշխարհի) բարբարոս բանտերում, դժոխային տանշանքների մեջ, գալարփում եյին հազարավոր և տասնյակ հազարավոր անմեղ բանվորներ ու գյուղացիներ: Զեր սիրած Ռումինիայի քանտերում այդ տանշանքները գերազանցում են միշտադարյան ինկվիզիցիայի բոլոր «երբուրյուններին»: Այդ բանտերում զագանարար խոշտանգում են կապիտալի անմեղ գոհերին, շին կացրած յերկարներով այրում են նրանց մարմինը: Դուք կարծեմ զգում եք այդ մարմինների այրման ներքանուը:

Այդ բանտերում պոկոսում են բանվորների և գյուղացիների մազերը, ջարդուում նրանց մարմնի մասերը: Դուք կարծեմ լա՞վ եք լսում նրանց ցաման հառաչը:

Այդ բանտերի անմեղ գոհերից մեծ մասը ֆիզիքական տանշանքներից խելազարվում են:

Դուք լսում եք փաշխտական արյան դիկտատորայի այդ գոհերի, խելազարների սասանցնող հոնոյունը: Այսո՛, լսում եք:

Զեր զգայարանները չեյին կարող փակվել ուսմինական շքանշանի և «իրամանատարի» տիտղոսի փայլով:

Մոսիո Չոբանյան!

Դուք գիտե՞ք, վոր ձեր ստուգած շքանշանը «լուսկեզածված» և այդ հազարավոր գոհերի արյամբ, ձեր «իրամանատարի» կոչման մեջ խոացած և հազարավոր խելազարվածների մահու հոնոյունը: Այդ դուք լա՞վ գիտե՞ք: Այդ են հշուարտություններ:

Յեվ այօպես:

Այն Չոբանյանը, վորը կուրծք եր ծեծում խորհրդային

Հայաստանի «ամենագույքան» համար, վորբ յեր-
բեմն փորձ եր անում դաշնակներին «կըտամբելու», իր թէ
Սորհրդային Հայաստանը «պաշտպանելու» համար, այժմ
հակախորհրդային ինտերվենցիայի հայրենիքում, ստորա-
քարչության և քծնանքի իր անմըցելի վարպետությամբ,
շքանշաններ և տիտղոսներ և վաստակում: Բարով վաստակի:

Մեր Խորհրդային մտավորականությունը Զորացնյանին
մի խոսք ունի միայն ասելու: —

Մոսկա Չորսնյան!

Խնտերվենցիոնիստական ձեր շքանշանը «քարով վայե-
լել»:

Գարդարեցեք ձեր սնափառ լանջն այդ արյունու ու գար-
շելի խաղալիքովը. ուստինական չերամանատարի» ձեր կո-
չումովը հակատարիմ կերպով հսկեցեք փաշիստների շքա-
դոնները, քննանեով սողացեք համաշխարհային սպանդ կազ-
մակերպողների, հակախորհրդային ինտերվենտների գարշա-
պարի շուրջը:

Կհնչի ժամը, յերբ Փրանսիական պրոլետարիատը,
Փրանսահայկական պրոլետարիատը, արդարությամբ կհա-
տուցի ձեզ՝ ձեր շքանշանի արյան գինը:

Յեկ այդ ժամը մոտ ե:

1932 թ., ապրիլի 8.

ՄԵՌԵԼԱԿԱՆ ԾԱԼԻԿՆԵՐ

Ա.

Քանիվոր գասակարդի և սոցիալիզմի կառուցման մեր յերկ-
րի ամենավոխերիմ ու արյունուշտ թշնամի հայ Փաշիստների
կուսակցությունը, դաշնակցությունը ոգտազործելով ամեն
միջոց, բոլոր զծերով որհասական պայքարը և մզում մեր դեմ:

Խորհրդային Միության անբաժանելի մասնիկը կաղմող
Խորհրդային Հայաստանի տնտեսական ու քաղաքական խո-
շորագույն նվաճումներն ու արագատեմպ առաջխազացու-
մը, —սոցիալիստական արդյունաբերության նորանոր հոկա-
ների կառուցումն ու ավարտումը՝ յերեկով մահու ու կոր-
ծանման յերկրում, գյուղի սոցիալիստական վերակառուցու-
մը, համատարած կոլեկտիվացման հիման վրա կապիտալիզմի
արմատների վոճաչացումը՝ պարզ և վոր զրկում են հայ բուր-
ժուղիայի մարտական կուսակցությանն ամեն հենարանից,
հետևաբար և սաստկացնում նրա մահամերձի ընդդիմուլու-
թյունն ու պայքարը:

Այդ և պատճառը, վոր հայ Փաշիստների կուսակցու-
թյունը միջնորդի մեջ վոչ մի խորություն չի գնում խան-
դարելու սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում:

Վորպես անգլո-Փրանսիական իմպերիալիզմի ստոր կա-
մակատար, նա մի կողմից հանդես է գալիս Խորհրդային Մի-
ության հարավային սահմանների, Բանգի նավթին մոտիկ,
ինտերվենցիոնիստական զործողությունների ակտիվ կազ-
մակերպչի իր դերում, համերաշխառության ձեռք կարկառելով
քուրդ շեյխերին ու բեկերին, միավետականության զառամ-

յալ բեկորներին և ամեն գույնի սև ուժերին։ Մյուս կողմէց՝ նա յերկրի ներսում, հենված կուլակության վրա՝ ամեն միջոց ձեռք և առնում խանգարելու սոցիալիստական մեր արշավը։

Պայքարի զենքերի և միջոցների մեջ նու վոչ մի խարություն չի դնում։ Սկսած անդիմական ու ֆրանսիական թշնամնոթներից ու զնդակներից՝ մինչև մեր յերկրի ներսում վիասարարական կազմակերպությունները, զեղին մամուլի որպարտություններից մինչև «գեղեցիկ խոսքի» հրեականությունները, այդ բոլորն անխոտիր, նա սպասարկության և գնում սոցիալիզմի կառուցման և բանվոր գառակարգի Հաղթական արշավի դեմ։

Գեղութիւնստական գրականությունը նրա պայքարի կարևոր մարդերից մեկն և և բոլորովին պատահական չե, վոր դաշնակցական այնպիսի կարկառուն լիդերներ, ինչպիսիք են պարոնայք Վլացյանը, Խատիսյանը, Նավասարդյանը, Աղբայանը, չափազանց չատ են զբաղվում գրական հարցերով։ Յեկամական և առաջարկային հայտապետական գրական հարցերով։ Ել չենք խոսում քաղաքական մուրացիկ, սոսահաւոր յիշերամայր Ավետիք Ահարոնյանի, պոռնիկ, պնտիկայեց Կոռան Զարյանի և դաշնակցական մառլերի ու մտրակի հերոս Վաւագյանի մասին։

Ինք պարոնայք Վլացյանը, Խատիսյանն ու բնիկերությունն իրենց զեկուցումներով ու հոգվածներով, և թե՛ գաշնակցական բոլոր թերթուկներն իրենց խարդախ, ստոր ու նենդամիտ հողվածներով, ազաղակաւմ են այն մտախն, վոր իր թե Խորհրդային Հայտառանում, բայլշեկիները «կործանում են» հայ գրականությունն ու արվեստը։ «Ծահագրգրուած» այդ գրականության նվաճումներով՝ նրանք իրենց ընթերցողների ուշադրությունը մորիլիցոցիւրի յեն յենթարկում «վանդալ» բայլշեկիների զեմ, փրկելու համար «հայրած արվեստը» կործանումից։

Հայտառանի պրոլետարական գրականության վարկաբեկումն ու այլանդակված ձևերով ներկայացնելը, այդ գրա-

կանության դեմ ամենալկտի ձևերով պայքարի ծավալումը, դաշնակցական գրչակների չհանապազորյա հացն» ե։ Անկեղծորեն սոցիալիզմի կողմն անցած ու նրա համար պայքարող «ուղեկից»-գաշնակից զրողներին քաղաքականապես վարկաբեկելը նրանց «սրբազն» պարտին ե։ Իսկ դեռևս տառանումների մեջ տարուբերվող գրողներին շոյել ու գրավելու փորձեր անելը՝ նրանց քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկն ե։

Հանձինս պրոլետարական գրականության՝ պայքարելով բանվոր դասակարգի գրականության դեմ, նրանք միաժամանակ առաջ են քաշում իրենց բուրժուական, աղդայնական գրականության զարգացման հնարավորություններ նվաճելու իրավունքը՝ խորհուրդների յերկրում։ Շատ «միամիտ» կերպով, կուրծք ծեծելով և, յերկրպագելով «մաքուր արվեստի» կուռքերի առաջ, նրանք պահանջում են, վոր պրոլետարական գիկտատուրայի պայմաններում «ազատ խոսքի», «ազատ արվեստի» իրավունք տրվի։ Այսինքն՝ արտօնվի դաշնակցական գրչակներին, աղատորեն, «մաքուր արվեստի» միջոցով, ստեղծագործելով ինտերվենցիոնիստական, հակահեղափոխական, բուրժուական, անկումային իրենց արվեստը։

Յեկ «Հայրենիք»-ը փրկուրը բերանին՝ իր խմբագրականում աղաղակում ե։

«Այս պարոնները (խոսքը պրոլետարողների մասին ե. Ա.) կերեի դեռ չեն հասկացած, վար գրականությունը չի կրնար զարգանալ յերկրի մը մեջ, ուր ստեղծագործական միտքը ազատ չե»։

Յեկ վարովհետեւ Հայտառանում, ըստ պարոնայք դաշնակների «ստեղծագործական միտքը» (կուլակային, գաշնակցական. Ա.՝) ազատ չե, ուստի—

«Դժվար թե Հայատանի մեջ նորեն կարենա ծագիլ հայ գրականությունը և երազարակ գան ԱՄԲՈՂ ՀԱՅ ՑԵՐԿԻՆՔԸ ԼՈՒՍԱՎՈՐՈՂ ԱՍՏՂՈՐ»։

Իսկ ըստ պարոնայք դաշնակների, հայ գրականությունը

ժիայն ծաղկում և արգասավորվում ե իրենց բաստանում և
«ամբողջ հայ յերկինքը լուսավորող» ասողերը ճանձանչ են
առնում իրենց «ստեղծագործական հանձարից»։ Մի փոքր
հետո, մենք առիթ կունենանք ծանոթանալու այդ «ծաղիկնե-
րից» ու «աստղերից» մեկի հետ։

Դաշնակցական գեղարվեստական գրականությունը հա-
րազատորեն արտահայտում ե իր կուսակցության և դասա-
կարգի գործելակերպի ու դրության վողջ պատկերը։ Նա
դեղարվեստական իլլյուսարացիան և հայ բուրժուալիսի և
նրա կուսակցության վողջ եյության։ Դաշնակցական բոլոր
սպառաված քնարները և վողրասաց ջութակները, դրամատի-
կական վրիպած պատկերներն ու վիպական պաստառները,
քննադատական յերեմն հայրուկային և յերեմն «դիվանա-
գիտական» հարձակումները միայն մի նպատակի յեն ձըդ-
տում—կատարել հայկական Փաշիզմի սոցիալական ուսուվե-
րը։ Այդ և պատճառը, վոր «ամբողջ հայ յերկինքը լուսավո-
րող» ասողերի Փաշիստական գրականությունը մի կողմից
Հանդես և զալիս Խորհրդային Միության գեմ իմպերիալիստ-
ների և դաշնակցության կողմից պատրաստվող ինտերվեն-
ցիան «գեղարվեստորեն» իիմնավորելու, մյուս կողմից՝ «գե-
ղարվեստական» հրեշտակոր մեթոդներով, նաև «ծանոթացնում»
և ընթերցողներին՝ մեր յերկրի «դրությանը», «կործանման»
«փաստերին» և յերրորդ կողմով՝ ցուցաբերում բուրժուա-
կան արվեստի իրենց անկման ու նեխածության վողջ պատ-
կերը։

Այսոր այդ յերրորդ կողմի մասին ե, վոր աղիսի խո-
սենք։

Ինչպես վերևում ընդգծեցինք, դաշնակցությունը դըտ-
նում է, վոր մեզանում գրականությունն ու արվեստը խոր-
ակվում են և «հայ գրականության» «փրկության» «ծանր
պարտականությունը» մնում ե իր մաշված ուսերին։

«Հայրենիք»-ի մի այլ առաջնորդողը պնդում է, վոր մի-
այն իրենց հովանու տակ ե «վոր կմշակվի հայ նՈՐ գրակա-

նությունը»։ Գոհանալով, վոր արտասահմանի հայությունը
հնարավորություն ունի վայելելու իրենց՝ «Հայ նոր գրակա-
նության» պատուղները, «Հայրենիք»-ի խմբագիրները, կոկոր-
դիլոսի արտասուրբն աչքերին և «համահայկական խոր վշտով»
ցալում են խորհրդային յերկրում դունկող «հայերու» հո-
մար, վորոնք զրկված են այդ գրականության «ՍՆՈՒՆԴԵՆ
ԱԲ ՎԱՅԵԼՔԵՆ» (sic!)։

Եեկ «Հայրենիք»-ի խմբագրականը, ցալ ի սիրու, ար-
տավախան աչքերով շարունակում ե—

«Յեթե խորհրդային «դրախտին» մեջ աճեր ֆիչ քե
շատ արժեք ունեցող հայ գրականություն մը, այն ասեն
տակալին կարելի յեր չափով մը թերեւ հաշումիւ այն
տիրուր վաստին հետ, վոր խորհրդային հայությունը մշա-
կույթային տևակետով ևս կտրված և գաղութներեն և
գլիված արտասահմանի (այսինքն՝ գաշնակցական։ Ա.)
հայ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՈՒ ՍՆՈՒՆԴԵՆ ՈՒ ՎԱՅԵԼ-
ՔԵՆ»։

Ինչպան ել գաշնակցական Փաշիստական խմբագիրների
լրբությունն ու վրապատճենքը սահմաններն անցնեն, այնու-
ամենայնիվ նրանք ժիմել չեն կարող այն խորագույն
նվաճումները (թե վորակական և թե քանակական), վոր ձեռք
և բերել Հայաստանի պրոլետարական և «ուղեկցային», գաշ-
նակցային զրականությունը վերջին տասնամյակում։ Սա-
կայն այդ մասին մենք այլեւորդ ենք համարում ժամանակ-
լինել, վլաելու «Հայրենիք»-ի ստոր զրպարտանքների դեմ։
Վլելի լալ կլինի, ընթերցողի հետ միասին, մի փոքր ճաշա-
կենք Դաշնակցության «ՆՈՐ» «գրական արժեքներու սնունդ»
ու վայելքը»։

Այդ նպատակի համար մեղ բավական նյութ կտա զաշ-
նոկցության յերիստասարդ հեղինակներից՝ զարու Վազգեն
Շուշանյանն՝ իր «Ամրան գիշերներ» խորագիրը կրող զրքավ,
վոր հրատարակված և դաշնակցական մարտական թերթուի

«Հուռաբեր»-ում, և ապա առանձին գրքով, վորակես նրա «մատենաշարը»:

Դաշնակի հայդուկ գրչակներից մեկը, քննադատի դափնելսակի հավակնություն ունեցող Հայ Գնդունին, «Հոյրենիք»-ում, Վաղեն Շուշանյանին համարում և «ոժտվածներու», «ընտրյալներու աղջոր փաղանգի»^{*)} ներկայացուցիչը և նրան հակադրում և Խորհրդային Հայաստանի հեղինակներին ու դրս կանությանը:

Դժվար է վորոշել, թե վ. Շուշանյանի «Ամրան զիշերսներ» դիրքը գրական ի՞նչ սեռի յև պատկանում: Նա մերթ արձակ բանաստեղծություն եւ, մերթ նովելլ, մերթ՝ հուշտեսրի եջ, եւ այլն: Բայց բոլոր զեպքերուն և ի նա հաղեցված և յինիդամի, բույրվարայնությամբ, պուռոգրաֆիայով, սեռական հիմանդրվին պատարագիայով, զառանցանքով, նեխավածությամբ: Ենիվ բոլոր զեպքերում ել նա չափազանց հատկանշական եւ բուրժուական արվեստի նեխմանն ու քայլայմանը: Երա լավագույն անդրագարձումը:

Դրբի բոլոր եներում ձեզ հետ խսում եւ բուրժուական րարեցի գարշելի ճախճախութը: Բոլոր զեպքերում հեղինակը և նրա «արու» ընկերները, բուրժուական հասարակակարգին վայել, սեռական անասնական հակումներով վորոնում ու ըմբռչնում են հեշտամատուց «փուրյունը»:

Մի շարք նովելլներում հեղինակը «զեղարվեստորեն» կապարդում և Փարիզի կաֆեների ու փողոցների գիշերները: «Սիրային» ժամեր ու հանդիպումներ:

Հեղինակը կաֆեյում, ուր իր «եղ» սեղանակցի— «Համբույրը կիյան բերնի վրա, բրբռուն ծաղկի մը պես»:

Միաժամանակ ապրում եւ իր «խոհերը» և յերեակայում այլ հանդիպման յերեկոյի հեռանկարը:—

«Փոքր ու զաղտնի գգլանքներ սեղանին առկ, իետա կցում անառնի պես»:

Հեղինակը չէ խայել զու մի գույն բուրժուական բույր

վարային ընթերցողին բավարարելու, այդ զույգերի «սիրո» խոսակցության մեջ, վորքան հնարավոր և վողոցայնություն մացնելու համար: Իր խոսակցուհուն նկարագրելիս հեղինակը բոլոր դեպքերում ասում եւ— «ան իր եղի անուշ ձայնովը», մի եղի անուշ աչքերը», իր եղի հայլածքը», «իր եղի դիրքով» և այլն: Շատ հատկանշական եւ այս բուրժուական բարոյականության և արվեստի համար: Խոսակցության ամբողջ ընթացքում, զույգերն յուրաքանչյուր նախադասություն սկսում կամ վերջացնում են «իմ չար սիրելիս», «իմ պատիկ սիրելիս», «պատիկ եիմար», «չար, պատիկ եիմար», «պատիկ անառակ», «չա՛ր, չա՛ր, պատիկ սիրելիս», «չա՛ր, չա՛ր իսենք սիրելիս», «պատիկ պապուշ» և այլն խոսքերով: Սա իհարկե, հեղինակի «պատիկ» կամ մեծ ապուշ լինելով չէ կարելի բացատրել, բուրժուական հասարակայնության կենցաղի անդրագարձումն եւ այս: Բուրժուական փողոցային, կաֆե-շանտանային «սիրը» քաղցրացնող համեմունք: Այդ և պատճառը, վոր զրքի մի մամուլում (16 եջ) 46 անգամ գործածված են վերոհիշյալ «քաղցր» դարձվածքները:

Ապա շարունակվում եւ կաֆեյի իրենց կյանքը: Հեղինակը պատմում եւ—

«Կիրի մը արագուրյամբ կը տեղակորվի քովս ու իր գդաշնուն բերԱնը կերկԱրե ինջի, ՊօՏիկ ՊօՏիկի Մը ՊօՏի:

«— Մարտ եմ, պատիկ սիրելի, —կըսի մմահան:

«— Ապսպիք:

«— Սպասյակ, բայս գարեջուր մը, —կըսի եղի իր առուշ ձայնովը»:

Ապա, աղջիկը գանգատվում եւ—

«— Իրավ չար ես այս զիշեր»:

«— Կուգե՞ս զիս համրուրել, —կըսիս բնիւշ, — կուգե՞ս:

«Ու իր համրույրը կիյան բերնիս տմւյունը:

«— Հո՞ս, — կըսիմ, — հո՞ս, — մատուխ գպելով շրմուս, — հո՞ս:

^{*)} Փառական գործություն, գունդ: Ա.:

«Աւ իր համբույրը կիյնա քելնիս վրա» :

Կտֆեյի յերեկոն ավարտելով, —

«Մեզմորեն մազերը նետեց յետ ու աչքերուս նայելով համբուրեց զիս: Հետո քարձրացանք ու կողք-կողքի, գրեթե զրկված յելանք դուրս» :

Ապա Փարփիկ փողոցներով անցնելով, «դործե դարձող պղտիկ պոռնիկներու» «որվան շահը» հաշվելով, նրանք գնում են գետափ, ուր—

«Նստավ ծունկիս վրա,— տառմ և հեղինակը, — մազերը խառնված մազերուս և քեզ նետած դարանցիս» :

Ու յեր—

«Իր համբույրը զերմուրյամբ կիյնար քերանիս վրա,— պատմում և հեղինակն իր ընթերցողներին, նրանց և մոռենում «յերրորդ հանրապետության» գիշերային սլահուկը, բայց հեղինակը փութկոտությամբ հանգստացնում և իր ընթերցողներին, վոր այդ պահակն իրենց չի խանգարել, վորովհետև նրանք «լավ են հաղված» յեղել—

«Յեթև Գե՛ ՀԱԴՎԱԾ ԸԼԼԱՑԻՆՔ, — տառմ և հեղինակը, — ՊիՏԻ ՄՈՏԵՆԱՐ ՈՒ ԱՆՀԱՆԴՍԱՅՆԵՐ ՄԵԶ» :

Վորքան ցինիկ, նույնքան հատկանշական և այս նախադասությունը «Յերրորդ հանրապետության» — «դեմոկրատական» մրանսիայի համար, ուր «գեշ հաղված մարդիկ» (բանվորները) դիշերները «կանհանգստացվեն» փողոցներում, իսկ լավ հագնածները «Յերրորդ հանրապետության» հովանակորությամբ, ծավալում են պոռնկության փողոցային իրենց արկածները: Անկախ իր կամքեց, պարոն Շուշանյանը տվել է բուրժուական Յելլորպայի այդ կոնտրաստը:

Սակայն դառնանք նրա «սիրային» դիշերին, վորը վեցնալու վրա յեւ,—

«Գրկած (իր «եղին».) մանուկի մը պես, վոր իր մսի, կտամիմ տամ» :

«Սենյակիս լույսը կը բանամ ու պատուհանս կը փակեմ

զիշերվա դեմ: — ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԸ ... կըսե, — ՅԱՌՆ: — Կը փակեմ, կը փակեմ ... կըսեմ շտապ...» :

Յեզ փակվում են վարագույրները: «Դրաման» մերջանսւմ է: Սակայն բուրժուական պոռնողավիան ու ցինիզմը չկ վերջանում, նա շարունակվում և մյուս գրվածքներում:

«Հոգեսկս անովաղ ու սնունդի կարստ մարդոց կարելի յեւ ԲԱՆԱՍԵԴԾՈՒԹՅԱՆ ՏԵՂ ՊՈՌՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ, ամեն բան տալ» :

Այսպես և գրում պարոն Վաղդեն Շուշանյանը և հայապարիմ իր «հավատու հանդանակին», վոդի ի բոին աշխատում և բուրժուական ճահճի գարշելի բնակիչներին, «Հոգեպես անոթի» ու քայքայված դահնակցական, բուրժուական ընթերցողների քիմքին համապատասխան սնունդ տալ, գոհացնել նրանց սենուբաղձական փողոցային կրքերը: Յեկ հիրավի, «Հուսարեր»-ի մատենաշարի այս պոռնկատապում վիճվածքը հագեցված և ամենազաղբելի ցինիզմով ու բուրժուական աշխարհին վայել այլանդակություններով:

Յեկ Շուշանյանը լեցված իր հոգեպես անոթի ընթերցողներին բանասեղծության տեղ պառնկագրությունն առբաղան պարտականությամբ, շարունակում և ցինիզմի նողկալի հեղեղը: Յեկ «Հուսարեր»-ի խմբագիրների բարեհաջությունը՝ թույլտվությամբ: —

«ՏԱՐՈՒԻՆԱԿ ԱՐԱԳՈՒԹՅՅԱՄ, ԲԱԶՄԱԹԻՎ, ՄԱՐԴՈՅ ՅԵԿ, ԿԻՆԵՐՈՒ ՄԵՐԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ԻՐԱՐՈՒ ԿՅՎԵՑԱՆ ԱԱՎԱՐԻՆ ՄԵԶ» :

Յեզ «Հուսարեր»-ի խմբագիրների հեշտասեր հաճույքների միջից հեղինակը շարունակում և իր մսային լիրիկան: —

«Կուրծքիդ գունտերը, վոր ափերուս մեջ կուզեմ այս գիշեր սեղմել...» :

«Անընդեալ կուրծքդ կը բացվեր ու ծիծերուդ աղիսակարքյունը կը ցայսեր դուրս...» :

«Մեր ափերը հանգչեցան լուսածիծազ սակագներու վայր...» և այլն:

Յեկ «Հուսաբեր»-ի խմբագրության հետ, «Եղինակն առ շխողորմ տոնով, աղդարարում և... «վերահաս վտանգը»—

«Մեր ԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՀԻՆՆԱՆ, ԴԱԹ-ՆԱՆ ԿԵՆՍԱԾՈՒՐԿ, ԳՈՍ...»:

Իսկապես վոր «բանատեղծության տեղ՝ պոռնկոգրու-
թյուն»: Ճիշտ և ասում պարոն Շուշանյանը:

«Խանդավառ քարեկամության մը պօսիկ վեպը» զրված-
քում հեղինակը դարձյալ հանձնվում է իր «միրիքական խո-
հըլին»:

«— Յերե կարելի ըլլար հավիլ բոլոր աղջիկներուն,—
դրում ե Շուշանյանն իր պոռնողափեկ միրիկան,—զանոնք
ունենալ արևելյան դիվաններու խորը, ԹՐԹՌՈՒՆ ՅԵՎ
ՄԵՐԿ. ո՛ բերկուրդյուն տառապելու:

— Յեթե ԿԵՐԵԼԻ ԸԼԼԱՐ ՀՊԻԼ ԲՈԼՈՐ ԴՈՂԴՈԶ. ՈՒ
ՏԱ.Բ ԿՈՒՐԾՔԵՐՈՒՆ: ԲԱՂԵՂԻ ՄԱԳԼՅՈՒՆ ՊԱՏԱՀԻ ՃՆ-
ՐՈՒ ՊԵՍ ՓԱԹԹՎԱԿԻ ՄԵՐԿ ՈՒ ՍՍՐՄՌՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵ-
ՔՈՒ:

— Ո՛ տառաղաճի բերկուրդյուն, յես կվերադառնայի
գու կոպիտ սիրույդ...»:

(Թող ներեն ինձ ընթերցողները, վոր յես «ամբողջ հայ
հորիղոնը լուսավորող աստղերու» ստեղծագործած պոռ-
նողափեկ այս «գոհարների» մեջթերումներով, նրանց վըր-
գովմունքն ու զայրույթը շարժեմ, թող ներեն ինձ, վոր այդ
մեջթերումները կատարում եմ ավելի տառառությամբ: Դրա-
նով յես ցանկանում եմ, վոր ընթերցողները մի տվելորդ ան-
զամ ևս տեսնեն «կուլտուրական» այն բարքերը, վոր տիրում
ե հայ բուրժուազիայի արտասահմանյան ճահճում, վորի
դրական անդրադարձումն ե վ. Շուշանյանի այս գիրքը:
Միաժամանակ յես ցանկանում եմ, վոր ընթերցողները տես-
նեն, թե Խորհրդային Հայաստանի «կործանվող» զրականու-
թյանը ինչ «ՆՈՐ» դրականություն են հակադրում զաշնակ-
ները և վո՞րն ենրա «ՍՆՈՒՆԴՆ ՈՒ ԲՈՒՑՐԱ»):

Հեղինակն իր «միրիքական խոհելի» հետ մենակ չի
մնում, նա զարձալ գտնում է մի «եզի», վորը,—

«Վայրկյան մը լոեց ու նայեցավ աշխերուս, մինչ իմ
մտֆիս մեց, կերպեյին նոր տաղեր, ՇՆԱԿԱՆ ՈՒ ՊԱԳՇՈՏ:
ԱՐՈՒՆԵՐԸ ԿՊԱՐԵՑԻՆ, ԱՅՆԱՄԱՐԴԵՐԸ ԿԸ ԿՑՎԵՑԻՆ ԾՈՎԱ-
ՇՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ, ՅԵՂԵԳՆՈՒՏՆԵՐՈՒ ԽՈՐԸ ՈՒ ՄՐՃԱՐԱՆ-
ՆԵՐՈՒ ՄԵԶ. ԱՂՋԻԿՆԵՐ ՈՒ ՏՂԱՔ ԻՐԱՐՈՒ ԲԵՐԱՆ ԿԸ
ԽԱԾՆԵՑԻՆ:

— Յերե դուք, —իր «սիրո» առարկային ե զտոնում հեղի-
նակը, —ԱՐԱՍԱԶԵՐՆ ՈՒ ՇՈԱՅԻ ԸԼԱՅԻՔ, դուք վոր
ՔԱՂՅՐԱՄԱՐՄԻՐՄԻՆ ՈՒ ՀԱՐՈՒՏՍ ԿՈՆՔՈՎ ԱՂՋԻԿ ՄԸՆ ԵՔ,
յերե ըլլային բարի՝ ԳԹՈՒԹՅԱՄԲ ԶԵՐ ՄԱՐՄԻՆԸ ԿԸՆՇԱ-
ՑԵՑԻՔ ԲԱԶՄԱԹԻՎ ԱՐՈՒՆԵՐՈՒ ՈՒ...»:

Սակայն հեղինակը դարձյալ մտքերի ու խոհերի մեջ և
ընկնում և մտածում «պատկերագոր»

«ՅԵՍ ԿԵՐԵՎԱԿԱՅԵՄ ԶԱՅՆ ՄԵՐԿ, ԻՐ ԱՆԿՈՂՆԻՆ
ՎՐԱ, վոր անկյունը կապասի ահա իր մարմնի շերմուրդյան»:

«Ծունկերը գիրկ են ու խոռվիչ:

Անոր ծունկերը անշուշտ տաք են ու մարմինը բազ-
ցը...»:

Սակայն աղջիկը չե թողնում, վոր «արուն» մտասույ-
չի, նրան դիմելով «եզի իր անուշ այսուլը»—

— «Կուզեմ վոր զիս համբուրեմ, —ընալ քմահան, —մոտե-
նալով ինձի ու նայելով աշխերուս՝ իր նայվածքին ամրագ
քաղցրությամբ, —կուզեմ, վոր սիրո բաներ ըսե ինձի, ու
զեշ տղու մը պես սիրեք զիս, ԴԵՇ ՏՂՈՒ ՄԸ ՊԵՍ՝ ԴԵՇ
ԲԱՆԵՐ ԸՆԵՐ ԻՆՉԻ...

— Ահա աղջիկ մը, ահա յերկու բազուկներ, ահա յերկու
շրբեր...», — բացականչում և հեղինակը...

ԱՀԱ ցինիզմ: Ահա պառնողափիա: Ահա բութուական
սիֆիլիտիկ քնարի «միրիքական» հնչյունները: Ահա անկում,
նեխվածություն: Ճաշակեցեք նրա «սնունդի» ու «վայելիքը»:
Քիչ հետո, հեղինակը փողոցումն ե դարձյալ, ուր—

«Աղջիկներ կանցնեյին արագընքաց քայլերով... Անոնց
լեցուն ու բարակ կերպասներուն տակեն, բաղցրբեն պիհեց

Կուրծէրեն մինչև ծունկերը գրեք մերկ պատմեներեն, վերջապես իրենց ամբողջ մարմիններեն կը բարձրանար ՀԵՇՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ՍԻՐՈ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՈՒ ՄԵՆ ՀՐՅՎԵՐ ՄԾՅ Մնաց վոր այդ բռուր կիները կանցնեյին ԳՐԴԻՆԵԼՈՎ, ՇՈՒՐՁԻ ՄԱՐԴՈՅ ՍԵՒՌԱՅԻՆ ԱԽՈՐԺԱԿՆԵՐԸ: Անոնք ահազին մերկ մասեր ունեյին իրենց մարմիններու վրա: Վումանք կանցնեյին արժեցնելով իրենց մարմինին գեղեցկուրյուններու ։ ԿՈՒՐԾՔԵՐ ԿԱՅԻՆ, ՎՈՐ ԿՀԱՌԱՋԱՆԱՅԻՆ ՀԵՇՏԵՍ ՀԵՇՏՈՒԹՅԱՆ, ՈՒ ԿՈՆՔԵՐ, ՎՈՐ ԿՍՊԱՍԵՅԻՆ ԿԱՄԲԵՍ ՀԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԵՂՄԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՊՈՀՈՒՆ: Յերբեմն, յերբեմն կավեյին ՀԱՄԲՈՒԹՅԻ անորաշ ու ուրախ ԶԱՅՆԵՐ, սիրախոսեր, բառեր ու բացականչուրյուններ: (Ի՞նչ համերդ ե՞ղի...):

Անկման ու բուրժուական դարչելի այս ճախճախուսում հեղինակը աեօնում ե—

«Բանվորներ կանցնեյին ՅԵՇԱՆԿՈՒԹՅԱՄԲ...»:

Այսուղ նույնապես հեղինակը բուրժուական իր գերի մեջ ե, չի՞ վոր ըստ նրանց՝ բանվորները «յերջանիկ» կյանք են փայտելում, շահագործման, տանջանքի, խոշտանդման (բուրժուական «դրախտում»):

Պոռնոզրաֆիկ այդ համատարած տեքստում, իր աղբուժություն ու նկարագրություններից հետո, հեղինակը հանկարծ հանդիպում ե «աշխատավոր ու քաջ ընկերի մը»: Նա մ'որդի փոխադրվում է այդ աշխատավոր ընկերոջ տունը և մեծ վողերությամբ նայում—

«Քրիստոափրին (Քրիստոափոր Միքայելյան. Ա.) տքրության աշխերուն, վոր կը հածեյին պարագնաց նայվածքով մը ակնցներուն տակեն»: «Կը մտածեյի, թե ո՞վ գիտե բանի տուններու պատերեն այդ նայվածքը կը հածի այսպես տրտութեն ու քաղցրութեն»: Ապա դաշնակցական հեղինակն իսկույժ վերհիշում է իրենց հայուկների բերանով այնքան յերգ-

գում—
«Քրիստոափրին բող լան ու դուն
Թուախ խորեր սար ի Զեյթում...» յերզը:

Դրությունը չատ հետաքրքիր է ու դաշնակցական: Հեղինակն իր կուսակցության լավագույն «աղիստալրոպներից» մեկն է հանդիպանում, նա մեկն նկարագրում է «կիներու հարուստ կոնքերը» և ապա ընթերցողին անմիջապես փոխուղում դեպի դաշնակցական լիոներ Քրիստոափոր Միքայելյանի «տրտում աչքերն» ու «քաղցր նայվածքը»: Կատարելով իր «կուսակցական» պարտականությունը: Յեվ «կոնքերու», «կուրծքերու» ու «մերկ մարմիններու» այդ ցինիկ տեսարանում, հեղինակը հատկապես հանդիպում է իր «բանվոր» ընկերոջը, վորպեսզի նախ շեշտի վերջինիս դաշնակցական լինելու հանգամանքը, և Քրիստոափորի «քանի՛ տուներու պատերն նայելու» ժողովրդականությունը» (eis!): և ապա հիշեցնելու ընթերցողին, վոր այդ բաննորը «էժախտու ե» միայն նրա համար վոր, «տգեղ կիմ մը ունի, վոր ձախավեր շարծումներով կերպա ու կուգա սենյակին մեջ»:

Յեվ ապա իր խոհերի մեջ ներսուզվելով, պարոն Շուշանյանը «իմիւսառիայում» ե—

«ԿԸՍԵՄ, Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԵԼ ՏԳԵՂ, ԿԻՆԵՐՈՒ: ԿԸՍԵՄ, Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՅԵՐԵՎԱԿԱԿ ՅԵ ՀԱՅԱՍՏԱԿԱՎՈՐԴ ՄԸ, ՈՒՐ ԿԱՐԵԼԻ ԸԼԱԱ ՏԳԵՂ ԿԻՆԵՐՈՒ ՍԻՐՈ ՆՈՒՑՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԸՆԾԱՅԵԼ ՅԵԼ ՅԵՐԱՆԿՈՒԹՅԱՆ ՆՈՒՑՆ ԲԱԺԻՆԸ: ԿԱՐԵԼԻ ՅԵ...»:

Բուրժուական մորալը դրսերպլած է իր ամբողջ մերկությամբ և այլանդակությամբ: Կոմենտարիաները միանդամայն ավելորդ են:

Հեղինակը գեռ շատ մեծ տեղ է հատկացնում փարիզյան կիշերային արկածների «զեղարվեստական» «մաքուր» վերաբրուգրմանը: Դարձյալ նկարագրում է կավիները, ուր «ԱՊՐԻՎ ՄԸ, ԿԱԲՈՎ, ԿԸ ԻՆԾԵԼԵՐ ՏՈՒՈ ՄԸ ԲԵՐԱՆԸ», ուր մասնաւուն գիշերային աշխատանիքը վերջազրած ԲՈԶԻԿՆԵՐ կուգան նախանաշի ու զաղտուկ շահերին կը հայլիին, ուր հայշոյում են բարձրաձայն ու բերանարաց—«Մայրերին... բույրերին», «յես իրանց հոր հոգին...» և այլն:

Բայց մենք վերջացնենք այս մասը միայն չմոռանանք առելու, վոր «մայրերնին», «քույրերնին» հայույանքի ու «բերանը խածնելու» այս մոմենտին, հեղինակը դարձյալ մտքով վերադառնում է դաշնակցական գործունեյության «ղրվագի մը», իր մի խոսակցի մտքով՝ «վերապրելով» փետրլարյան ավանդյան և հիշելով կարճկանցի մի կռվողի «հերոսությունները»։ Հեղինակը, ինչպես տեսնում եք, դարձյալ իր դաշնակցական, կուսակցական պարտքն և կատարում։

Գ.

Պարոն Վաղգեն Շուշանյանի գերքը լոկ բուրժուական Յելրուպայի բարոյական նեխած ճահճի նկարագիրը չե, չնայած վոր մեծ մասամբ այդ բանին և նվիրված, վորպես «յերիտասարդ անող մարդու մը թղթերը»։ Գրքում ծավալով բավական մեծ տեղ է դրավել «Ծառեր ծլարձակ» դրվածքը, վորը նվիրված է— «ցիխին ու տառասլսեին մեջ հասալ նետած մեր գեղուլեց տղոց՝ վորոնց խորունկ աչքիրուն մեջ մեր ՅԵՂԻՆ ԱՐԺԱՆԱՎՈՐ, ԼՈՒՐՅ, ՀՊԱՐՏ ԲԱՅՑ ՎՈՒԱԿԱՆ ՑԱՎԸ ԱՐՔԱՅՑՈՐԵՆ ՊԵՏՔ Ե ՆՍՏԻ և վար դեռ իրենց նորակազմ, բայց ամուր ու բարի ուսերուն վրա իրենց ԱԶՆԻՎ ՄԵԽԵՆԵՐԸ (զոհաբերված Դաշնակցության արյունության գաղաքականության շնորհիվ, Ա.) ՊԵՏՔ Ե ԿՐԵՆ ԱՐԱՆՑ ՏԸՐԸՈՒՆՉԻ» և այլն... «Աև և հայ աչքերով այս սիրելի տղոց վոր ԶԵՆ ԿՔԻՐ ԱՅՍ ՄԵՇ ՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԲԵՇԱՆ ՏԱԿ (այս թանգարին վոսկերոտիքին) (պարզեված դաշնակցության կողմէց Ա.) ՎՈՐ ԿԵՐԹԱՆ ՀԱՅԱԶ ՈՒԺԵՎ ՈՒ ՊԻՄԿ ՔԱՅԵՐՈՎ...» և այլն, և այլն։

Ինչպես ընթերցողը տեսնում է այս ձոնը, վոչ այլ ինչ է, քան դաշնակցական, Փաշխստական «հավատո հանդանակը», հայրության գովքը, խմբապետական արյունության պարագաների միայն ասված ավելի ճոռում ու խճողված։ Այս ձոնով հեղինակը, վերտան ջատագովում, վեր և հանում Դաշնակցության արյունուշտ քաղաքականությունը, վորն իր հետեւց թողեց ավերակներ, մեռելներ ու «վոսկերոտիք»։ Փա-

82

ռաբանում, իղեալականացնում է «ցեխի ու տառապանքի» այդ արյունությալը, և «ցերի» «ցավի» «արքայական կրումով», կոչ անում դարձյալ լծվել դաշնակցության արյունի և ավերի քաղաքականության սայլին, վորի սանձերը կտսնում են անդրա-ֆրանսիական իմպերիալիզմի ձեռքնորում։

Սնցնելով «Ծառեր ծլարձակ» դրվածքին, հեղինակն իր հիշողությունները հետ կծկելով, նկարագրում է իրենց թափուր մնացած տունը, պարտեզը, իր մանկական ու պատանեկան անցյալը, հայրը, քույրը և այլն։ Յեվ «ծառերը վորոնի կարծանվեցան։ Յորենի արտերը, վորոնի մնացին առանց սերմացուի»։ Հեղինակն յերկար մտավրպատումներ է կատարում և զառահացալի խոսում ե իր մեռած քրոջ հետ։ Այս ձեռով յերեկի «ազդել» ուղերով ընթերցողների հույզերի վրա և դրանով նրանց զինվորագրելով դաշնակցության արյունությունները վործին։ Սակայն այս «նվիրական» գործի և «նվիրական մեռելներու» հետն ել հեղինակը մնում է նույն բուրժուական բարոյալքված, ցինիկը։ Իր հուշերում, նա յերկար մնալով մանկամարդ ու վաղամեսիկ քրոջ հետ, ըվոր իր մոր բարի կոնքերն ծնավ։ Նրա հետ ել սկսում է բաժանել բուրժուական ընկած այն վոճը, վորով նա խօսում է Փարիզի կաֆեներում։ Իր «պղափկ ու բարի» քրոջը, նրա հիշատակի առաջնուած, հետեւյան և ասում—

«Ուրիշ, ուրիշ ե մեծ քաղաքը։ Կըսեն աղջիկ մը կրնաքաղմոցի մը վրա դնել ՄԵՐԿ. ՄԵՐԿ։ Ու կրնաս գրկել զայն արբշիք քեվերուդ մեջ։ ՄԵՐԿ ՈՒ ՍՐԲՇԻՌ ԱՂՋԻԿ ՄԸ»։

«Ելնուեղ զյուղաքաղաքին պես չե։ Համբույրի սմիգամ տարրեր ե։ ԿՐՔՈՒ, ՎԱՅՐԵՆԻ։ Հան կը սեղմեն իր (աղջկա) ՄԵՐԿ ՄԱՐՄՄԻՆԸ կրտծքիդ ու բերմին վրա կը համբուրեն զայն, ամբողջ ծարավալը, յերիտասարդ մարմինիդ բովանդակ կրտսնվը...» և այլն։

Այսպես և պատմում Շուշանյան իր քրոջը և ապա շաբանակում ե—

«Պուն վոր պղոփիկ եյիր, փափուկ ու շատ գեղեցիկ,

83

դուն վոր ընկար տնտեսատի չար հողին վրա ինչպես անուշ աշխերով վիր մը կիյնա վորորդին գնդակեն:

«Դուն չար մեռելներես ամենն պատիկը... դուն աղջիկ մը սպիտակ հարսանեկան շուշաններու փաւնջի մը պես...»:

Պատկերը պարզ եւ և խայտանկար: Այնքա՞ն հատկանշական կազիտալիստական աշխարհի արվեստին: Բուրժուական գրական ճահճի այնքա՞ն բնորոշ ծիլերը: Մի կողմից հայդուկային, կործանարար անցյալի ջատագովանք ու իդեալականացում, հավլուկային նորանոր արկածախնդրությունների վողեկոչում, մյուս կողմից «պատիկ ու բարի» քրոջ յեղերական ժահը, նրա վողբալի հիշատակը և ապա սիֆիլտիկ «վիրիզմի» նվկոցները՝ «մերկ մարմիններու» և «կիրքբուժու» ժառին:

Ուրիշ ի՞նչ կարող եր անել բուրժուական նեխած ժահնում: Ուրիշ ի՞նչ բերք կարող եր տալ դաշնակցության գրական ամայի բոստանը: Ուրիշ ի՞նչ կարող եր հրատարակել ու չատագովել «Հուսարեր»-ը:

Պարոն Շուշանյանը սրանով իր հաշիվը չի փակում անցյալի հուշերի հետ: Այդ հուշերը գարձյալ նրա մտապատկերում վերակենդանանում են «խումբ մը կապույտ աշքերով մանկուհիներու» կերպարանքով և դարձյալ բորբոքում աղդայնական, դաշնակցական, կղերական անցյալի եները: Այդ «մանկուհիներից» յուրաքանչյուրն ասում եր անունը, մեկը՝ «սիրերգն» ե, մյուսը՝ «մահերգը», յերբորի չհաշտերգությունը» և այլն, ու ապա մեկն ասում ե—

«—Իսկ իմ անունս ե ՇԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆՑ ՅԵԿԵՂԵՑՎՈՒ:

«— ՄՐԲԱՋԱՆ ԲԱՌ, —կսեմ գունատ: —Իունի կը բուրես ու հնություն:

«— Ոհ ՀԱՅԻԵՆԻԲ, —կսե կամաց, —սուտ մի խոսիր, գիտեմ, գիտեմ կը սիրես զիս.

— Ո՛ իրավ ե, հնուց նվագ, որորե՛ զիս...» և այլն:

Այստեղ նույնական դաշնակցական հեղինակը, հարազատ մնալով իր կուսակցության դավանանքին, «գեղարվեստա-

կան» ավելի ժնուրբ» ձեւերով, ցանկանում ե ընթերցողներին ներարկել «Հայտատանյանց յեկեղեցվո շարականի», «իմնկի», «Հայրենիքի» դաշնակցական հուշերը, կազմակերպել և ոգտագործել այդ հուշերն իր կուսակցության Փաշխատական գործունեյության համար, վորը ոռու ծայրով ուղղված ե խորհուրդների յերկրի, սոցիալիզմի կառուցման, բանվոր դասակարգի գեմ:

Սակայն դարձյալ ծայրը են առնում ու շաբունակվում հեղինակի «Հայրենանվեր» հուշերը: Այդ հուշերի մեջ յօւրաքանչյուր հայդուկի ու խմբապետի մտապատկերին վայել—

«Հանկարծ Անի արքայանիստ քաղաքին բոլոր յեկեղեցիները արքացան իրենց քունեն և յես տեսա Աշուա յերկար քաղաքին պողպատ դեմքը: Քաղաքին նամբաներուն վրա սպավարտակիր զինվորներ կը համբուրվեյին հայ աղջիկներու հետ... Ու քահանա մը փազցին մեջ կը պատարացեր...»:

Բոլորովին պատահական չե, վոր պարոն Շուշանյանն իր կուսակցության սոցիալական պատվերով, յերազում և վերապրում և «Անի քաղաքի», «Աշուա Յերկաթի» և «Քահանայական պատարագների» անցյալը: Այդ բոլորն արվում ե ի նպաստ դաշնակցության հակահեղափոխական գործունեյության ներկա փուլի, այդ բոլորն ի սպաս և բերում մտքեր պատրաստելու, անդուռ-Փրանսիական իմպերիալիզմի զեկավարությամբ գետպի «Անի քաղաք», «Աշուա Յերկաթ թագավորը» և «արթնացող յեկեղեցիները» ճանապարհ բանալու համար: Այդ բոլորը «գեղարվեստական» վերապինումն ե դաշնակցական արյունոտ գործունեյության:

Յեվ վերջապես չե՞ վոր պարոնայք դաշնակները վորոշել են «Հայ ժողովրդին» ղեկավարել... դարձյալ արքաներով... «Աշուա Յերկաթի» փոխարեն առաջ քաշելով... կիրեւ Ռոմանով վողործելի խորվիլակին:

Ահա թե ինչու «հանկարծ Անի արքայանիստ քաղաքն»

արթնանում ե իր քունեն» և յերեսում ե «Աշոտ Յերկաթ թառ-
դավորի պողպատե դեմքը...»:

Սակայն ամփոփենք:

Ըսթերցողները բավական հանգամանորեն ծանոթացան
դաշնակցական «օժտվածներու, լնտրյալներու աղվոր փա-
ղանգի» մեկ ականավոր ներկայացուցչի հետ, տեսան «աս-
բողջ հայ յերկիմքը լուսավորող աստղի» փայլը, զդացին
դաշնակցական «նոր» դրականության «սնունդի ու վայել-
քը»: Նրանք ահասան պրոլետարական առողջ դրականությանը
հակառակող հայ Փաշիզմի դրական «Ճաղիկները», վորոնք
իրենց փոտու արմատներով յերերում են բուրժուական նե-
խած ճախճախուտում, սիֆիլիտիկ ու թոքախտավոր, վո-
րոնք տարածում են փտածության, մահի ու կործանման բա-
ցիլները:

Որո՞րին աճող ու զարգացող մեր պրոլետարական դրա-
կանությունը, մարքս-լենինյան քննադատությունը, մեր
պրոլետարական ընթերցողների տասնյակ հաղարակոր բա-
նակները, պետք ե այլելի վնասական պայքարի դուրս գան
դասակարգային հակառակորդի, հայկական Փաշիզմի գրա-
կան-գեղարվեստական, հականեղափախական ամեն վոտքն-
ագուրյան դեմ, լինեն «ԱՎԵԼԻ ԶԳԱՍՏ, ԱՎԵԼԻ ԱԶԱ-
ԼՈՒՐՁ», բայլշիկյան կուսակցության պողպատե դեկա-
նարուրյամբ, անհաջող պայքար ծավալելու սոցիալիստական
վիրխարի արշավի ֆրոնտում:

Իսկ զալով վաղգեն Շուշանյանի դրքին, մենք նրա մա-
սին գրած ներկա հոդվածը կվերջացնենք այն խոսքերով,
իորով հեղինակը վերջացրել է իր գիրքը—

«ԹԱՓԵՑԵՔ ԾԱՂԻԿՆԵՐ... ՄԵՌԵԼԱԿԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ...»:

ՑԱՆԿ

Եջ

- Գրականությունը վորպես ինտերվենցիայի գենք 5
- Հայկական Փաշիզմի սիմակոր ֆնարեգում 31
- Մոսիք Արշակ Զորանյանը գործի վրա 47
- Մեռելական ծաղիկներ 69

ՀՀ Ազգային գրադարան



NL0367674

62.871

ԳԻՂԵ 90 ԿՈՊ.

Արմ.

9-111072

Արտ Վան 454